

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 5
M A I
1928
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ



Մ Ա Մ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱՄԵԱԿԸ

Մոա՛յլ է հորիզոնը, մինչ կը պատրաստինք տօնել հայկական անկախութեան առաջին տասնամեակը:

Մոա՛յլ՝ թէ մեր հայրենիքի կացութեան և թէ միջազգային հեռանկարներու տեսակէտէն:

Բայց ունինք մէկ թանգադին միսթարութիւն: Տասր տարւան վերիվայրուներէն և անասելի տառապանքներէն յետոյ, հայ ժողովուրդը աւելի քան երբեք գիտակցօրէն և յամառօրէն փարած է ազատ հայրենիքի գաղափարին: Ինչ որ բնազդական և վերացական էր մինչև հիմա, գարձած է ջօշափելի: Միս ու ոսկր: Բանի հետապանք հայրենի հողէն, յուսախարութենէ յուսախարութիւն դրոյրով, այնքան ցանկալի, անդիմադրելի գարձան հայրենիքն ու ազատութիւնը:

Եօթը տարի փորձելով աշխարհի բոլոր հովերուն և ցամաքներուն երանութիւնն ու դառնութիւնը, հայ աշխատաւորն ու գիւղացին այսօր, ինքնարեքարս կը գտնեն մէկ ելք, — սեփական անկախ հայրենիք: Մինչև անգամ այն տարրերը, որ շատոնց ուժացած են, շնորհիւ իրենց գառակարգային ըմբռնումներուն և քաղքենի կենցաղին, անո՛նք ալ հայրենիք, սեփական հող կը փնտռեն:

Եւ, ինչո՞ւ ծածկել գծնակ իրականութիւնը, — երբ նոր էր ծագած արշալոյսը, երբ ունէինք հայրենիք մը, որ հեռագհեռէ ձև ու մարմին կառնէր իբրև պետութիւն. ընդունակ՝ տարածելու և գարգանայու, մարգէի այնքան հասուն չէին մտածեր, որքան այսօր: Այն ատեն տրամադրութիւններ կային շատ խանդավառ: Բայց ընդհանրապէս կը պակէին յստակ անսակէտներն ու հաստատուն համոզումները: Կը զգայինք, որ բան մը շահեր ենք. սակայն, որոշ գիտակցութիւն չունէինք անոր արժէքի մասին: Ոչ ալ վճառական ուզեցինք: Անորոշութիւնը, խաբխափումները, յաճախ, վարպէտը կը քաշէին մեր աչքերուն:

Սեփական հայրենիքի և ազատութեան առջին կարօտը զգացինք 1920 նոյեմբերին, զայն կորսնցնելէ յետոյ: Այլ մանաւանդ, 1921 փետրուար 18-ին, երբ վերստացանք ինչ որ կորսնցուցեր էինք: Կարճ տևեց յաղթանակը, բայց խոր հեռքեր ձգեց միաբերու մէջ:

Այդ օրէն առդին, քանի՞ քրփեցանք, հողերէն յետոյ գաշնազիրներն ալ կորսնցնելով, յարաճուն ուժգնութեամբ կը զարգանայ հայրենիքի կարօտը:

Մարդիկ այլ ևս չեն հարցնիր, — սահմանին ա՞յս կողմը թէ այն կողմը: Ու չեն վիճեր անսահման տարածութիւններու վրա, «Ան ծովէն մինչև ծով Միջերկրակալն»: Կարճ է և բացորոշ՝ օրւան պահանջը, — սեփական հայրենիք, բնական սահմաններով և ազատ կարգ ու սարքով: Ու տրամարանօրէն, ժողովուրդի բարեկամ է ա՛յն կազմակերպութիւնը, որ կիրականացնէ այդ պահանջը:

Տասր տարի է անցեր անկախութեան հրահրումէն ի վեր: Փոթորիկներ պայթեր են, և մէկ միլիոն ժողովուրդ կը մնայ չորս հովերուն խաղալիք:

Բայց և այնպէս, ունի՛նք հայրենիք մը: Տժգոյն, կծկած և հարկատու, սակայն, յուսաւոր կէտ մը, որուն կարելի չէ նայել առանց խանդադառանքի և հաւատքի: Երևակայեցէք մանուկ մը, որ կարմրուկէ բռնած է, և կը քաշէ անոր հետեանքները: Թերևս երկար ալ պիտի քաշէ: Ի՞նչպէս կրնանք ուրանալ զայն: Մանաւանդ, ի՞նչպէս կրնանք արհամարհել, երբ գիտենք, որ 1918 Մայիս 28-ին ծնած է ան. ձևափոխած, այլանդակւած, յաճախ անճանաչելի, բայց ա՛յն ինչ որ յոյս աշխարհ կեաւ տատը տարի առաջ, այնքան զմոնգակ երկունքէ մը յետոյ:

Ուրեմն, անարդարութիւն է ըսել, թէ ամէն ինչ կորսնցուցինք և ոչինչ շահեցանք: Այո՛, եղածը համապատասխան չէ մեր անհնարին զոհողութեան: Ոչ ալ մեր պահանջներուն յրացումը և մեր ուզածը: Եւ, սակայն, ջօշափելի, ամուր կորիզ մը, որ կրնայ աճիլ: Խաբխախ մը, որուն կրթնած կրնանք հասակ նետել և տարածել: Ըստ՞ի մը, վերջապէս, ուր մէկ միլիոն ժողովուրդ խմբած է, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով: Եւ անոր այսօրւան վարիչներն իսկ խորապէս կըմբռնեն— թէև հրապարակաւ չեն խոստովանիր— որ եթէ չըլլար 1918 Մայիս 28ը, ապակովաբար գոյութիւն չպիտի ունենար այն երկրամասը, որուն կիշխեն իբրև Հայաստան:

Արդարև, տասր տարի առաջւան դէպքերուն բուն իմաստը այն է որ, կարելի եղաւ ստեղծել ազդադրական Հայաստանը: Ուրիշ իօտքով, իրական հայոց, հայրենիք գարձնէլ աշխարհաբարկան բացատրութիւն մը, — Երևանի նահանգապետութիւնը:

* * *

Տասը տարւան փորձառութիւնը զորացնելով հայրենիքի զաղափարը, միեկնոյն ատեն շէշտեց անկախութեան պէտքը:

Այստեղ ալ, վերացական, վարդապետական ինչիք մը չէ որ կը յուզենք, այլ իրականութիւն մը: Մենք չենք ծածկեր, որ մինչև Մեծ Պատերազմը, Դաշնակցութիւնը իբրև անմիջական պահանջ դրած էր ինքնօրինութիւն, դաշնակցային դրութեամբ: Պատերազմին վերջավորումէն, ջարդերն ու տեղահանութիւնները, Արևելքի և մասնաւորապէս Կովկասի մէջ յառաջ եկած նոր դասաւորումները տրամաբանական անհրաժեշտութեամբ, մեքենաբար փնտթացուցին անկախութեան պահանջը: Անկախ Հայաստանը հաղիւ ձեւաւորւած, տապալեցաւ, և ահաւասիկ ուրիշ կարգ ու սարքով մը կը կառավարուի եօթը տարիէ ի վեր: — Իբրև ինքնավար երկրամաս մը, դաշնակցային դրութեամբ կապած ընդհանուր Կովկասի և յետոյ Ռուսաստանի հետ:

Եւ սակայն, ի՞նչ: Սկզբունքէն, վարդապետութենէն առաջ, կեանքն է, որ անողորմաբար կազդարարէ թէ խարուսիկ են այդ բոլոր ձևերը, և թէ անկախութիւնն է միակ ելքը:

Եթէ վարչաձևերը ստեղծւած են ժողովուրդներու բարիքին համար, անարդարութիւնները սահմանափակելու և առաւելագոյն ազատութիւն ու վայելք ստեղծելու համար, — փաստ է, որ եօթը տարւան դաշնակցային, ամուր պետութիւնը, իրականին մէջ՝ հարկատու երևանը շատ աւելի յուսախար ըրած է հայ ժողովուրդը, քան երկուբուկէս տարւան անկախ այլ անկազմակերպ Հայաստանը, որ իր վերջին խօսքը չէր ըսած տակաւին:

Քննեցէք մեր անմիջական պահանջները, թղթատեցէք եօթը տարւան պատմութիւնը, — ամենէն սովորական հարցէն՝ անցադիրներու վաւերացումէն մինչև ջրանցքի մը շինութիւնը կամ հանքի մը շահագործումը: Վերլուծեցէք այսօրւան Հայաստանի տկարութեան, ուժասպառութեան պատճառները: Եւ պիտի տեսնէք որ, ակադեմական ճառերը, անզօր են ժխտելու անկախ պետութեան անողորմ պահանջը, հայ ժողովուրդին համար, նոյնիսկ ի նպաստ անոր չկամ հարեաններուն:

* * *

Տասը տարի յետոյ, երբ այսքան հասունցեր է գաղափարը, ոչ թէ իբրև մարմաջ կամ

բաղձանք, այլ իբրև տարրական և բնական պահանջ — չենք խօսիր ինքնորոշման իրաւունքի մասին — կը զարմանանք, որ մարդիկ տակաւին կը վիճին Մայիս 28ի արժէքի մասին:

Եւ ի՞նչ ճանձարամտութեամբ: Որովհետև, տասը տարւան ընթացքին, էթէ կար քաղաքական — վարչական ձև մը որ չարաչար սնանկացաւ, այդ ալ Կովկասի ներկայ կարգաւորքն է:

Նոյնիսկ համայնավարական տեսակէտէն քննելով, կամ կարմիր դրօշը պահելով, կարելի է համարձակ պնդել թէ՛ Մոսկուան չէ կրցած լուծել ազգային հարցը, և չպիտի կրնայ լուծել, որքան ատեն որ չի ճանչնար իւրաքանչիւր ազգի և երկրի անկախութիւնը և հողային իրաւունքները: Իր այսօրւան համայնակուլ, կեդրոնածիփ և բռնապետական քաղաքականութիւնը՝ ձևերով միայն կը տարբերի ցարականէն, որուն ելքը յայտնի է:

Այսպէս ըլլալով կացութիւնը, որքան ալ մտայլ հեռանկարի մը առջև դանդինք այսօր, ինքուրթեամբ և նպարտութեամբ կողոնենք անկախութեան առաջին տասնամեակը:

Քիչ անգամ պատահած է, որ ժողովուրդ մը, այնքան ահեղ ցնցումներ կրելէ և հազիւ երկու տարի նախնական ազատութեան մը արշալոյսը վայելելէ յետոյ, այսքան հասուն և ամուր կառչած մնայ սեփական հայրենիքի և անկախութեան գաղափարին:

Եւ հազարէպէտ է, որ քաղաքական կուսակցութիւն մը, ներսէն և դուրսէն, բարեկամէն և թշնամիէն այնքան չարակամ և դաւադրական հարւածներու և կաշկանդումներու ենթարկուելէ յետոյ, յաջողած ըլլայ կենդանի պահել իր նշանախօսքերը, արմատացնել և ժողովրդականացնել գանտնք, ինչպէս կրցած է ընել շ. Յ. Դաշնակցութիւնը, դարձեալ սեփական հայրենիքի և անկախութեան պայքարին առթիւ:

Երբ հոգեկան այսպիսի կաղուրդիչ պատկերի մը առջև կը գտնուինք անկախութեան առաջին տասնամեակին առթիւ, այդ ո՞ր քաջն է, որ կը յաւակնի պատմութեան գիրկը նետել Մայիս 28ը, — ամբողջ սերունդի մը ուխտը:

Կամ ո՞րն է այն կախարդական ձեռքը, որ պիտի յաջողի վարագոյնը քաշել աչքերուն, և հայ ժողովուրդի սրտէն ու մտքէն արմատախիլ կտրել նետել սեփական հայրենիքի և անկախութեան գաղափարը...

Մ Ա Յ Ի Ս 28 - Ը

Շատ անշուք, շատ անպաճոյճ եղաւ մեր անկախութեան յայտարարումը: Ո՛չ մի արարողութիւն, ո՛չ մի փառակեղ ժողով ազգի ներկայացուցիչներ, և ո՛չ իսկ ճանդիաւոր նիստ Հայոց Ազգային Սորճողի: Մի պարզ բանաձև, թէ Ազգային Սորճուրդն ստանձնում է Հայկական դաւաճներէ գերագոյն իշխանութիւնը և մի հասարակ յայտարարութիւն այս մասին Թեֆլիսի լրագրներէ մէջ — ահա՛ բոլորը:

Ի՞նչ արձագանք գտաւ Հայաստանի անկախութեան յայտարարումը հայ ժողովրդի մէջ: Գրեթէ ոչ մի: Կորցրած իր երկրի լուսադոյն մասերը, հարածական անազորոյն թշնամուց, լքւած իր դաշնակիցներէց, որոնք ընդհանուր պատերազմի ամենատաղնապալից վայրկեանին ձգեցին նրան մենակ և անօղնական ռազմի դաշտում՝ այդ ժողովուրդը իր Փիլիքական գոյութիւնը պահպանելու հոգսով այնքան էր կլնւած, որ չնկատեց անգամ, թէ ի՛նչ կատարեց իր հետ Մայիս 28-ի գիշերը...

Տաք տարի է անցել այս պատմական օրից, և այժմ է հայ ժողովուրդը մի անսահման խանդաղատանքով և զորովով է լցւում ամէն անգամ նրա մասին մտածելիս:

Ի՞նչ ճանելու է սա: Մի՞թէ մեր ժողովրդի վիճակը ներկայիս աւելի՛ ծանր, աւելի՛ դառն է, քան 1918-ի Մայիսին: Կամ մի՞թէ անցած օրին երեւէկ տարու պատաւական տրամաբարութիւնն այնքա՛ն տիրական է հայ ժողովրդի մէջ, որ նրան արճաւիրքն ու «մահ տարածամն» էլ քաղցր են թւում հէնց միայն այն պատճառով, որ անցելին են պատկանում:

Ոչ և ոչ:

Հայ ժողովրդի կարօտի և խանդաղատանքի մէջ մի խորունկ պատճառ կայ, որ, դժբախտաբար, յաճախ վրիպում է կարճամիտ մարդկանց քաղաքական հայեցողութիւնից: Այդ պատճառն այն է, որ նա, վերջին տարւորներէ ընթացեալ, շատ պատեհութիւններ ունեցաւ զգալու և մտածելու, թէ ի՛նչ է նշանակում իր համար անկախ պետական կեանքը:

Հասկանալու համար ժողովրդական հոգեբանութիւնն այս ինչդրում՝ պէտք է աչիք առաջ բերել, թէ ի՛նչ էր ներկայացնում Հայաստանը իր անկախութեան արեւածագին և ի՛նչ դառաւ նա մինչև այն օրը, երբ Թիւրք-թուրքիկեան միացեալ դաւերով նրա ազատութեան արևը մայր մտաւ: Այս երկու վիճակների համեմատութիւնը անհրաժեշտ է աչիք առաջ ունենալ, որովհետև նրանից են սնունդ առնում մեր ժողովրդի զգացումներն ու մտածումները:

Հայոց Ազգային Սորճողի որոշումով անկախ յայտարարւած Հայաստանը, 1918-ի Մայիսին, հազիւ 11,000 քառ. վերստ տարածութիւն ունէր: Նրանից անջատւած էին ոչ միայն Կարսի շրջանը, Ախալքալաքը, Սուրմալուն, Շարուր-Նախիջևանը, Գանձակ — Ղարաբաղը և Երևան ու էջմիածին գաւառների մեծ

մասը, այլ և Հայկական Բորչալուն, Փամբակը, Ալեքսանդրապոլը, Գարապազեազի մեծ մասը և Զանգեզուրը: Նրա հաղորդակցութեան բոլոր ճանապարհները բռնւած էին Թիւրք-թաթարական ուժերով: Նա իսպառ անջատւած էր Ռուսաստանից և Պարսկաստանից, իսկ Վրաստանի հետ էլ միայն Ղազախի լեռներով կարող էր կապ պահպանել: Այս վիճակի մէջ Հայաստանը աւելի շուտ նման էր մի ընդարձակ բանտի, քան թէ մի անկախ երկրի:

Աւելի ևս գարհուրելի էր այդ օրերին Հայաստանում խճողւած հայութեան վիճակը: Մօտ 3-4 հարիւր հազարի հասնող, տեղացիներից և գաղթականներից բաղկացած մի խառնիճաղանճ ամբոխ էր ներկայացնում այս հայութիւնը, որի մէջ մերկութիւնը, քաղցը, հիւանդութիւնները և ամէն կարգի թշուառութիւնները աւերակ էին գործում:

Եւ սա դեռ բոլորը չէ: Այդ թշուառ բազմութեան զլխին կախւած էր մտում Թիւրքական ներխուժման մղձաւանջը: Երևանից ընդամենը եօթ վերստ հեռաւորութեան վրա կանգնած էին թշնամու պահակները, և նրանց թնդանօթները Նորազատիթի բլուրներից կախւած էին Հայաստանի մայրաքաղաքի վրա՝ պատրաստ ամէն բոպէ կրակ տեղալու նրա զլխին: Այդ թնդանօթների ազդանշանին էր սպասում երկրի ներսը դարանած թաթարք ազգաբնակչութիւնը գործի անցնելու հավար, որպէսզի Հայաստանի այս վերջին մնացորդն էլ աւերակների կոյտ դառնար, ինչպէս դարձել էր նրա մեծ մասը՝ Սարբերդից սկսած մինչև Ալեքսանդրապոլ... Բայց եթէ կողէ՞ք՝ Թիւրք-թաթարական եսթազանի կարիք էլ չկար, որպէսզի 1915-ին սկսւած կոտորածն ու աւերը իրենց սրբամաքանական վախճանին հասնէին. բաւական էր, որ թշնամին իր դարանակալ վիճակում մի տարի էլ սպասէր, որպէսզի Հայաստանի անկախութիւնից և գոյութիւնից պատմական յիշողութիւնն միայն մնար: Ժողովուրդն այդ ժամանակ իր հաջահատիկի վերջին մնացորդներն էր սպառում, որից յետոյ անխուսափելի սովն էր սպասում նրան:

Կարծէք թէ մի աւելի՛ անյոյս, աւելի՛ դժմուակ վիճակ չի կարելի երեւակայել ո՛րև է ժողովրդի համար: Բայց հէնց այս անխուսափեան խաւարից պէտք է բարձրանար հայկական երկնակամարի վրա այն շքեղ արևը, որը անմար է մնում հայ ժողովրդի հոգում, շնայած ամէն կարգի մութ ուժերի թշնամաքին:

1918-ի վերջերին Թիւրքերը յետ քաշեցին Անդրկովկասի սահմաններից և մեր անկախութեան գլխաւոր խոչնդոտը վերացաւ մէջտեղից: Սակայն, հրաշք էր հարկաւոր պետական կեանք ստեղծելու համար այն աւերից, որ Թիւրքերը թողել էին իրենց յետևից: Գրաււած շրջաններից, որոնք մէկը միւսի յետևից անցնում էին մեր ձեռքը՝ նախկին չէնութեան հետքն

խակ չունէին: Թիւրքերը տարել էին իրենց հետ ամէն ինչ որ կարող էին տանել: Տարել էին հացի և ուտեստի բոլոր պաշարները, անասունները, գործիքները, տները կահ-կարասին, դռները, փեղկերը, լուսամուտները ևպակիները: Մեծ էր նրանց ջարտ քանդը, յատկապէս հայուրբակցութեան միջոցների մէջ: Երկաթուղու կայարանները թալանւած էին մինչև վերջին կարասին՝ իսկ շատ տեղերում նաև հրկիզւած: Նրանց կողպուտից զերծ չէին մնացել նոյնիսկ ծանրաշարժ ջրհան մեքենաները, սիմամֆորները, հեռագրաթիւերը իսկ սահմանամերձ վայրերում, նաև հեռագրական սիւները: Հայաստանի երկաթուղիները վրա անշարժ մնացել էին 95 շոգեշարժ մեքենայ, որովհետև թիւրքերը քանդել և տարել էին նրանց արժեքուոր մասերը: Իսկ Կարս—Սարղամիշ զծի վրա, նրանք, ժամանակ չունենալով շոգեմեքենաները կողպակցելու՝ պարզապէս թողնուած էին կապել նրանց և աւերել: . . .

Բացի այս, թիւրքերը հեռանալով մեր երկրից՝ դաւադրութեան օճաղներ էին կազմակերպել նրա ամէն մի անկիւնում, որպէսզի նորաստեղծ հայկական պետութիւնը հնար չունենայ իր թևերը շարժելու: Դեռ թիւրքական զօրքերը չէին հեռացել Անդրկովկասի սահմաններից՝ երբ Հայաստանի թալանարկները շրջանները, թիւրք դեկավրներին առաջնորդութեամբ և Ազրբէյջանի նրկապետ օժանդակութեամբ, իրար յեռեկից Փլուս բարձրացրին՝ որպէսզի մեր պետութիւնը ներսից պայթցնեն: Ապստամբական կամ կիսապարտամբական վիճակի մէջ էին այդ ժամանակ Չօրի շրջանը, Բասաղզիսարը, Վեդերասարը, Չանգիրասարը, Կարազոյունլու, Աղբաբան, Չարիշատը ևն ևն: Կար ժամանակ, երբ այս ներքին թշնամին աւելի՛ ահաբերու էր թուում, քան թէ արտաքին թշնամին. որովհետև նա մեզ միայն ճակատից չէր հարւածում, այլ և թիւրքերը ու կողերից: Նրա հրուսակները ոչնչացնելու համար մեր սակաւաթիւ զօրքը պէտք է հազար կտոր լինէր, իսկ ստանց զօրքի հայ ժողովուրդը, իր հիւժուած, արնաքամ վիճակում, ընաւ չէր կարող դիմադրել տեղական թալանարկներին, որոնք պատերազմի դաշտում իրենց երիտասարդութիւնը չէին մաշել, նրկապէս անհամեմատ աւելի լաւ վիճակ ունէին և մինչև ատամները դիւսած էին թիւրքական և ուսական դէպքերով:

Ներքին թշնամու առաջ բերած տաղանապը ծանրանում էր և արտաքին պետութիւնների վերաբերմունքով դէպի մեր երիտասարդ Հանրապետութիւնը: Տաճկաստանի մասին չենք խօսում: Որոհորդային Ռուսաստանը իր հայ և ոչ-հայ զործակալները միջոցով խլորդային աշխատանքի էր կատարում մեր երկրի ներսում — կարծես հայ ժողովուրդի մերկ մարմինն բուլղիկեան կատուն շալակեն էր պակասում: Պարսկաստանը, թէև մեր հանդէպ բարեկամ, բայց շատ էր թոյլ և կլանած իր ներքին հոգեբով՝ մեզ իրական օգնութիւն հասցնելու համար: Վրաստանը, Լուսայ դէպքերի պատճառով գժտուած մեզ հետ, բազմապիսի դժբարութիւններ էր յարուցանում, մեր դէմ, մասնաւորապէս, արտաքին աշխարհի հետ տնտեսական յարաբերութիւններ հաստատելու գործում: Ազրբէյջանի մի կողմից մշտական կռիւների մէջ էր մեզ հետ Ղարաբաղում և Չանգեղուքում, միւս կողմից՝ ամէն

կարգի դաւեր էր ներթուս Հայաստանի թալանարկան շրջաններում և երբորդ կողմից՝ տնտեսական ճնման տակ էր պահում մեզ: Նրանից մի քանի ցիտներն նաւթ ստանալու համար՝ մենք ստիպւած էինք անհարաբը կոմբինդներին մէջ մտնել վրացիներէ հետ և վաշխառուական տոկոսներ վճարել միջազգային շահադէտներին: Վերջապէս, պահակից պետութիւնները, դեռ ևս կլանւած Գերմանիայի հետ հաշիւներ մաքրելու գործերով, ընդհանրապէս մատի արանքով էին նայում Անդրկովկասի և մասնաւորապէս Հայաստանի իրադարձութիւններին, իսկ յաճախ էլ երկդմի և ոչ-բարեկամական դիրք ըռնում մեր հանդէպ: Բիւսարկի և Թալէյրանի դիւսանաբոտական տաղանդն էր հարկաւոր այս բարդ միջազգային կացութեան մէջ մեր արտաքին քաղաքականութեան համար մի անվտանգ ուղի գտնելու համար: . . .

Սակայն, սակնամած քառու ներկայացնում էր մարդկային այն գորջ զանդւածը, որ հայ ժողովուրդ էր կոչւում և որը մեր պետական անկախութեան հիմնական առաջը պէտք է կազմէր: Մեծ մասամբ անօթեան, նրկապէս քաջաբլամ, Փիղիքապէս հիւժուած, բարոյապէս աղլատուած և այլատերուած՝ այս զանդւածի մէջ փոքրիկ տոկոս էին կազմում այն տարրերը, որոնք առտնի հոգսերից դուրս ժամանակ և տրամադրութիւն ունէին պետական շինարարութեամբ զբաղւելու: Այս սակաւթիւ տարրերն էլ իրարից անլրպետուած, շատ դէպքերում և իրար հետ գժտուած պանագան դիւզացիական, հայրենակցական և քաղաքական հաշիւներով՝ մէկ ընդհանուր յայտարարել չէին վերածւում՝ պետական կեանքի խարխիս դառնալու համար: Գողթկան և բնիկ, սաճկահայ և ուսահայ, երևանցի և վանցի, դարբաղցի և սասունցի, մշեցի և չորագեւացի ամենքն էլ իրենց ուրոյն ձգտումներով ու տրամադրութիւններով էին մօտենում պետական առաջադրութիւններին: Երևանցին կարծում էր, որ ինքը պէտք է աէր ու սնօրէն լինի «Երևանի Հանրապետութեան» զործերում, վանցին ամէն բանից առաջ «Վանայ քեպղք» երազներով էր հայ ու մաշ լինում, դարբաղցին պնդում էր, որ Հայաստանը ոտքի կանգնելու համար նախ պէտք է իր «ողնայարը» շակէ, այսինքն Ղարաբաղին տիրանայ, սասունցին թէև եռանդով մաքրում է երկիրը ներքին թշնամուց, բայց գոհ չէր, որ իրեն հեռացնում են Տաճկաստանի սահմաններից, ուսահայ բուրժուան անձկանօք սպասում էր այն օրուս, թէ էր պէտք է սպիտակ ցարը վերջ տար Ազրբէյջանի, Վրաստանի և Հայաստանի Հանրապետական գաւեշուններին՝ որպէսզի հին օրերի տնտեսագործութեան հնարաւորութիւնները բացւեն իր առաջ, մինչդեռ թիւրքահայ լեվանտիները «Ճնակամ տեսնել զիմ Կիլիկիա» էին երզում Եւրոպական պողոտաներում՝ «Երևանի Հանրապետութեան» արժէքը արտասահմանեան հայութեան աչքում կրտրելու մտտումով: . . .

Ահա այսպիսի տեւալներով ճամբայ ելաւ հայ ժողովուրդը դէպի անկախ պետական կեանքի հանգրուանը: Գերբնական ոյժ էր հարկաւոր այս քառուն ձև տալու, այս խառնափնթոր վիճակից պետութիւն կազմակերպելու համար:

Եւ այդ գերընկերական ուժը կարողացաւ յայտնարեւել ճայ ժողովուրդը: Կարողացաւ՝ որովհետեւ նրա Ֆեւրբրին ծանրացած շղթաներն ընկել էին, և նրա ստեղծագործական թուիչքների համար ազատ առաջադէպ էր բացել:

Ընդամենը երկու տարւայ ընթացքում — սկսած այն օրերից, երբ թիւրքական ետթաղանի մղձաւանջը հեռացաւ Հայաստանի վրայից, մինչև այն օրերը, երբ այդ մղձաւանջը Քորից ցրեց Կարսի ամբողջիւնների առաջ — մեր ազգային կեանքը կերպարանափոխեց, դարձաւ անճանաչելի ամէն տեսակէտից:

Հայ-թիւրքական նոր պատերազմի նախօրեակին Հայաստանի տարածութիւնն այլ ևս 11,000 քառ. վերստ չէր, այլ 3-5 անգամ աւելի: Այդ ժամանակ նրա սահմանների մէջ էին գտնուում ոչ միայն Աղեքսանդրապոլը, Ղարաբլիխան և Կարսը, որոնք թիւրքերի յետ բաշխելուց յետոյ՝ մերձարար կցուել էին Հայաստանին, այլ և Լօտին, Չանդեգուրը, Շարուրը և Նախիջևանի մեծ մասը, որոնց վրա մեր հանրապետութիւնը հաստատուել էր իր փաստական իշխանութիւնը զէնքի ուժով:

Այս նոր սահմաններով Հայաստանն այլ ևս արտաքին նախարհից կտրւած նախկին բանտը չէր ներկայացնում: Նրա ճանապարհները բացուել էին զէպի վրաստան և Պարսկաստան, և նա պատրաստութիւններ էր տեսնում ձորախի վրայով անկախ հաղորդակցութիւն հաստատուելու Ռուսաստանի և արեւմտեան երկրների հետ... Այս նպատակով մշակուած Կարս-Բաթում երկաթուղու ծրագիրը արդէն դործնական ընթացքի մէջ էր մտած:

Նոյն ժամանակամիջոցին Հայաստանի ներքին թշնամու դաւադրական օջաղները գրեթէ իսպառ քայքայուել էին, և նրա դիմադրական ուժը խորտակուել: Այլ ևս չկային Չօղը, Չանդիրասարը, Աղարբան, Կարադոյունլուն, զսպուել էին Չարիշատի ըմբոսանքը, անպայման անձնատուութեան հարկադրանքի տակ դուրել Նախիջևանի թուրքերը, չափազանց նեղացել էր այն թաթարական քօտին, որ բաժանուած էր Չանդեգուրը Ղարաբլիխից: Այլևս մեր զօրքը կարել չուէնէր վեղիրասարի և Սաղարախի առաջ շարաթներ և ամիսներ կորցնելու՝ նրանց ընդդիմութիւնը խորտակելու համար: Այդ զօրքի թիկունքն ու թևերը ապահովուած էին թաթարական Տրոսակներից, և նա կարող էր մի դրոշով հողին հաւասարեցնել զազրկջանեան վերդենը»...

Ներքին թշնամու այս ողնչացումը իսպառ այլափոխել էր Հայաստանի ազգազարկան պատկերը: Մթէ 1918-ի Մայիսին Քանդակունի կառավարութիւնը անյարմար էր նկատում Հայկական կոչուել, որովհետև երկրի ազգաբնակչութեան զգալի տոկոսը այլ ցեղերի էին պատկանում, այժմ այդ նկատումն այլ ևս անսուղի կարող էր համարուել, որովհետև Հայաստանը իսկական Հայաստան էր դարձել, և նրա կառավարութիւնը ամենայն իրական հայկական կարող էր կոչուել:

Մերկի ընդարձակմանը և հայացմանը զուգահեռաբար՝ բարձրացել էր այս ժամանակ և մեր Հանրապետութեան վարչիչ հարկան և օտար պետութիւնների աչքում: Վրաստանի համար նա այլևս նախկին

արհամարհելի քանակը չէր, որի զլիւի վրայով կարելի լինէր գործեր կարգադրել: Աղբէջմանը այլևս Հայաստանում ներքին դաւեր կազմակերպուել չէր կարող նրա ուշադրութիւնը հեռացնել Ղարաբաղից. նա պէտք է իր ամբողջ զօրական ուժը կենտրոնացնէր Ղարաբաղի դէմ՝ Հայաստանի առաջնադասումը արգելելու համար՝ թէկուզ և այս պատճառով միանշամայն անպաշտպան մնային նրա արևելեան սահմանները: Պարսկաստանը դրական փորձեր էր կատարում հայ պարսկական աւանդական բարեկամութեանը քաղաքական ձև տալու համար: Խորհրդային Ռուսաստանը անվերապահօրէն ճանաչելով Հայաստանի անկախութիւնը՝ պատրաստակամութիւն էր յայտնում նրա հետ դաշն կուելու, որ դեռ 1920թ. ամբանը ստորագրուած կը լինէր, եթէ հայ բոլշեւիկները դաւերը չէինէին: Վերջապէս արևմտեան պետութիւններն էլ իրենց խնամակալական հակումները զգալի կերպով մեղաժայրել էին: Նրանց աչքի առաջ, երէկւայ անուկը, որ չէր կարողանում սեփական ոտքերի վրա կանգնել՝ սկսել էր քայլել, և սա զգալիօրէն ազդում էր նրանց վերաբերմունքի վրա դէպի մեր Հանրապետութիւնը:

Սխտ աչքի ընկնող տեղ էին գրւում և այս օրերի վերաշինական աշխատանքները: 1919թ. դարձանից սկսած տնտեսագործական եռ ու գետի մի շրջան էր սկսուել հայ ժողովուրդի համար: Տարիներից ի վեր խոփի և մաճի երես շտեսած հողերը հերկուած և պետութեան օժանդակութեամբ ցանաւած էին: Բարձր մշակոյթի բոյսեր — բամբակ, ծխախոտ, վուշ — ոչ միայն իրենց տեղն էին բռնել հնօրեայ ցորենի և գարիի կողքին, այլ և տրամադրութիւն էին ցոյց տալիս յետ մղելու. նրանց: Արհեստագործութիւնը կենդանացել էր, առևտուրը յոյնպէս: Գենտրոնական և համայնական վարչութիւնների նախաձեռնութեամբ կամ օժանդակութեամբ հիմնուել էին մի շարք մանր գործարաններ — սղոցարան, կաշեգործարան, ջուր-հականոց և այլն:

Այս տնտեսական զարթոնքին համընթաց դնում էր և մեր աւերակների վերաշինութիւնը: Նորոգուած էին բնակելի տները, վերաշինուած խնուղիները, կարգի էին բերուած երկաթուղիները, կանոնաւորուած փոստ-հեռագրական հաղորդակցութիւնը, ընդարձակուած կարողական ցանցը, կազմակերպուած համայնական ինքնավարութիւնները, ձևաւորուած վարչական, դիւլտրական, դատաստանական և ելեմտական օրգանները ևն ևն:

Սովորաբար մարդ չէ նկատում իր շուրջը տեղի ունեցող աստիճանական փոփոխութիւնը. սակայն, հանրապետական կառավարութեան ժամանակ այս բարեփոխութիւնը կատարուած էր այնպիսի արագութեամբ, որ մարդ ամաչ-ամաչ և մինչև իսկ չարաթէ-չարաթ տեսնում էր երկրի վերածնունդը: Իսկ զբոյց կկած մարդկանց համար այս վերածնունդը աներևակայելի էր թւում: Հայաստանի նախկին իրենական ծանօթ օտար հերերը 1920թ. ամառը միաբերան վկայում էին, որ Հայկական Հանրապետութիւնը ամէն տեսակէտից անճանաչելի է դարձել:

Սակայն, ափնամիծ հրաշքը կատարուել էր հայ ժողովուրդի ներքին փոխարարութիւնների մէջ, որ օտարները տեսնել կամ զգալ չէին կարող:

1920-ին երկրի ներքը գտնուած գաղթականների մի զգալի մասը տեղաւարել էր թաթարներից լքած հողերի վրայ, իսկ միւս մասն էլ պատրաստուած էր տեղաւարելու: Մրանով գաղթականի և տեղացիի տարբերութիւնները սկսել էին մեղմանալ: Սխտ մեղմացել էր այդ ժամանակ նաև ինքնաբերական-հայ յորհրդումը՝ ցարական և սովետական բռնակալութեանց այդ սև պալարը մեր ազգային մարմնի վրա: Վերջապէս հայրենակցական տարբերութիւններն էլ սկսել էին տեղի տալ ընդհանուր ազգային դիտակցութեան առաջ: Ճիշտ է, 1920-ին էլ դարարացիներ շարունակուած էր մտածել «ողնայարի» մասին, ինչպէս և վանքեցիները որովհետեւ էր իր տառերը. բայց թէ մէկը և թէ միւրը բոլորովին այլ արժէք էին տալիս դրութեան ունեցող Հայաստանի Հանրապետութեանը, քան 1918-ին: Այժմ Հայկական Հանրապետութիւնը նրանց համար մի հարազատ մայր էր հանդիսանում, որ պէտք է թեկերը տարածէր դէպի իր սահմաններից դուրս գտնուող հայկական դաւաճները և չէ թէ կցւէր նրանցից մէկին կամ միւսին: Նոյնին էլ ազգային հայ բուրժուազիան սկսել էր այլ աչքով նայել մեր հանրապետութեանը քան մի տարի առաջ: Արդային ընդհանուր յաճոտակութիւնը նրա ապագային հողու մէջ էլ որոշ շեղումներն էր առաջ բերել դէպի պետութիւնը:

Այս Համապայմանը հողեփոխութեան ամենացայտուն արտադրանքները պէտք է համարել այն հարազատութեան գզացումը, որ հաստատուել էր այդ ժամանակ արտասահմանի հայութեան և Հայկական Հանրապետութեան միջև:

Առաջինը, բաղկացած մեծ մասամբ թիւրքահայերից՝ խանդաւառուած էր Հայաստանի Հանրապետութեան պոլիտեխնիկական և յառաջդիմութեամբ մինչ այն աստիճան, որ կարծէք մոռացել էր իր անձնական կեկերը, մտացել իր միացող օջախները և նրանց շուրջը անթաղ մնացած սիրելիների աճիւնները: Գերբնական մի գորութեամբ նրա սիրտն ու միտքը ձգւում էին դէպի Երևան, որը կրկնակէտ էր դարձել նրա ազգային ըզձերև և յոյսերը: Եւ սկսել էր դէպի այդ Երևանը մի սրտաշարժ չու, որ մենք ուխտագնացութիւն չենք անւանում լոկ այն պատճառով, որ ուխտաւորները այնտեղից վերադառնալու մասին չէին մտածում... Գայիս էին այս նորատեսակ ուխտաւորները ամէն տեղից — Հիւսիսային Կովկասից, Վրաստանից, Ակրբլանից, Պարսկաստանից, Տանկաստանից, Եւրոպայից և մինչև իսկ Հեռուսուր Ամերիկայից: Գալիս էին անօթեան գաղթականը և որբը ձիւ-ձիւ կեղծ հազուամեակով, գալիս էին կենսաթրթուր հայ արիւնքը իրենց սարգալարով, գալիս էին հմուտ գործաւորներն ու մասնագէտները, գալիս էին մտաւորականը և ունեւորը: Եւ ամենքի առաջ բաց էին Հայաստանի դռները: Ո՛ւմ մտքից կանցնէր այդ ժամանակ, թէ մայրը կարող է փակել տան դռները տարագրութիւնից վերադարձած գաւակների առաջ...

Հայաստանի այն ժամանակայ պայմաններում դիւրին չէր այս ժարդկանց համար թնակարան և ապրուստ հայթայթել, և նրանցից շատերը մտածում էին նեղուճիկների: Բայց ոչ մի նեղութիւն նրանց աչքին մեծ չէր թւում: Եւ չնդու մէկը, որ այդ նեղութիւնների երեսից նորէն օտարութեան ցուպն իր

մեռքն առնէր: Ո՛վ է գզում հացի դառնութիւնը, երբ այդ հացը տեփական յարկի տակ է ուտում...

Միւս կողմից՝ նազ գորովայնից չէր Հայաստանի կառավարութեան վերաբերմունքը դէպի տարադիր և օտարութեան մէջ մնացած հայութիւնը: Իր այնքան ծանր հոգսերի մէջ, ներքին և արտաքին թշնամիների դէմ մղուող իր յարատև կռիւների մէջ անգամ այդ կառավարութիւնը չէր դադարում նրանց մասին մտածելուց: Նա չէր կարող բոլորին մէկ անգամից Հայաստան փոխադրել և պատսպարել, բայց պէտք է նրանց մասին մտածէր, որովհետև անցնալուստ նրանք էին կրել համազգային պայքարի ամենամասն հարւածները, իսկ ապագայում էլ նրանք պէտք է լեցնէին և վերակենդանացնէին մայաքաղաք տաճկահայկական դաւաճները: Այս տրամադրութեամբ, նա դեռ 1919-ի գարնանը յատուկ պատգամներով իրենց ուղարկեց Միջազգային, Միւրիս, Ամերիկա և ուրիշ վայրեր, որ պէտքի վերահասու լինի տարագրած հայկական բեկորների վիճակին, հնարաւորութեան սահմաններում ամոքի նրանց ցուերը և ամրապնդի նրանց կապերը մայր հայրենիքի հետ:

Այս ամենը — Հայաստանի սահմանների ընդարձակումը, նրա Հայացումը, նրա քաղաքական կշիռի մեծացումը, նրա վերաշինութիւնը և վերջապէս հայ ժողովրդի ազգային վերածնունդը — կատարեց հայ ժողովրդի աչքի առաջ, և կատարեց միմիայն շնորհիւ Հայաստանի կարճատև անկախութեան: Եւ այս է պատճառը, որ նրա հոգում անկախութեան երազը չէ մարում, որան էլ ծանր լինի յիշողութիւնը այն դժնդակ օրերի, որոնց միջից ծնունդ առաւ այդ անկախութիւնը:

Չարաշուք հայ Սարգսիկազդիներից մէկը, չգիտենք ինչ տարթի, ասել է մի անգամ, թէ հայ ժողովուրդը ապրել 365 օրերից արև է մէկը կարող է ազգային տոն դարձնել, քացի Մայիս 28ից, որովհետև վերջինս հայոց նորագոյն պատմութեան ամենազոհ օրն է: Այսպէս գտնուով՝ ոչ մի քրիստոնեայ չպէտք է տօնի Գրիտոսոսի ծնունդը, որովհետև դրն հեռ կապուած է յիշողութիւնը այն ստորորին հայածնացների, որոնց երեսից փախստական Մարիամն ու Յովսէփը ինքնահեծի մտուրն էին ապաստանել՝ անասունների աղբի մէջ, չոր ծղոտի վրա ծնունդ տալու նոր կրօնի շնունդները... Բոլոր ծննդները կապուած են մայրական աճուրի տանջանքների հետ. քանի՞ք քանի՞ մարդիկ աշխարհ են գալիս վիրահատի կանախի տակ՝ իրենց ծնողի արևը խաւարեցնելով: Բայց մի՞թէ մենք նման պատմասններով Հրաժարուած ենք ամեն օրև է մեծ մարդու ծննդեան անբերկալութիւնը, եթէ նա երախտագրական զգայմունքներ է յարուցանում մեր մէջ:

Հայաստանի Հանրապետութեան արժէքը սիրուում է ոչ թէ է այն պայմաններով, որոնց մէջ նա կենսալի կուռեց, այլ այն արդիւնքով, որ նա աւելց հայ ժողովուրդին: Իսկ արդիւնքը ակներև է: Եթէ այսօր մեր յոյսերի փարոսը իսպառ չէ մարել, եթէ մենք դեռ ևս պարծենալ կարող ենք, որ թապառ հայրենասիրելի չենք — դա պարտական ենք ծանցանքի շարժով այն հուշագրութեանը, որ 1918-ի Մայիս 28-ին Հայաստանը անկախ յարաբարեց: Դրա շնորհիւ էր միայն, որ

թիւրքը, գէթ առժամայէս, կանգ առաւ Երևանի առաջ և մեր հայրենիքի վերջին մնացորդը հնարանորութիւն ստացաւ թէկուզ հողեվարքի վիճակում պահել իր գոյութիւնը մինչև որ նրա գլխին կախած մրրկաբեր ամպերը կը ցրէին:

Սակայն, Մայիս 28-ի նշանակութիւնը սրանով չէ սպառում: «Հարկաւոր է, որ մի ազգ երեք ժամ անկախ պետական կեանք ունենայ, որպէսզի անկախութեան զարգացումը այլևս երբեք չանհետանայ նրա հզօրաց» — ասել է մի գիտնական: Եթէ ճիշտ է այս

ընկերաբանական փորձը, ապա հասկանալի է, որ Մայիս 28-ի ակտը «վեց հարիւր տարւայ մեռելային» էլ կարող էր ոտքի կանգնեցնել: Որովհետև շնորհիւ այդ ակտի, հայ ժողովուրդը ճաշակեց անկախութեան վայելքը ոչ թէ ժամերով, այլ ամիսներով և տարիներով: Եւ ոչ միայն ճաշակեց, այլ և շօշափեց, տեսաւ, թէ անկախ պետական կեանքը ի՞նչ հրաշագործ ոյժ ունի մի ազգի համար...

Ա. ԶԱՄԱԼԵԱՆ

Ն Ա Յ Կ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Մ Ո Պ Ի Լ Է

1918 - ի սկզբին կովկասեան ռամզաճակատը — Վան—Ախլաթ, Խնուս—Երզնկա — մերկացած էր ռուսական ուժերէն, որոնք «դէպի տուն» վերադարձի նշանակուածէն վարակուած, հեռացել էին: Ամբողջ այդ տարածութիւնը կը պահէին հայկական զօրամասերը, կանոնաւոր և անկանոն: Ցաւով պիտի յիշատակել, որ ռուսական զօրքի ապրած հողբանութիւնը խոր անդրադարձում ունեցած էր հայ գինւորութեան վրա: Թիկուցի թաթարական իլլիստումներն աւելի ևս ոյժ կուտային անոնց ալ դէպի տուն վերադարձի պահանջին:

Հայ գինւորութեան շարքերուն մէջ տեղի շունեցան խոր կըսաղատութիւն և մօտ ապագայի անխուսափելի արհաւիրքի բնորոշում. արհաւիրք, որ թիւրքական աւինով ու ժանիքով սպառնալից պիտի հետեւէր կրնկակոխ: Ռուսական կրկնակ յեղաշրջումները, իրենց շղթայագերծ անսանձութեամբ, մթադնել էին բոլորին, աննշան բացառութեամբ անշուշտ: Հաշիւ չէին առնէր լքած ծով հարստութիւնները՝ ռազմական պիտոյքներ, անբաւ գինւորութեան, պարէն, հանդերձանք, դեղորայք, որոնք պիտի ծառայէին սոված թշնամուն նիւթապէս և բարոյապէս դօտեպնդելու, կշտանալու և մեր շէն տան մէջ մեզ խեղդելու...

Ընկերումն և հոգիներու թուլութիւնը պիտի մնան բնորոշ կնիք ժամանակի հայ մտաւորականութեան և գինւորութեան: Կշտամբանքի խօսքը, անշուշտ, պատմութեանն է, հիմնաւորելու առարկայական փաստերով: Բայց, իբրև ժամանակակից, պէտք է ասի այս, ընդհանուր ձևով այժմ ալ, որովհետև Սարգարսպանն ու Ղարաբաղիսան եկան մաքրելու նաև էն առաջ այդ արատը, ծանր տուրքի գնով...

Պահել ռուսերէ լքած ճակատը, տիրապետել դրաւեալ հողաժամերուն և տնտեսել ամբողջ ռազմական և պարէնի հարստութիւնները, — ահա կենսական և հրամայական պահանջ մը, որ կը ծանրանար հայկական

հատուածի, անոր պատասխանատու ղեկավար մարմիններու և կազմակերպութեանց ուսերուն: Հոգևորմբեան յեղաշրջումից յետոյ, միանգամայն ակնեքև ու պարզ էր ներկայացող գոյալիճակը, որուն պիտի դիմադրուէր կովկասեան հայ հատուածը՝ իր գիրկն ընդունած արևմտահայ բեկորներով...

Կը յիշեմ անմահ Մուրատի բուն կոչը, դեռ 1918 թւի յունւարի սկզբին, Երզնկայէն: Նա հերոսական ճիւղերով կը կուէր ներսի ջայթայտ ստեղծողներու դէմ. կը պահէր ճակատը, կը պահանջէր նոր գործիչներ, ուժեր և մասնագէտներ՝ ծաղելիք հրդեհը հեռու պահելու, կասեցնելու և կամ խիստ թանգ ու դանդաղ արժեցնելու:

Նոյնը Խնուսէն, ճշմարիտ հայ զննապետ Սամարցեի կողմէ, Վասպուրականէն՝ Կոստի Համբարձումեանէն...

Բայց... տեղը չէ երկարելու այս ցաւոտ կողմը մեր անարի կեցածքի:

Եւ 1918թ. փետրւարին փրթաւ փոթորիկը խելագար թափով: Վեհիպ փաշան, հրամանատար թիւրքական արևելեան ճակատի, սկսաւ արշաւանք փոքրաթիւ ուժերով, աննպատակ պայմաններու մէջ: Խախտելով գինադադարը, թիւրք հրամանատար յայտարարեց, թէ պիտի շարժւին առաջ, մինչև որ ռուսական գինւորներու հանդիպին: Վեհիպ փաշայի փոքրաթիւ ուժերն օրէ օր սուլաբացան, մեր թողած ռազմանիւթի և պարէնի մթնոցներով զօրացան, և արդէն մայիսի սկիզբը՝ յղկացած ու գոռոզ՝ կանգ առին Արիաւազ—Արաքս դետերու ափերին: Ու սուրբ կը շողար հայկական միջնաշխարհին, Արարատեան աշխարհի կրծքին:

Թշնամու սուրէն կաթիլը արիւնը, նոր ոճիներու արձագանգով, պիտի դար խեղդելու բոլորին անխտրի եթէ՛ դեռ շարունակէր այն թուլութիւնը, որ այդ օրերուն խաթարեց հայկական ռազմունակութիւնը: Այդ ոգին էր, որ թոյլ տուաւ խուճապահար լքելու Կարինն ու Կարսը և մեր թշնամուն՝ մտնել մեր տան դուռներէն ներս...

— Ձէ՛, թիւրբը չի յառաջանար Բրեստի դաշնազրով որոշած հողամասերից... Շատ ուղեղներ այդպէս կորոնճային:

Այս արտաբարակ հողերանութիւնն էր, որ դասացուց հայ զինուորականութեան առաքինութիւնները, կամաւորական կամ ժողովրդական վաշտերու անձնագրահոլթիւնը:

Այն գերագոյն կորովն ու եռանդը, որ կը թափէր Արամը՝ նախագայտով ահաւոր աղէտը մեր ժողովուրդին՝ կանցնէր ապարդիւն: Հողու ալքերով կը տեսնէր ու կը զգար մեր Արամը և շարաշար կը տանջէր, մտնցող աղէտին ահաւորութեան տուէլ:

Բայց, լըուան՝ ու յուսարկումն թիսւլ էին հողիներու մէջ, շղթայել բազուկները:



ԼՆԻՈՆ ԱՍՌԱՅԵԱՆ
(Բոլշևիկեան գոնիսից)

Երևան քաղաքը, այդ հեղափոխութեան կեդրոնը, իր կեանքի ամբողջ ելեղնէնէրով, փողոցներու, մայթերու վրա վխտացող գորշագլխատ երիտասարդութեամբ, կը մնայ ամօթանքի մարմնացում այդ «լինելու-չլինելու» օրերուն:

Պէտք էր, որ՝ թշնամու գնդակը պայթէր նա՛և Ախուրեանի ձախ ափին...

1918թ. մայիս 16ի Լեռիկոյան, Երևանի Արգային Պորբրդի շէնքի մէջ զուժարած էր արտակարգ ժողով մը, որուն կը մասնակցէին Ազգ.՝ Պորբրդը ամբողջ կազմով, Ապահովութեան Պորբրդի Երևանի Կոմիտէի ներկայացուցիչները, շրջաններէն եկած պատգամաւորներ, զինուորական սպայակոչներ կողմէ գօր. Սիւրիկեան և զնդ. Բաղդասարեան:

Գլխաւոր հարցերն էին՝ զինուորական կացութիւն, ինքնապաշտպանութիւն, ժողովրդի տեղահանութիւն և պարենաւորման մատակարարութիւն:

Երևանի Ազգ. Պորբրդի նախագահ պ. Մուսիսեանը ժողովը բանալով, յայտնեց այն լուրջ և հիմնաւոր կասկածները, որ թիւրբերը մտադիր են անցնելու Ախուրեանը: Շատեր խօսեցին լաւատեսօրէն: Ոմանք ամբաստանեցին կրկնապարտութիւն միայն: Վերջին խօսքը ասաց Արամը: Այդ օրւան յուշատեսարին մէջ՝ գրեւոր ժողովին ներկայի մը կողմէ՝ այսպէս են ամփոփւած անոր խօսքերը. —

— «Արամը, լրացնելով պ. Մուսիսեանի բաժանորդ, յայտնեց իր տեսակէտը, թէ ժողովուրդի անհասկա-

ցողութեան երեսն է, որ մենք ներկայիս կանգնած ենք այս սոսկալի նգնաժամին առաջ: Ազգ. հարիւրդի կոչեմունք՝ թէ շուտափոյթ գինւորագրեմն, նա շարձագանգեց բնաւ: Մենք մնացնիմ առանց գօրբի, իսկ թշնամին թալէ առ թալէ կը մխի մեր կարծիքն վրա: Ես չեմ հաւատար, որ թիւրբ բանակը կանգուն պիտի մնայ Ախուրեանի ափին... Ներկայիս մենք կը նստնիմք ծով ընկած մարդու, որ ամեն շիւղի ձեռք կը պարգէ... Մինչև հաստատուն երաշխիքներ տրուիլ և Բաթումի բանակցութեան վերջանալը, եթէ երբեք մեր նախտի վրա թիւրբեր տեսնցին յառաջխաղացումը, մենք անպայման պէտք է դիմադրեմք գեներալ, քննադատ, ոչ թէ ստրկօրէն անմատուր ըլլանք և կտորուիմք»:

Ժողովը լուսեմամբ ընդունեց Արամի այս առաջարկը... Գիշերայ այս պահին, յանկարծ լուր ստացուեցաւ, որ Երևանի զօրանցին մէջ խռովութիւն է ծաղկ: Պրամը մը զինուորներ կը յառաջանան բանտարկեալները արձակելու, կը պահանջեն իրենց յանձնել Ազգ. Պորբրդի անդամները և զինուորական զեկավարները:

Նիստը ընդհատեցաւ: Դրան անմիջապէս իր փոքրիկ զօրամասի հետ, գնդացիբով անցաւ ըմբոստութիւնը զսպելու: Բույզ առ բույզ կը սպասէր ընդհարման: Բարեբախտաբար մէկ ժամէն վերադարձաւ Դրան, հետք ընրելով պատասխանատու զինուորները, որոնք այդ շարժումին պարագլուխներն էին: Նոյն գիշերն իսկ գնդակահարեցան:

Հապիւ այս միջնակցը փակած էր և ժողովը իր ընկանտն ընթացքին մէջ պիտի մտնէր, երբ Թիֆլիսէն ստացած հետադիր կը հաղորդէր՝ թէ թիւրբերը Ձաղուր կայարանը զրաւելով, միտամանակ յարձակել են Արեքսանդրապոլի վրա, որու վիճակը անստոյգ է...



Ա. ՄՆԻՔ-ՄՈՒՍԵԱՆ
(Սպանած Գաղթեմ)

Ա՛լ աւելորդ կը դանձ խօսել ժողովի շարունակութեան մասին... Այն գլխաւոր մտահոգութիւնը, որու համար զուժարած էր ժողովը և ուր շատերը լաւատեսութեամբ կը նայէին մօտ ապագային, արդէն փաստ էր: Թիւրբերը յառաջ կը խաղային զէպի Երևան, մեր վերջին կայանը:

Մայիս 12-ին սկսած էր Վեհիպ փաշայի գաւառի բարձակողականը:

Պէտք էր տեղի ունենար, կարծես, և ույս քայլն էլ, որ սթափեցնէր Արարատեան աշխարհի ժողովուրդը՝ եր վրին Քափուած Սուրմալուի ու Վանահդի գաղթական զանգաճներով, Բարդողից եկած թիւրքական զորասինը ոմբակոծել էր Մարզարայի կամուրջը, կեդրոնը՝ Ալեքսանդրապոլի երկաթուղազծով կը մօտենար Մարզարապատին ու Շորագետի գալուտով կը մագլցէր, Արագածի հիւսիսային կողերով, Բաշապարան, իսկ ձախը՝ Ջալուրով միւսէլ էր դէպի Ղարաբեղիսէի հովիտը:

Թիւրքերի ռազմական յառակազիւը հետեւեալն էր. — Իրենց ձախ թևով քանզև Գանձակի ճանապարհը՝ հասնելու Բագու, առ թևի զորասինը պիտի կտրէր Մաղկաձորով՝ Երևան—Նոր-Բայազէտ խնուղին մինչև Ելեւոպկա. իսկ Մարզարապատի զորամասերն էլ Սուրմալուէն առաջացող ուժերու հետ պիտի բռնէին էջմիածին, Ջանդիրասար գիծը, պաշարելով Երևանը:



ԳՆԻ. ՄԱԶՄԱՆՆԱՆ

(Սպանուած հայ-քիլիպակալ պատերազմում)

Երևանի հայկական ճակատը կը բռնէր.— Բաշապարան՝ Դրօ, Մարզարապատ՝ զօր. Փիրուճեան, Ղամարու՝ զնդ. Տիգրան Բաղդասարեան: Ամբողջ ճակատի հրամանատար՝ զօր. Միլիկեան: Ղարաբեղիսէի ուղղութեամբ սպարապետ հայկական սամբըլ ուժերուն՝ զօր. Նազարբէյեան:

Իսկ կեդրոնում կը մնար Արամը՝ իրեն թևեր սնունալով Երևանի Ալզ. Խորհուրդը և Արևմտահայ Ապահով. Խորհրդի Երևանի կոմիտէն:

Մի պատիւը այդ ճակատազբաղան օրերէն:

* * *

Երևանի արդէն ծանր տագնապի մէջ էր... Թուլամորթ ջաղաքը այս անգամ արդէն կը զգար ահեղ օրհասը, որու ալիքները ճունչող սայլերու ժխորի հետ, սարսափահար զաղթականներու կարուաններով անքեցնող թափօր մը կը դձէին էջմիածին—Երևան—Քանաքեռ խճուղիով—դէպի Կոտայք ու Նոր-Բայազէտ: Ամէն մէկ ժամ, ամէն մէկ նոր օր ջաղաքի վրա կը տարածէր ահաւոր հետանկար, — ձգել ջաղաքն ու հեռանալ... Բայց ո՛ր... Ընդհատելով ջաղաքացիներու մեկնումը:

Այդ օրերուն պէտք էր տեսնել մեր թիկնոց Արա-

մը, միակ շարժիչ և կենդանի ոյժը՝ յուսահատ այդ կեդրոնին մէջ. նա կը մղէր, ընթացք կուտար, թէ՛ ջաղաքի ներքին ինքնապաշտպանութեան, թէ՛ ճակատների կամուրներու առաջմահ, մէկ խօսքով, բոլոր կենսական հարցերն ու խնդիրները նրա դատողութեան և կամքի բովէն կանցնէին: Տիլիբապէս, անոր ներկայութեան մէջ, կը տեսնէիր յոյսի և անահ-կրնկալ յաղթանակներու արշալոյսը:

Այդ մարդը, յամառ վճռակառութեամբ, կանդուն մնաց Երևանի մէջ, շարտադրաբար ո՛րև է ընկրկում: Որքա՞ն սողուն լեզուներ կը տարածէին անոր զաղտնի փախուտի առասպելներ, ամէն դիշեր և այլանդակ ձևերով:

Նա կար և կը մնար... Եւ ամէն առաւօտ, լոյսէն առաջ, զործի դուրսն էր, աղբիւր՝ շարժիչ ուժերու, խարազանող զորը հոգիներու:

Այդպիսի մէկ առաւօտ էր մայիս 20-ի լուսաբացը, երբ Արամի կողմէն, Ապահով. Խորհրդի մեր զորանեակը մտառ, լրատու մը, որ ստիպողաբար կը հրաւիրէր զիս, իրբև նոյն կոմիտէի նախագահի, գնալ Արամի մօտ՝):

Անմիջապէս շտապեցի իր մօտ՝ Ալզ. Խորհրդի իր առանձնասենեակը՝ ենթադրելով, որ կացութեան մասին կարգադրութիւններ ունի հարցողէլէք:

Գրասենեակի դրսի դրան առաջ, սովորականի պէս, նստած էր Ս. Օհանջանեանը, որ դիւրի շարժումով մը ցոյց տաւ, որ անցնեմ ներս:

Իմ հարցին, թէ ի՞նչ կայ, նա պատասխանեց մի յուսաբեկ արտայայտութեամբ. «Ներս գնա, քեզ է սպասում, ուշացա՛ր»:

Ներս մտնելով՝ տեսայ մեր Արամը՝ յաղթ մարմինը կորացած, արժուկները կրթնած աշխատանքի գրասեղանի վրա, գանդրահանք այնխառն գլուխը սեղմած երկու ձեռքերու մէջ:

Երբեք այդպէս չէի տեսել նրան այդ օրերին...

— Լսի՛ր, Հայկակ, կացութիւնը ահաւոր է: Թիւրք յառաջապահները Մարզարապատի տակն են, հետախոյզները ընդհարումը սկսած է. եթէ անյաջող անցնի, ապա վաղը դիշեր կամ միւս օրը նրանք կը լինեն էջմիածին... և գուցէ Երևան...

Ասաց և մի քանի բոպէ լռեց:

Սա քար կտրած կը լսէի: Նա շարունակեց.

— Առանձնապէս վտանգ կը սպառնայ ձեզ, թիւրք-ճահայերիւք, իսկ վանի մեր բոլոր տղաներին, ունէ ձեռով, ունէ փրկութիւն չեմ սպասեր: Կը խնդրեմ ձեզ, փրկէ՛ք ձեր կենդանի ուժերը, ահա պատրաստել եմ հրահանգները, կը ստանաք ձեր պահեստի բոլոր զէնքերը՝ ռազմամթերքով, Բանազետից էլ երկու թնդառօթներ և կը հեռանաք:

— Ո՛րք, իսկ մեր զօրամասն՞բը... Ընդհատելով ջաղաքացիներու մեկնումը:

— Լսի՛ր, և մի ջլջայնանար. դուք պիտի փրկէ՛ք ձեզ, անհրաժեշտ կը դանձմ, որ ձեք ընկերներով և գործող ուժերով մեկնէ՛ք Երևանից հեռու: Այդ կը պահանջէ և ձեք շահը և մեր կայսրութիւնը: Կանցնէ՛ք

*) Արամը, 1918թ. յունւարից, լիազօր էր Քէ՛թի թիֆլիսի Ազգ. հորհրդի և Քէ՛թի Արևմտահայ Ապահով. հորհրդի, որու կեդրամն էր թիֆլիս: Միակ մարդը, որ երկու հառաւաններու վրա էլ հեղինակութիւն ունէր:

ուղիղ նոր-Քայսաթէս. ինձ կը մնայ կարգադրել, որ ձեզ հասնին ձեր գործասերը»):

— Իսկ դու ի՞նչ պիտի անես:

— Ընչ... Ես պիտի մնամ Երևան: Ես դուրս չեմ գար. այս ժողովուրդի փրկութիւնը զո՞հ կը պահանջէ, և ես պիտի մնամ Երևան. եթէ ապրեցի ձեզ հետ Վանը, թող վերջս լինի այստեղ:

Չգիտեմ ինչեր կը փոթորկէին այդ վայրկեանին անոր աշխարհն ճակատի տակ, բայց ես ըստպէս յիշեցի Կորին, Իշխանը և նահատակ Վասմանը, անոր երկու գործակիցները և Վանի ծովափերէն մինչև Արարատ փռած միւս մեռելները... Գուցէ կը նախանձեր անոնց մահերուն: Գուցէ դեղեցիկ կը դռնէր և անայլով որոշէր էր առանց մեզ զոհելու Երևանի մէջ:

— Գիտար թէ մերոնք համաձայնին ընտանիքները թողնել և հեռանալ, և եթէ դու վճռել ես դուրս չգալ, մենք անհանդուրժելի կը համարենք հեռանալ:

— Ես ձեզ կառաջարկեմ հաշուել փոքրագոյն չարիքէ հետ և փրկել ձեր երիտասարդութիւնը...

Եւ երկարեց ինձ սեղանի վրայի երկու գրութիւնները:

— Լա՛ւ, ես յայտնեցի իմ կարծիքը, մեր ընկերներին կը յայտնեմ, անոնք թող որոշեն իրենց անկողը: Անշուշտ կը յայտնեն զեզ:

— Բեզ լաւ եմ ճանաչում, ասաց վերաւորական մտքով, միայն մի՛ խտաներ. ուշ է, շտապեցէ՛ք. ասաց և դուրսը նորէն առաւ երկու ամբերու մէջ:

Այդ րոպէին սեղանի վրայի հեռախօսը զանգահարեց: Ես բարեւոյց համարեցի հեռանալ, ասանց ցտտութիւն ասկու: Երբ դռնից դուրս պիտի ելնի, նորեց շեշտեց.

— Ձեր ուժերը փրկելու մասին միայն մտածեցէ՛ք, ինձ հետ մի կապէ՛ք:

Ես շարունակեցի ճամբան, վերջին բառերը միշտ մեխած մնալով մտքիս մէջ. «Ձեր ուժերը փրկեցէ՛ք, ինձ հետ մի կապէ՛ք»:

— Ո՛չ, այդ անկարելի է, կը լինէր մեքենական պատասխանս բնագործին...

Մեր մարմին նիստին յայտնեցի Արամի ամբողջ ասածները, և անմիջապէս որոշեցայ. — ա) Ձեռք հեռանար Երևանէն, Եթէ պէտք չեկալանայ, պիտի կուինք քաղաքի փողոցներու մէջ անգամ: Բ) Անմիջապէս գննել տակ առնել բոլոր մնացեալ մեր ուժերը:

*) 1918թ. վասպուրականի տեղական ուժերը կը գործէին Ռոսամ և Աւնիս: Կոնիսթնուտ հետահաճով Աւնիսի գործաւոր անցաւ Իգդիր՝ Տիգ. Բաղդասարեանի ղեկավարութեամբ, իսկ միւսը մահամեջ Գարակատան, Սպիւստի: Վանի գործաւոր մեծ մեծաւ տարաւ Իգդիրի մակառի կոնիսթնուտ Օրգովի մէջ տալով 120ից աւելի հասրնտիր երիտասարդ գահեր. ապա Դաշրուտուսի մօտ կուցանմ Քիւրդերու դէմ: Սուրմալուն թողնելուց յետոյ, Սիլիկեանի կարգադրութեամբ, անցան Վանարլուի մակառ: Սարգսարապատի կոնիսթնուտ այս գործաւոր երկու վաշտերը կը գտնուէին Թալիսի շրջանը:

գ) Անմիջապէս տրամադրուել ղինւորական իշխանութեան, ցանկութիւն յայտնելով՝ միանալ վասպուրականի ղինիս՝ ճակատում: դ) Որոշումները յայտնել Արամին:

Անցնելով գործնական աշխատանքի, մայիս 21-ին պատրաստեցան վեց վաշտեր՝ 900 հոգով:

Տրամադրութիւնը ղերբնական յեղաշրջումով մը մէկէն փոխեցաւ Երևանի մէջ: Յուսակաուոր քաղաքը ուղարկուեց կենտրոն մէջ մտաւ... Մէկ նշանաբան կիշխէր ամենուրեք.

— Դէպի՛ Սարգսարապատ, ամէն ինչ ճակատի համար:

Ոգևորիչ զեկոյցներ սկսան հասնել շրջաններէց, էջմիածինն իր զիւղերով, Աշտարակ—Օշական իր շրջաններով կը խուժէին դէպի Սարգսարապատ... Ժողովուրդը, թողած զարնան աշխատանքը, օժանդակ խումբերով կը դիմէր դէպի ճակատ. պարէն, մթերք, փամփաշտ, դիւղացիութեան կողմէ, շալակաւորներով, բեռնասայերով ու անասուններով հուղեկցէին իրենց վաշտերուն:

Ո՞վ կարող է մոռանալ Կոտայքէն իջնող հայ զիւղացիներու կամաւորական խումբը՝ առաջնորդութեամբ Թաղաքիւղի Ջաբար քահանայի: Տրեխաւոր զիւղացիները ղինւած իրենց սեփական զենքերով, 10 օրւայ պաշարը սայլերին բարձած՝ մտան Երևան և անցան Սարգսարապատ:

Ի՞նչ ջերմ և սրտազին ճառեր և ողջոյններ տեղի ունեցան Արգ. Խորհրդի շնչի առաջ, հայ զեղուկի կամաւոր ղինւորութեան այդ շարժումին առթիւ:



Մ. ԳԻԻԼՆԱՅԱՐԵԱՆ
(Սպանում Փետրուար 18-ի կոնիսթնուտ)

Հապա՞ Հայաստանի երկաթուղին... Կայարանը՝ ռուսական նահանջող աւերներէ յետոյ՝ կրկին եւ ու գեռի մէջ կը մտնէր: Եոզլարժներին սուրիշները կը շաչէին, գնացները շողայինը ղինւորական փոխազրութիւններ կը կատարէին դէպի ուղղմանակատ:

Մէնք պէ՛տք է յաղթենք... Ահա վճռական որոշումը օր անասան կամք և կենդանի գործ բարձած՝ կը մշէր բուրբին դէպի կուր զաշտ:

Համաժողովրդական շարժումը, իր կենտրոնի և ինչի գոհարներութեամբ, զսպանակը եղաւ հայ ղինւորութեան մղչի գրոհին:

Այո՛, հոգեբանօրէն պատրաստ էին ամենքը... Յաղթանակը իր հիմքի մէջ ապահոված էր:

Եւ հայ ժողովուրդը, հայ զօրքը և զինուորաբիւնը՝ իրենց գլուխն ունենալով Արամ—Դրօ—Սիլիկեան—Նազարրէզեանին, ստեղծեցին հայկական դիւցազնամարտի Թերմոպլէն, մայիս 22, 23, 24 Սարգաբապատի տակ, իսկ աւելի անազորոյն և ահեղ մարտ մղեցաւ մայիս 25, 26, 27 Ղարաքիլիսէի ձորերուն մէջ, ուր երկուստեք մեծ նախճիրներ գործելով ինկան պարտասած:

Օրը օրին, ժամ առ ժամ հայկական զինուորական զեկոյնները կաւետէին յաղթանակները մեր զազազած թշնամու դէմ...

Սարղարապատի ու Բաշապարանի թեկերը միացած՝ իրենց յաղթական թափի ախիբը հասցուցին Ալեքսանդրապոլի դռներու առաջ: Զօր Սիլիկեանի վերջին կոշի մարմնացումն էր այն հաւատի, թէ մի վերջին յարձակողական գրոհ, և Ալեքսանդրապոլը հայկական քանակի ձեռքն է...

Բայց ճակատարի մի դառն հեղանջով, թիւրքական ճակատի սպայակոյտը կը հաղորդէր յունիս Ծին մեր ճակատի հրամանատարութեան, թէ Բաթումի մէջ յունիս ֆին հաշտութիւն կայացած է հայ ներկայացուցիչների հետ և ճանչցած է թիւրքիոյ կողմից Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը:

Այսպէս տեղի ունեցաւ ժողովուրդին և հայկական ազատամարտին վերջին արարք, հայկական Թերմոպլէն և անոր անմիջական արդիւնք՝ Մայիս 28-յունիս 4 յայտարարութիւնը:

Իսկ Վասպուրականի Արամը կը մնայ ողին և կեզրոնը Հայաստանի անկախութեան, թէ՛ Վան և թէ՛ Երևան:

ՀԱՅՄԱԿ ԿՈՍՏՈՅԵԱՆ

Ա Ն Կ Ա Ս Ո Ւ Թ Ե Ա Ն Ս Ե Ր Ո Ւ Ն Դ Ը

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան պատմական փաստը և անոր յաջորդող քաղաքական անցքերը իրենց վճռական ազդեցութիւնն ունեցած հայ քաղաքական մտքի հիմնական ձևաւորման վրա: Այդպիսի-քաղաքական ըմբռումները վերագնահատութեան ենթարկելով, բնականօրէն այդ նպատակներուն ուղղած միջոցներն ալ փոխուցան:

Դարաւոր անցնալի վերապրումներու և երազային տենչանքներու հորիզոնը կը փակէր, ու համաշխարհային մեծ դէպքերու յորձանուտէն Նոր Հայաստանը հասակ կը նետէր: Նոր կեանքը իր հետ կը բերէր հայ ժողովուրդի հոգեկան և Ֆիզիքական վերածնունդի շրջան մը: Ու այսպիսով դարաւոր հորիզոններու և անորոշ երացներու փոխարէն, հայ ժողովուրդը իր բազուկներով կընդդրդէր անկախութեան արշալոյսը, որ կը բացէր արարատեան հորիզոնին վրա:

Եթէ, սակէ քառասուն տարի առաջ, Հայոց ազատագրութեան շարժման առաջին զեկավարները ընդամացած հայ ժողովուրդը շարժելու համար ստիպւած էին մեր հնազոյն պատմութեան զիմեյ, կամ նորագոյն ըլլալով, դաւիթբէզեան շարժման անթելած կայծերը որոնել, ներկայ սերունդը ազատագրական պայքարը շարունակելու համար, իր ողևորութիւնները կանոն վերջին տասնամեակներու յեղափոխական շարժումէն և գլխաւորաբար Հայաստանի անկախութեան ներշնչող պատմական եղելութիւնէն: Պատմութիւն մը, քաղաքական արշալոյս մը, որուն տասնամեակը այսօր կը բոլորի, անցեալ մը է, այլ ներկայ օրերու մեր քաղաքական տենդաքին կեանքն է, որուն կերտող յեղափոխական սերունդը տակաւին ողջ է: Այդ պատմութիւնը տակաւին իր լրումին չէ յանգած, այլ կը հողովւի:

Հայաստանի անկախութեան հռչակման նախնթաց տարիներէն և անկախութեան տապալումէն յետոյ մինչև մեր օրերը տեղոջ ժամանակաշրջանը թէև կարճ է, — ընդամենը տասնհինգ տարի, բայց պատմութեան անիւր խելայեղօրէն արագ դարձաւ: Քաղաքական փոթորիկները ցնցեցին ժամանակակից հայ մարդը, ու ժողովուրդը դանդաճօրէն, կամայականայ, անցաւ պայքարի արեւոտ թովէն, դառնութիւնը ճաշակեց անբեկալայի շափոյն, ու միեւնոյն ժամանակ, այդ անդունդներէն լոյս աշխարհ եկաւ, ապրեցաւ վերածնունդի, ազատութեան ու անկախութեան հրճանքը: Հասակը շտկեց ու սկսաւ դարաւոր ստրկութեան փոշին թափել իր վրային՝ յարուստի տաւա: Այսպիսով, Հայաստանի անկախութեան տասնամեակը իր ներքին բովանդակութեամբ, իր վերակազմող ու խանդավառող հարուստ փորձով հարիւրաւոր տարիներու խոսացած արժէքն ունի:

Այդ մեծարժէք պատմական փաստերը, բնական է, որ իրենց վճռական ազդեցութիւնը պիտի ունենային: հայ ժողովուրդի քաղաքական մտածողութեան և ուժի կազմակերպման ձևերուն վրա:

Եթէ ուղեւք, Հայաստանի տասնամեակին առթիւ, այդ պատմական փաստի այսօրայ քաղաքական արժէքը բնորոշել, կրնանք բուսականապէս միայն մէկ յոտակ կարծիք հրապարակ դնելով, իբրև այդ իրողութեան անմիջական արգասիքը, — հայ ժողովուրդը կուզէր հասած է պատմական այն հանգրուանին, որ կուզէր ազգ և պետութիւն դառնալ: Հայաստանի կորիզը ունի և կը ձգտի ամբողջացնել իր հայրենիքը, այլ ամբողջական հայրենիքի մէջ իր ազգային պետութեան շեմքը կուզէր կառուցանել անկախօրէն: Հայ ժողովուրդի ազգային քաղաքական տենչանքը խոսացած է այս յոտակ ձևակերպւած նպատակին մէջ: Ու այս նպատ

տակը անցեալին պէս մշտնապատ չէ, ոչ ալ միայն դեկալթոր տարբեր սովականութիւնը, այլ դանդաւանեղութեամբ քաղաքական նշանախօսքն է, որ հարկեր հազարաւոր էութիւններ կը բխի, կը դառնայ հանրային-քաղաքական կարծիք ու մղում կուտայ հարկադրաբար բոլոր յեղափոխական-ազգային այն շարժումներուն, որ տեղի կունենան հայ իրականութեան մէջ:

Հայաստանի անկախութեան ուղին ստեղծած է անկախութեան սերունդը մը, որ դանդաւանային է և որ անկախութիւնը կերտող սերունդին հետ ձուլած, այսօր, հայ քաղաքական հորիզոնը դունտորող միակ կինսունակ ոչ մը կը հանդիսանայ: Եթէ նախորդ յեղափոխական սերունդը, առանց փորձական օրինակ մը ունենալու, ազգային յեղափոխութիւնը կը վարէր Երևանի ընդհանուր նշանաբանին տակ, և կը դիմէր միջոցներու, որոնք նախափորձեր էին հայ ժողովուրդի դիմադրական զգացումները արթնցնելու: Եթէ, այդ սերունդը իր քաղաքական պահանջները թեմեկերպած ժամանակ, ստիպած էր բարենորոգումները, ինքնավարութիւնը, դաշնակցային կարգը և անկախութեան արդար դադարներ իրար խառնել, հայ ժողովուրդի ապստամբական նախապայմանները ստեղծելու համար, այսօրայ սերունդը, բարեբախտաբար, հարուստ անցեալ մը ժողովուրդ է, ոչ միայն յեղափոխական մտքի և գործելակերպի ասպարէզին մէջ, այլ և իր աչքին առջև ունի հանրապետութեան անկախութեան փաստը, հայ ժողովուրդի պետական կեանք ունենալու կարելիութիւնը և միացեալ հայրենիքի դադարաբար:

Անկախութեան սերունդը, այս հարուստ քաղաքական անցեալը իրարցնելով, յստակ կերպով պէտք է վերագնահատէ մտաւոր անցեալը և ճշտէ իր այսօրայ ընկերները: Ո՛րքան պարզ, ու ո՛րքան խտացած բլանայի քաղաքական դաւանանքներ, ա՛յնքան որոշ և ուժեղ կը դառնան նպատակին դիմող միջոցները: Եթէ պայծառօրէն ձեռնկրկնաբար նպատակը կը նպաստէ լճուկան ու նպատակաբար գործելակերպ մը ունենալուն, փոխադարձաբար, քաղաքական անշեղ ու յարատև գործելակերպն է, որ ազգային ապստամբական շարժումը կրնայ իր յաղթանակին տանի:

Արդ, ի՞նչ պատկեր կը ներկայացնէ հայոց ազատագրական պայքարը: Այսօր այդ պատկերը կը ներկայանայ հետեւեալ երկու ճակատներով. —

ա) Հայ բուլեիկները, ռամկավարները և շարք մը առանց դաւանանքի տարրեր դէմ են Հայաստանի ամբողջացման և անկախութեան:

բ) Հայ Յեղ. Դաշնակցութիւնը, իրեն համակիր ազգային տարրերու հետ, կը հետապնդէ միացեալ և անկախ Հայաստանի դադարաբար:

Ուրիշ ուղղութիւն չկայ հայ իրականութեան մէջ: Հայաստանի ամբողջացման և անկախութեան հակառակորդ տարրերը, որքան ալ ճշդին ապացուցանել թէ ներկայ Հայաստանը անկախ է, թէ ապագային, երբ յարմար առիթները ներկայանան, իրենք ևս պիտի ձգտին լայնցնելու Հայաստանի սահմանները (այս դադարաբար, շատ արտ ու շատ վախկոտ կերպով, երբեմն միայն ռամկավարները կը թոթովեն), թէ հայ ժողովուրդի խաղաղութեան և երջանկութեան

միակ դրաւականը ներկայ կացութեան մէջն է, (որ դայն կը կապէ Ռորհրդային Ռուսաստանին) իրողութիւնը կը մնայ նոյնը, — թէ այդ հակառակորդները դէմ են հայ ժողովուրդի քաղաքական վերածնունդին, թէ անոնք կը գործակցեն բոլոր այն ուժերուն, որոնք խորտակեցին Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը, թէ այսօրայ միճակի ջատագովները փաստօրէն կը նպաստեն հայ ժողովուրդի ներքին անկազմակերպ միջակին, արտազայթիւն և աստիճանական հարմարին:

Այս ընթացքը դարձանալի չէ: Եթէ ուշադրութեամբ ուսումնասիրենք մեր քառասուն տարւայ անցեալը, պիտի համոզուինք, որ այդ տարրերը այլ և այլ անուններու տակ, առհասարակ, հակառակորդներ հանդիսացած են մեր ազգային յեղափոխութեան, կրողի շարժումներուն, նոյնիսկ բարենորոգումներու և ինքնավարութեան համետ պահանջներուն: Այդ խայտարակտ տարրերը՝ յետադիմական կղերամիտն մինչև ուղղափառ մարքսիստը, ամէն առն ու ամէն պարագայի մէջ, կը տեսնենք միացեալ ճակատով մը Դաշնակցութեան բոլոր ձեռնարկներուն դէմ: Այս պարզ իրականութեան համոզումը համար՝ բաւական է աչքէ անցնել մեր հակառակորդներու գրականութիւնը, ո՛ր ժամանակի և ո՛ր դէպքերու մասին որ կուզէք: Ուրեմն, հայ բուլեիկները, և անոնց միացած տարրերը, հարազատ պատկերը կը ցուցադրեն իրենց ապարդիւն ու ջլատող անցեալին՝ ձգտելով անկարգումութեան մը վերածել հայ ժողովուրդը, որպէսզի ան, ռամկավար միջխառուին ու փաշային, յետադիմական սղային ու կղերին, բուլեիկ անարժէք կոմիսարին ու ոճրագործ չէկիստին հնազանդի անասնական անակերպութեամբ մը, որպէսզի ան, հայ ժողովուրդը զրկուի հաւաքական կամօք ու կազմակերպութենէ, բէլի իրաւունքէ և ազատ խօսքէ, դառնայ անգոր ինամարկայ մը, կազմալուծուած ու անարի հօտ մը, որուն հովուութիւնը դիւրին դառնայ ազգային կամ չէկիստին: Եւ, ըստանաբար, Դաշնակցութեան ներկայ յեղափոխական սերունդը իր անկախութեան և հաւաքական կամքի ցուցադրումով, աչքի փուշը պիտի դառնար ստրկամտութեան հակամէտ տարրերուն:

Անկախութեան սերունդը կազմակերպելով Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին տակ և անոր համակիր լայն շրջանակներու մէջ, ընդառաջ կերթայ հայոց ապստամբութեան ներկայ օրերու հրամայական պահանջին և կը կեղբոնացնէ հայ ժողովուրդի աշխատաւորութեան և մտաւորականութեան քաղաքական իղձերը մէկ կազմակերպուած ուժի մէջ: Ռտացած ու ձեւաւորած այդ ուժի է, որ կը շարժէ պատմական առաջելութիւն մը կատարելու մեր ազգային մտաւոր վերածնունդի մեծ գործին մէջ: Մնացած տարրերը դատապարտուած են ցեխի պէս պլլելու ազգային յեղափոխութեան քայլերուն, կամ քարի պէս ցլելու անոր առջև:

Պայքարը, որ այսօր կը մղուի յանուն Հայաստանի հողերու ամբողջացման ու մեր միացեալ Հայրենիքի անկախութեան, հեռաւոր պահանջ մը չէ, ոչ ալ անիրականանալի ցնորք մը, կամ բուռ մը երազատեսներու բորբոքած մտքի արգասիք, որպէսզի դիւրին ըլլար քաշելու պայքարի այդ ճակատէն ու կծկելու

Մրկանի խրճիթ-նթիւրցարաններու և արտասահմանի Բարեգործական Ընկերութեան գրասենեակներու մէջ:

Հայաստանի անկախութեան և ամբողջացման ձգտող յեղափոխական սերունդը պայծառ աշխույժ կը տեսնէ մեր այսօրւայ իրականութիւնը: Ու այդ պայծառատակութեամբ, այսօր, այդ սերունդը կը գտնէ, որ մեր քաղաքական մտահոգութեան առաջնայ չեն կրնար ըլլալ հետեւեալ հնացած հարցերը. —

Ա. Բարեկերպութեամբ, որ պատերազմէն առաջ տասնեակ տարիներու մտահոգութեան նիւթ դարձած էին: Այս սնամէջ քաղաքական պահանջը անմիացած է ոչ միայն Թիւրքիոյ այլ նաև Ռուսիոյ մասին: Այսօրւայ թորհրդ. Հայաստանի և Կովկաս ցրած հայ ժողովուրդի կեանքի դասաւորումը ուրիշ անուններու տակ, սեսակ մը ռուսական քարտեւնորդումներու ժրգարի գործադրութիւնն է, որ դատապարտած է գէշ վերջնաւ Հայերու համար: Հայոց պատմութիւնը «քարտեւնորդումներու» շրջանը փակած է անպարճ:

Բ. Տեղական ինքնավարութիւնները, — Այս պահանջով հայ յեղափոխութիւնը կը ձգտէր կազմուիլ և յայտատու հանանքներու և գաւառներու մէջ, ու օգտելով տեղական ապակեզրոնացած վիճակէն, նախապայմաններ ստեղծել ամբողջական ինքնավարութեան մը պահանջը հետապնդելու: Այսօր նման քաղաքական պահանջ մը գոյութեան իրաւունքէ զուրկ է: Հետեալքար, անկախութեան սերունդին համար անընդունելի կեղծիք մըն է Հայաստանի անբաժան հողեր կտրատել ու ուրիշ հանրապետութիւններու կից տեղական ինքնավարութիւններ ստեղծել (Ղարաբաղ, Նախիջևան):

Գ. Դաշնակցային կազմը, որ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնական պահանջներէն մէկը եղած է անցեալին մէջ, կը բխէր անցեալ իրականութենէն: Զուլ-շուկ պետութիւններու գոյութիւնը կը ստիպէր Հ. Յ. Դաշնակցութիւնը իրականացնել անջատուած Հայաստաններու դաշնակցային կազմը, առեալ պետութիւններու սահմանին մէջ յուսալով որ մը մը այն պիտի դառնար մէկ միասնոր, ամբողջացած Հայաստան, ու այդ փուլէն յետոյ պիտի գծէր իր քաղաքական ուղին, կամ գէպի անկախութիւնը և կամ Միացեալ Հայաստանի դաշնակցութեամբ ուրիշ խոչընդոտ համապաշնակցութեան մը հետ: Մեր հակառակորդները տասնեակ տարիներով կուէցան այդ գաղափարին դէմ և Ֆիդիքարայէն ու քաղաքական մտածողութեամբ տկարացուցին հայ յեղափոխական շարժումը: Մինչդեռ հիմա, երբ պատմական իրողութիւնները բոլորովին տարբեր փուլի մը մէջ մտած են, երբ միացեալ Հայաստանի ըմբռնումն ու աշխարհադարձական երբէ մտահոգութեան շուրջփելի ձևեր ստացած են, որք, վերջապէս, հայ հատուաները, պատերազմի ահուկի վերելիվարումներու բերումով, մէկ գանդուածի վերածուած են, ազգային մարմնով միացեալ հայութիւնը կը ներկայացնեն, ու ներկայ փոքր Հայաստանով մէկ հատիկ հայրենիք ունին, կեղծութիւն մը, որու շրջափոքր որբան ալ ընդարձակութի, նոյն հայրենիքի մեծութիւնը պիտի ապահովէ), կեղծ ու սահմանափակ դաշնակցային կազմ մը չի համապատասխաներ հայ ժողովուրդի համախմբման և հողային յանցման գաղափարին: Այդպիսի ինքնախաբէութիւններ մը, եթէ կը զօհացնէ այսօրուայ բուլշեիկ վարիչներն

ու իրենց արբանեակները, միւս կողմէ շատ հեռու է զօհացնել անկախութեան սերունդի արամարանական և քաղաքական անհրաժեշտութիւն ներկայացնող պահանջները: Երբ այսօրւայ թորհրդ. Հայաստանը դուրս կուգայ իր ներկայ սեղմած շրջանակէն, իրեն կը միտցնէ Ղարաբաղը, Ախալքալաքը և Նախիջևանն ու իր սահմաններու լայնացման ալիքը կուղղէ դէպի Բասէն և Ալաշկերտ, այն ատեն կարելի է խօսիլ ու մտածել Հայաստանի դաշնակցային կազմի մասին:

Դ. Փաղաքական հակումի խնդիրը այսօր դարձած է մեր հակառակորդներու գէնքերէն մէկը: Եւ, սակայն, անկախութեան պայքարը տանող սերունդին համար, այս խնդիրն ալ քաղաքական աղբակ մը չէ այլ ևս: Թիւրքական, ռուսական և եւրոպական հակումները (օրիենտալիզմ) անցեալի մէջ փորձուած և ձախողանքի յանգած են: Հայ ժողովուրդը թրջական բարբարոս կառավարութեան մինչև ամենէն շատ քաղաքակրթած եւրոպական պետութիւնը փորձած ու հիասթափուած է: Հայ վերազնահաստող քաղաքական միտքը, այսօր այդ բոլոր «օրիենտալիզմ»-ները անօգուտ, նոյնիսկ վնասակար կը հուշակէ: Քննադատական այս գետնին մէջ, երևութապէս, կարծես թէ հայկական բոլոր հոսանքներն ալ համակարծեք են: Մինչդեռ իրականութեան մէջ, յուսախար հայ ժողովուրդը տարած ու կապուած է ռուսական ներկայ իրականութեան, անոնց կողմէ, որոնք օրն ի րուն կը խօսին հայ ժողովուրդի խարելու մասին, կը հայտնեն եւրոպական խարբախ դիւանագիտութեան և հայկական հարցը միջազգային աշխարհակրթեան գոհներէն մէկը կը նկատեն: Այս արդէն իւրատեսակ գոհներէ խարբարութիւն մըն է, մոլորեցում մը, որ կը մղէ հայ ժողովուրդը արդէն փորձուած և խարեպատելու ռուսական «օրիենտալիզմ» ընդգրկելու:

Անկախութեան սերունդի դաւանանքն է ազատել հայ ժողովուրդը այս կամ այն հակումէ կործանարար և մոլորեցուցիչ գաղափարէն, որովհետև հայ ժողովուրդը տկարակամ է և ատով խիղճիւրահաւան: Իր յոյներ կը կապէ արտաքին խոստումներուն, կազմակերպապէս կը մնայ թոյլ ու վճռական վայրկեանին ինքզինքը կը գտնէ մենակ ու անպատրաստ: Խորշելով եւրոպական, ռուսական և թրջական հակումներէն, հայ ժողովուրդը կը կեղծոնացնէ իր ուշադրութիւնը իր ներքին կազմակերպութեան և ոյժի խոսքման վրա: Մինչդեռ ժամանակ, առանց որևէ մեծ ուժի շլանալու և անով օրօրելու, հնարաւորութիւն կուենենայ աշարուջ իր շրջապատին հակելու որևէ պարագային:

Այսպիսի վերազնահաստութեամբ մտենալով քաղաքական խնդիրներուն, այսօրուան յեղափոխական սերունդին առջև վճռապէս դրած կը մնայ միացեալ և անկախ Հայաստանի խնդիրը: Ազատագրական շարժման վճռական փուլը այս է. խոտորնակ ճամբաները կամ անանկանցած են և կամ փակ. կը մնայ ուղիղ և յստակ ճանապարհը, որ ուշ-կանուխ պիտի յանգի հայկական հողերու ամբողջացման, հայ ցրած բազմութեան հայրենիքի մէջ հաւաքման ու այդ ժողովուրդի ազատ կամքի արտայայտութեան, այսինքն միացեալ, ազատ և անկախ ազգային պետութեան մը հաստատու

ման: Անկախութեան սերունդը, երբ կը հետապնդէ անկախութեան դաւանանքը, ինքնին կը հետապնդէ Հայաստանի սահմաններու ընդլայնումը: Եւ, փոխադարձաբար, երբ կը ձգտի կցել ճաճակահայաստանը և կովկասահայկական նահանգները, իբրև կորից Հայաստանին, այդ ինքնին անկախութեան հետապնդումն է:

Անկախութեան սերունդը երկար ու դժնդակ պայքարի շրջան մը բուրիւղով, այսօր աւելի քան յստակ ճանաչողութիւնն ունի հայրենի միջավայրին, շրջապատող ազգերուն, անոնց ձգտումներուն: Այդ գիտակցութեամբ և փորձառութեամբ գինւած, ան ազատ է նոր խարխալումներէ:

Անցեալ դարուն հայ քաղաքական ղեկավարները Հայաստանը կորոնէին, բայց միացեալ Հայաստանի գաղափարը յստակ չէր: Ոմանք ալ ծովէ ծով Հայաստանը կերպզին, օր մը հայկական օջախի մը պահանջին հասնելու համար: Ուրիշներ եղան, որ կզդիներ, կամ այլ հողամասեր փնտուցին, որպէսզի «բարի» հարուստներ գնեն ու Հայաստան ստեղծեն: Իսկ անոնք, որ այսօր բազմած են Երևանի մէջ, հայ ժողովրդի և հայրենիքի գլխուն, մօտաւոր անցեալին մէջ հազար կտոր կըլլային, ապացուցանելու համար, թէ հայկական հողամաս չկայ և Հայաստանը միայն աշխարհագրական անուն մըն է:

Այդ ոգի և հայ հայրենիքի գաղափարը Հ. Յ. Գալսեանցութեան սերունդներու կողմէ կը ձևակերպուէր, կամաց-կամաց սեփականութիւնը կը դառնար

Հայաստանի հողին կտուցող բազմութեան. իսկ Հայաստանի Հանրապետութեան հիմնարկէրով սահմանադրեալ ու ամբողջական հայրենիքի գաղափարը մարմին կուտէր: Այսօր անկախութեան սերունդը իր հայրենիքի տեղն ու սահմանները դիտէ, ու հետևաբար, անորոշ որոնումներէ գերծ է: Այս բացորոշ տեսանկերով, այս սերունդը ուժեղ ու կեդրոնաձիգ է իր ազգային քաղաքական պայքարին մէջ:

Մշուշապատ գաղափարները, խարխալոտ որոնումներն ու տատանումները այլ ևս անցեալին կը պատկանին: Անցեալի պատմական հարուստ փորձառութիւնէն օգտուելով՝ ներկայ սերունդը հրապարակ անուած է, ուղիղ ճանապարհով շարունակելու նախորդ յեղափոխական սերունդին գործը աւելի՛ եռանդուն, աւելի՛ մճառական և աւելի՛ իրապաշտ: Այս է մեր ազգային քաղաքական պահանջի և գործելակերպի ա և քը, իր պարզութեան և խտութեան մէջ: Պատմական այս մեծ գործին լծւած սերունդը, սիտի դառնայ ազգային անբակտիլի, հզօր ու աննկուն բանակ մը, ու սիտի դիտնայ իւրացնել ներկայ ժամանակներու դիտական և գինւորական բոլոր միջոցները՝ խիղախօրէն դիմելով դէպի իր յստակ ձևակերպւած նպատակը:

Նպատակը ո՛րքան յստակ ու գործելակերպը ո՛րքան մճառական ու յարատև ըլլան, ա՛յնքան շուտ ու յաջող կրնայ իրականանալ հայ ժողովրդի ազգային վերածնունդը:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

Մ ա յ ի ս 28 - ը Հ ա յ ա ս տ ա ն ու մ

Գեղեցիկ է մայիսը Հայաստանում: Գեղեցկութեան գագաթումը է՛լ աւելի է ուժեղացնում Մասիսի «ճերմակ ու անհաս» ռազաթը:

Մեկ գառ, այստեղ, մայիսը մէկ առանձին ներշնչում ունի, նոյնիսկ երկինքն աւելի խոր ու յստակ է դառնում և արևը իւրայայտուկ ջերմութիւն տալիս: Երջապատը այնքան սիրուն ու գրուելի է երևում, որ ուզում ես ամէն ինչ գրելի ու գորգորգալ: Ներքո հարաւսի նման ինչ որ բան է ետում ու ամէն կերպ ձգտում դուրս ժայթքել:

Մայիսեան գեղեցկութիւնը է՛լ աւելի է շողկալուում հոգուդ թրթիռներին, երբ գիտես, թէ այդ օրերին էր, որ հայ ժողովրդի դարաւոր երկունքը վերջ գտաւ ու ծնւեց Մայիս 28-ը:

Գուցէ և այդ է պատճառը, որ մայիսեան օրերին ինքզինքդ առանձնապէս հպարտ ես զդուք, և յաղթանակի հաւատն աւելի ու աւելի հաստատուն թուում:

Մայիսի վերջերին էր, որ Երևանի համալսարանի ուսանողութիւնը կազմակերպեց մի գրօսանք դէպի իջմիծին: Առաւօտեան, դեռ արևը չարթնացած, բոլորս հաւաքեցինք քաղաքային ալգին, որտեղից պէտք է ճանապարհուէինք դաւադրովորի կողմից խոտացւած ապրանքատար օթոմոբիլներով: Ի հարկէ,

բայց սովորութեան, մեզ խաբեցին, և գուր երկու ժամ սպասելուց յետոյ, մենք որոշեցինք առիթից օգտուել ու գնալ Խորում բուլաղի այժմ՝ Սայազաղ-Նովայի ձորը:



Մ. ՏԵՐ-ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

(Սպանած հայ-վրացական պատերազմում)
Մէկ ժամ յետոյ, շուրջ յետուն ուսանողներ, թաղւած առատ ու կանաչ խոտերի մէջ, ձայնակցում էինք Չանգուի ալմուկին:

Կէս օրին, հակայ ու մեծ շինարին մեզ պատասպարեց արևից: Նախաճաշի ժամն էր: Եռուսով, անձեռոցիկ-

ների շուրջ տեղ բռնելով՝ ծայրագատիկ նստոսեցին նաև ուշ մնացած լողացողները: Վերջապէս, բոլորը ի մի էին հաւաքուած և հնարուոր էր, այսպէս առած, քննել կազմը:

Միւտ զգոյշ և արտայայտութիւնների մէջ զուսպ պրոֆեսորը թիկն էր աւել ծառի հաստ բնին և ճերմակ թաշկինակով սրբելով ճակատի քրտինքը՝ լրջօրէն պատասխանում էր շորս կողմից տեղացող տեղի ուսնտեղի հարցերին: Ուսանողութեան մեծ մասը համախմբուած էր պրոֆեսորի «սեղանի» շուրջը, իսկ միւսները փոքրիկ խմբակներով թափփուած էին երկու-երեք քայլ հեռու:

Վստահ կարելի է ասել, որ ներկայ գտնուող ուսանողների բոլորի ընկերային զբոսովները նոյնն էր — աշխատաւորական: Սակայն, տարբեր էին իրենց մտածելակերպով ու հոգեբանութեամբ: Պարզ է, որ դրա պատճառը դասակարգային շեղումներումը չէր: Միջավայրի ու պայմանների ազդեցութիւնն էր, որ աջարբել էր այդ ներհակութիւնը:

Ոմանք եկած էին հիւսիսից՝ Ռուսաստանի կողմից Անդրկովկասը վերազրուելուց յետոյ: Հեռուից միայն լսած էին «Հայաստանի Հանրապետութեան» մասին և շատ քիչ էին տեղեակ այնտեղ տեղի ունեցած քաղաքական անցուղարձին. նրանց համար Հայաստանը ներկայանում էր, աւելի շուտ, որպէս Ռուսաստանի նախկին Սրեանան նահանգ՝ տարբեր վարչաձևով ու ներքին բովանդակութեամբ: Միայն ժողովրդի հետ անմիջականորէն շփում ունենալուց յետոյ է, որ զգացին, թէ ո՞րքան շատ բան է փոխուել...

Եստեհն էլ փոխադրուել էին Հայաստան Վրաստանից և Ազրբէջանից: Սրանք միշտ էլ իրենց կապուած են զգացել Հայաստանին, միայն թէ առանց կարենալու գործօն մասնակցութիւն ունենալ հանրապետական տարիների պատմութեան կառուցման մէջ: Գալով Հայաստան՝ կարծէք ուզում էին իրենց բաժին պարտքը կատարած լինել...

Միւսները Երևանից ու Հայաստանի մնացած գաւառներից էին: Սրանց մէջ էլ մօտեցումի ու վերաբերմունքի խոշոր տարբերութիւն կար: Պարզ է, որ փետրուարեան քաղաքացիական կռիւներին մասնակցած, ապա Պարսկաստան տարազրուած ու վերադարձած Արարատեան դաշտի ու մերձակայ վայրերի երիտասարդութիւնը իր հոգեբանութեամբ ու մասձերակերպով որոշ չափով պէտք է տարբերէր ղրլիջանցուց, դապախեցուց ու լուսեցուց: Բնականօրէն, ուրոյն տեսակէտ պէտք է ունենար և տաճկական գերութեան տակ ապրած շիրակիցին:

Չնայած, որ խորհրդային իշխանութեան Հայաստանում վերահաստատուելուց մէկ տարի էր անցել և համալրարանի առաջին ուսումնական տարւայ վերջն

էր, բայց դեռ ուսանողութիւնը միմիայն չէր ճանաչել և ներքին ընդհանուր կապը բացակայում էր: 1921-22 թւականներին այնքան աղէտուոր ու դժոյակ էր Հայաստանի ներքին կեանքը, որ ուրիշներով հետաքրքրուելու և որևէ կողմնակի «գործով» զբաղուելու ոչ մտամոնակ և ոչ էլ արքամարդութիւն կար. սովը, համաճարակներն ու նախորդ տարւայ դէպքերը խոշոր հետքեր էին թողել ամենուրեք և ամենքի վրա: Օրւայ նշանարանն էր՝ մի կերպ ևսլա գնալ մինչև վաղը... Միւս կողմից էլ, կոմդիկոստուրան իր քառմնիլի արարքներով ամենքին իր պատեանն էր խոթել: Ո՛չ վստահութիւն, ո՛չ յոյս և ոչ էլ հաւատ էր մնացել: Ժողովուրդը չէր սթափուել դեռ...

Բայց... ցախեղալթխն ամէն ինչ յաղթահարում է: Գնալով, ուրտի աղմուկն աւելի էր սաստկանում և բոլորի դէմքին փայլում էր երիտասարդական անհոգութիւնը: Իսկ գետի միւս ափին, ծերունի այգեպանը բահով մարզ էր փորում. երկու ձկնորաներ էլ մինչ սրունքները ջուրը մաած՝ կարմրախայտ էին որսում: Միայն երբեմն հայեացքներն ուղղում էին Գեթ կողմը, ապա բարեացակամ ու ներողամտօրէն թոթւում դուրիները և շարունակում գործը:

Յանկարծ, կողքիմ նստած ընկերը բացազանչեց. — Տղերք, զխե՞ք այսօր ինչ պատճական օր է, չէ՞ որ Մայիս 28-ն է...

Որպէս պատասխան, միանգամայն անսպասելիօրէն, մէկ ուրիշը սկսեց երգել «Մեր Հայրենիքը»: Փորձեցի յանդիմանել անզոյշ ընկերոջս, բայց արդէն ուշ էր... Յիսուն հոգին արդէն ոտքի կանգնած, միաբերան ու լի թոքերով «Մեր Հայրենիք»ն էին հնչեցնում:

Պրոֆեսորը ձեռքը պարզեց՝ լռելու նշան անելով: Սակայն, բերանը կիսարաց, ձեռքը մեկնած, սառած դէմքով ու հարցական հայեացքով, մնաց կէս նստած ու կէս կանգնած վիճակում...

Ձկնորաներն ակնապիչ մեզ էին նայում: Մերունի այգեպանն էլ գլխարկը հանած, զոյք ձեռքերով բահին կրթնած, դուրսը կորացրած կրծքին՝ լսում էր լուռ ու մունջ...

Ուրեմն, գոյութիւն ունի մէկ ոյժ, որ կարող է բոլորին մէկ շունչ ու մէկ ոգի տալով միացնել: Ներհակ տեսակէտներով տարբեր վայրերից հաւաքուած յիսուն ուսանողները այդ ուժի ազդեցութեան տակ անբակտելի օղակով միացել էին իրար:

Եւ միացնող ոյժը Անկախ Հայրենիքի գաղափարն էր, որ, չնայած որ վեց տարի է անցել այդ օրից, բայց այսօր աւելի խրոխտ է հնչում Հայաստանի հպարտ լեւներում ու գաղտնապահ ձորերում...

Ա.

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

(Ս. ՎՐԱՅՆԱՆԻ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻՑ)

Այսպէս ուրեմն, ընդ հուր և ընդ սուր անցներով՝ Հայաստանը կուշեց անկախ պետական գոյութեան: Յնձութեան աղաղակներով ու ծափերով շընդունեց նրա անկախութիւնը: Ընդհակառակը, շատերի Համար նա նկատուած էր դժբախտութիւն: Հիւանդ Երեխայ աշխարհ բերած մօր պէս, հայ ժողովուրդը զլուխ էր ձեծծու ազաւոր և շննձով ականջին. «Իու իմ ուրախութիւնն ես, դու՛՛ զժբախտութիւնը իմ...»

Այո՛, արցունքի և տառապանքի ծովից ծնեց Հայաստանի անկախութիւնը: Ետտեղը չէին հաւատուած նրան. «անկախութիւն» և «հանրապետութիւն» բառերը նրանք դնում էին չափերով մէջ: Եւ այսպէս վարուելու հիմքերը շատ էին դորաւոր. իրօք որ, զարհուրելի էին պայմանները, և անկախութիւնը այդ պայմաններում հեղանգ էր թւում:

Փաստօրէն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հարկ 12,000 քառ. կիլոմետր աղբաւտ. կիսակործան մի երկիր՝ կծկւած ցամաք լեռների մէջ, աշխարհի խուլ անկիւնում, ծանարաբեռնած զաղթականներով ու որբերով, շրջապատւած ասամ կրճտագնոյ թշնամիներով, անհայ, անդեզ, անօգնական: Սով ու հրեանկութիւն, աւար ու աւեր, լաց ու թշւառութիւն, կոտորածի սարսափ: Իսկ միւս կողմ՝ էնվերի բանակը յաղթական՝ համաթրքական երազներով տոգորւած, որ Հայաստանի մարմնի վրայով ձգտում էր դէպի Ալշերոն ու Թուրքեստան:

Այսպէս էր դրութիւնը Հայաստանում, իսկ Թիֆլիսում տիրում էր կատարեալ շիտթ: Մայիս 26-ից յետոյ հայ-վրացական յարաբերութիւնները լարելի էին ծայր աստիճանի. վրացիները՝ արբեցած իրենց անկախութեամբ ու դերմանական հովանաւորութեամբ՝ թշնամաբով էին նայում «ուսնների փեշից սլոկ չեկող» հայերին, որոնք, իրենց հերթին վրացիներին համարում էին դաւալիր, դաւաճան, իրենց բարեկեցութիւնը հայ ժողովրդի դիակներին վրա հաստատող, հայ ժողովրդի գոյութեան թշնամի...:

Անկախութեան առաջին իսկ օրից, վրաց կառավարութիւնն ու հասարակական կարծիքը սկսեց զարմանք ու զայրոյթ արտայայտել, որ «գերիշխան Վրաստանի» հողի վրա շարունակուած է մնալ օտար պետութեան մի իշխանութեամբ: Հայերին ուղղուած էին աներկչի միտքեր, թէ նրանց տեղը Թիֆլիսը չէ, այլ Երևանը: Եւ այդ այն պահուն, երբ ամէն հաղորդակցութիւն Երևանի հետ կտրւած էր և Լուսիի ու Փամբակի ձորերում թիւրքերն ու տեղական մահաճեղականները մաքրազործում էին հայիական գիւղերը:

Ծանր էր կացութիւնը: Եւ հէնց որ հաշտարար պատերազմութիւնը Բաթումից վերադարձաւ, Հայոց Ազգ. Որհնուրդը ձեռնարկեց Հայաստանի կառավարութեան կազմակերպման՝ հրաւիրելով վարչապե-

տութեան Յ. Բաջազնունիին. այստեղ էլ բացեց անակնկալ դժբախտութիւն. ժողովրդական կուսակցութիւնը, Մ. Պապաջանեանի գլխաւորութեամբ, կտրականապէս մերժեց Բաջազնունիի առաջարկը՝ մտնելու նախարարութեան մէջ: Ժողովրդականները բաց արին կառավարչապետ շ. Յ. Դաշնակցութեան դէմ՝ պահանջելով, որ սա քաշի սուպրէկոյց, և իշխանութիւնը յանձնի իրենց: Երկու հիմնաւորում էին առաջ քաշում նրանք՝ մամուլի և հրապարակային ժողովների մէջ. նախ՝ Դաշնակցութիւնը, իր վարած քաղաքականութեամբ, առհասարակ, պատասխանատու էր հայ ժողովրդի գլխին եկած աղետների համար. երկրորդ՝ թիւրքերի հետ ընդհանուր լեզու դանելու համար անհրաժեշտ էր նոր ոյժ հրապարակ հանել և այդ նոր ոյժը ժողովրդական կուսակցութիւնն էր, որին և պէտք էր յանձնել կառավարութիւն կազմելը:

Դժբար էէր տեսնել, որ նման խնդիրներ յարուցանելիս՝ ժողովրդականների մէջ խօսում էր, աւելի շուտ, կիրքը, կամ, պատասխանատու վարչիկանին, զործից խուսափելու ցանկութիւնը, որովհետև վերջին 10—15 տարւոյ պապային-քաղաքական բոլոր կարեւոր դժոխերում շ. Յ. Դաշնակցութեան կողքին, իսկ շատ անգամ և նրանից առաջ, քայլում էին հէնց ժողովրդականները:

Բայց վերջին տեսակէտը, անշուշտ, որոշ ճշմարտութիւն պարունակում էր իր մէջ: Ի հարկէ, շատ լաւ կը լինէր, եթէ այդ բոլոր էին մէջտեղ զար ազգային մի նոր ոյժ, որ կարողանար, աւելի կամ պակաս ձեռնհասութեամբ, կոխարինել շ. Յ. Դաշնակցութեան: Այդպիսի ոյժ գոյութիւն չունէր, դժբախտաբար. Հայ ժողովրդական կուսակցութիւնը — Թիֆլիսիցի սահմանափակ թիւով մտաւորականները ու քաղցրեմները մի խմբակցութիւն — այդ ոյժը չէր:

Բաջազնունիի բոլոր ջանքերը՝ միջկուսակցական կառավարութիւն ստեղծելու՝ ի դերև ելան. ժողովրդականները յամառ վերազով մնացին իրենց տեսակէտի վրա: Նրանց հաստատականութեան նպատում էր և այն հանգամանքը, որ Ազգ. Որհնուրդը չէր բացրեց Երևանի ու Թիֆլիսի համար Գոկչոկ կառավարութիւններ կազմելու ծրագիրը. ժողովրդականները չէին ուզում հեռանալ Թիֆլիսից:

Ի վերջոյ, երկար բանակցութիւններից յետոյ, Բաջազնունիին յաջողեց կազմել հետեւեալ կառավարութիւնը. վարչապետ՝ ինքը, Բաջազնունիին, արտաքին գործերի նախարար՝ Ա. Ոստիւեանը, ներքին գործերի՝ Արամ, Էլեմտական՝ Ս. Կարճիկեան, զինւորական՝ Յ. Հախվէրդեան: Վերջինը միայն անկուսակցական էր, միւսները անդամ էին շ. Յ. Դաշնակցութեան:

Կառավարութիւնը կարգաւորեց մի շարք ընթացիկ ինչդիրներ. Վրաստանի կառավարութեան մօտ դիւանագիտական ներկայացուցիչը նշանակեց Ա. Զամալանին. յուլիս 2-ին վրաց կառավարութեան հետ կնքեց համաձայնութիւն 200 միլիոն անդրկովկասեան նոր բռնեք բաց թողնելու մասին, որից 120 միլիոնը պիտի տրւէր Հայաստանին, իսկ ութսունը՝ վրացիներին. դրեց Հայկական կորպուսի գոյքերը Երևան փոխադրելու, ինչպէս նաև անդրկովկասեան ընդհանուր գոյքերի բաժանման խնդիրը, կայսր Հաստատեց գերման, աւստրիական և թիւրքական ներկայացուցիչներին հետ. նշանակեց Պլաշի խորհրդատուովի անդամներ և այլն:

Բաթումի խորհրդատուովից յետոյ, Գերմանիայի ներկայացուցիչ զօր. Յոն-Քրեբը յայտնեց, որ յուլիս 25-ին Պոլսում պէտք է զուսմարի իմ խորհրդատուովի՝ մասնակցութեամբ Գերմանիայի, Աւստրոնոնգարիայի, Բուլղարիայի, Թիւրքիայի և կովկասեան հանրապետութիւնների ներկայացուցիչներին՝ լուծելու համար Կովկասի և Թիւրքիայի միջև առկա մնացած բոլոր խնդիրները: Հայ. Ազգ. Խորհրդի կողմից այդ խորհրդատուովին պատուիրակներ նշանակեցին՝ Ա. Ահարոնեանը, Ա. Խատիսեանը և Մ. Պապաջանեանը: Այս վերջինը, որ մեթօնով էր դաշնակցականների հետ մտնել կառավարութեան մէջ, դաշնակցականների հետ զնաց Պոլսի, իսկ սպառազին, ինչպէս կը տեսնենք, նաև Փարիզ: Յունիս Աին պատուիրակութիւնը մեկնեց Թիֆլիսից:

Այս բոլոր աշխատանքները ուշացնում էին կառավարութեան մեկնումը, որ ջղայնութիւն կը առաջ բերում ո՛չ միայն վրացիները, այլ և հայ նասարաբեութեան մէջ: Երևանից պահանջում էին փութացնել մեկնումը: Այդ նպատակով նոյնիսկ պատուիրակներ եկան Թիֆլիս: Թիֆլիսի մամուլն ու հանրային կարծիքը դատապարտում էին Հայ. Ազգ. Խորհրդի ցոյց տաած դանդաղաշարժութիւնը. մեղադրում էին, որ Ազգ. Խորհրդի անդամներ չէին ուզում բաժանուել Թիֆլիսից, ինչ որ շատ էլ հեռու չէր ճշմարտութիւնից:

Այս մթնոլորտում Ազգ. Խորհուրդը չէր կարողանում երևան բերել մէկ մշտական կամք: Իբրև յաջորդող նիստերում տեղի էին ունենում բուռն վիճարանութիւններ, որոնցից պարզ նկատում էր, որ շատերի համար Երևան զնալը անձնապէս անհանդուրժելի էր, որ անձնական նկատումները քողարկում էին սկզբունքային առարկութիւններով:

Ի վերջոյ, Երևան փոխադրելու հարցը կտրուկ կերպով դրեց Ազգ. Խորհրդի և կառավարութեան յուլիս 13-ի միացեալ նիստում, ուր կուսակցութեանց ներկայացուցիչներ արին իրենց յայտարարութիւնները. Հ. Յ. Դաշնակցութիւնը պահանջում էր, որ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը ամբողջ կազմով անմիջապէս մեկնեն Երևան: Հայ ժողովրդական կուսակցութիւնը առաջարկում էր Երևան ուղարկել մի պատուիրակութիւն և կայմել տեղական կառավարութիւն, իսկ Հ. Ազգ. Խորհուրդը, որպէս նախազգային մարմին և իշխանութեան աղբիւր, պահել Թիֆլիսում: Սոցիալիստ-յեղափոխականները առաջարկում էին, որ Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը զնան Երևան,

կազմեն այնտեղ Հայաստանի տեղական իշխանութիւն, ապա Ազգ. Խորհուրդը վերադառնայ Թիֆլիս ու մնայ, իբրև ընդհանուր ազգային իշխանութիւն: Սոցիալ-դեմոկրատները, որ առաջ կողմնակից էին Երևան փոխադրելուն, այժմ յետ ատին իրենց առաջարկը և տատանում էին անմշտականութեան մէջ:

Այս բոլոր կարծիքները լսելուց յետոյ, Քաջադնունին յայտարարեց, որ եթէ Ազգ. Խորհուրդը մնայ Թիֆլիսում կամ կազմեն Երկու Ազգային Խորհուրդներ, ինքը կը հրաժարի վարչապետութիւնից: Որի վրա, 7 քէով ընդգէմ Ե-ի, որոշեց Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը տեղափոխել Երևան: Հայը շատ ամուր էր նստել Թիֆլիսում ու դժարութեամբ էր պոկ գալիս:

Երկար ճգճումներից ու վարանումներից յետոյ, յուլիս 17-ին Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը, վերջապէս, մեկնեցին Երևան: Այլաբանաբարսղով գնալը վտանգաւոր էր. Սանահինից սկսած երկաթուղին գտնուում էր թիւրքերի ձեռքը: Պէտք էր անցնել Աղստաֆա—Գիւլիսանով:

Մեկնողների մէջ էին կառավարութեան անդամները՝ Քաջադնունի, Ս. Կարճիկեանը, զօր. Հախվէրզեանը, Ազգ. Խորհրդի կողմից՝ Ա. Սահակեանը, Ս. Տիգրանեանը, Ստ. Մալխասեանը, Պ. Զաքարեանը, Բ. Տէր-Միստանը, Ա. Խոնդկարեանը, Թ. Ա. Բարաբեանը, Հ. Ազատեանը, Ա. Մախիթարեանը և ուրիշներ, այլ և զօրապահակ՝ Դայի Ղազարի գլխաւորութեամբ: Նրանց հետ գնում էին և Երկու գերմանացի սպաներ՝ լքանիանաւ Յոն Մոմսեանը և օրեր-էջրեանաւ Ալգեմեանը՝ զօր. Յոն Քրեբի ներկայացուցիչները, և մի թիւրք սպայ Վեհիր փաշայի կողմից:

Մեկնումը կատարեց շատ խուսր պայմաններում: Վրացիները, որոնք, ահասարակ, երեւելի վարպետներ են հանդիսաւոր ընդունելութիւններ ու ջբարի երթքեր կազմակերպելու, այս անգամ, կարծես դիտմամբ, արել էին ամէն բան, որպէսզի վերաւոր հայերի ինքնապաշտպանութիւնը: Հակառակ նախօրէին հայերի կողմից արւած դիմումի, վրաց կառավարութիւնը ո՛չ մի քայլ չէր արել դիւրացնելու համար Քթոյր հանրապետութեան» կառավարութեան ճամբորդութիւնը: Վրաց կառավարութեան կողմից ոչ մի ներկայացուցիչ չէր եկել կայալարն: Երկաթուղային վարչութիւնը, իր հերթին, անփափկանկատ բժանիղութիւններով, դժարութիւններ էր հանում. տրամադրել էր մի հին, կեղտոտ ու անխաղաք վագոն, կարծես գաղթականներ էին ճամբորդները: Մեծ դժարութեամբ կարելի էր եղել արտօնութիւն ստանալ մի-երկու կիսախարիուլ ինքնաշարժ տանուլու: Նւաստացած, դառն զգացումներով հեռացան Թիֆլիսից Հայաստանի փոխիչները: Կարծես, թշնամի երկրից էին հեռանում: Փոյլի կայարանում վրաց սահմանապահները լրացրին պակասը՝ փորձելով նոյնիսկ խուզարկել Հայաստանի կառավարութեան վագոնը, և միայն գերման սպայի միջամտութիւնը ազատեց այդ խալսատակութիւնից:

Ընդհակառակը, ինչքան տարբեր էր վերաբերում Ազրբէջանում: Սահման վրա հայկական կառավարութիւնը ընդունեց զինուորական պատիւներով. ընդառաջ էին եկել նահանգապետը և Ազրբէջանի կառավարութեան ներկայացուցիչները: Աղստաֆայում և Ղազա-

խում ցոյց տրեց պաշտօնական ընդունելութիւն. ճաշ էր պատրաստուած ի պատիւ հիւրերի: Թուրք զիւրացիները համակիրանքով էին դիմաւորում հայ ներկայացուցիչներին, որոնք մինչև Հայաստանի սահմանը անցան բարեկամական ցոյցերով:

Հայաստանում, ճանապարհին, ամէն տեղ Աղգ. Խորհուրդն ու կառավարութիւնը ընդունեցին անվերապահ համակիրանքով:

Առաջին հանգիստաւոր ընդունելութիւնը Հայաստանի հողի վրա տեղի ունեցաւ Իրիվանում: Հահառակ անձրևոտ եղանակին, ձիււոր մի հարիւրեակ սպասուած էր հիւրերին դիպից դուրս: Եարախանի ամառանոցի առաջ, որը յստկացած էր հիւրերին զիշեհիւր, դրած էր պատույ պահակ: Աղգ. Խորհուրդի նախագահի բարեկ վրա զինուորները պատասխանեցին հայերէն. «բարե՛կ, հապար բարե՛ն»: Իրիվանցիները պատրաստ էին հիւրասիրութիւն և յաջորդ օր, հանդիսաւորութեամբ ճանապարհ դրին Երևան: Զօրքերը բռնել էին ճանապարհի երկու կողմերը: Ժողովուրդը բարեմաղթութիւններ էր անում:

Սեմեռովկայում աղ ու հացով ընդառաջ եկան ռուս ազգաբնակութեան ներկայացուցիչները և գնդ. Սամաքեանը իր գնդով: Աւ. Սահակեանը ընդունեց աղն ու հացը, դիտեց զօրքը և ողջոյնի խօսք ասաց հաւաքածներին:

Ելննովկայում խնւած էր ահադին բազմութիւն մերկ ու թշուառ դաղթականներ: Ռուս բնակիչները հեռացել էին Հիւսիսային Կովկաս և նրանց տները բռնել էին Կարսի, Շիրակի, Պարաքիլիսայի հայ փախստականները: Երևանի Աղգ. Խորհուրդը յայտնեց բաց էր արել մի ճաշարան և ձրի կիրակուր էր տալիս աւելի քան 5,000 մարդու:

Յուլիս 9-ին, երկկոխան դէմ հասան Ախտա: Երևանից եկել էին դիմաւորելու Աղամբ և տեղական կառավարութեան անդամները: Փողոցի զլխին կանգնած էին զօրքն ու զինուորական նւագախումբը: Աւ. Սահակեանը ընդունեց հրամանատարի զեկուցումը: սպա զօրամասերը, կանոնաւոր շարքերով, դրօշակները պարզած ու երաժշտութեամբ, անցան Աղգ. Խորհուրդի ու կառավարութեան անդամների առկէից: Տեսարանը յուզիչ էր:

Հայկական կորպուսի սպայակոյտը զօր. նազարբէգեանի զխաւորութեամբ հիւրերին ընդունեց Քանաքեռում, ուր պատրաստուած էր թէյսահան, որի միջոցին արտասանեցին հանդիսաւոր ճառեր:

Ուշ երեկոյեան հասան Երևան: Աղտաֆեան փողոցը լեցած էր բազմութեամբ: Փողոցի երկու կողմը շարքերով կանգնած էին զօրքերը՝ Սարգսարպատի ու Բաշ-Ապարանի հերոսները: Հրամանատարի զեկուցումից յետոյ հնչեց երաժշտութիւնը և խանդավառ «կեցցէ՛»-ն հապարաւոր բերաններէից:

Հասարակութիւնը առանձնապէս ջլբմ ընդունելութիւն ցոյց տեց գերմանացի սպաներին:

Երեկոյեան տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, որին ներկայ էին Թիֆլիսի և Երևանի Աղգ. Խորհուրդների և կառավարութեան անդամները, ռուս, ուկրայինցի ու մահմեդական ազգաբնակութեանց ներկայացուցիչները, պարսկական հիւպատոսը, գերմանական և թիւրք սպաները: Արտասանեցին

բոլորի կողմից ողջոյնի ճառեր, որոնց պատասխանեց Յ. Քաշաղունին. «Ա՛յր պետութիւնը, ասաց նա, ի միջի ալոց, կոչում է ո՛չ թէ հայկական, այլ Հայաստանի Հանրապետութիւն: Այդ ցոյց է տալիս, որ մեր պետութիւնը հարեանք է նրա մէջ ապրող բոլոր ժողովուրդներին համար»:

Հանդէսը տեց մինչև ուշ գիշերը: Յալուրդ օր սկսեցին պիտակահ աշխատանքները: Կառավարութիւնը հայրենի հողի վրա անցաւ գործի:

Հայաստանի անդրանիկ օրէնսդրական մարմնի առաջին նիստը բանալու պատիւը վիճակեց Հ. Աղգ. Խորհրդի նախագահ Աւ. Սահակեանին: Խորին լուսթեան մէջ բեմ առն նա և արտասանեց բացման ճառը, որը տեղի ու աւելը թարգմանեց պատկերէն ու թուրքերէն լեզուներով:

«Քաղաքացիներ՛, պատգամաւորներ Հայաստանի Խորհուրդի:

Գերագոյն Հայոց Աղգային Խորհուրդի կողմից ես պատիւ ունեմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի Խորհուրդի և յայտարարել, որ այսուհետև սա՛ ի միակ լիազօր մարմինը՝ ամփոփող իր մէջ Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան:

Այս օրը կը դառնայ մեզ համար պատմական և կը բանայ մի նոր լուսաւոր դարաշրջան մեր երիտասարդ պետութեան կեանքում, ինքնուրոյն քաղաքական և տնտեսական զարգացման:

Այս օրը կը մնայ միշտ յիշատակելի և ա՛յն պատճառով, որ առաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի սահմաններում գեղեցիկ երազանքն ու նւիրական տեսչը ինքնորոշման, թէ՛ անհնարին դէմարին պայմաններում:

Ենթադրելով, որ մեր երկրի անկախութեան հարցին շատերը ձեռնից լուստեղեակ չեն՝ ես յոյժ կարեւոր եմ դռնում այս բարձր ժողովին ներկայացնել այն փուլերը, որոնցով անցել է սկզբից մինչև իր վերջին ձևակերպումը անկախ պետութիւնների գաղափարը Անդրկովկասում:

Մեր հանրապետութիւնը, ինչպէս և միւսները, հանդէս եկան իրբ անկախ պետութիւններ ա՛յն օրից, երբ Անդրկովկասեան Սէյմը մայիս 26-ին իրեն յայտարարեց կայմալուծւած. վրաց սոցիալ-դեմոկրատ ֆրակցիայի նախաձեռնութեամբ և առաջարկութեամբ նոյն օրն իսկ Վրաստանը յայտարարեց իրեն անկախ: Անդրկովկասի ամբողջութիւնը փլուչուց յետոյ մեր երկիրը թողնւած էր իր բախտին, ուստի Հայոց Աղգային Խորհուրդը շտապեց իր վրա վերցնել կառավարութեան բոլոր ֆունկցիաները:

Հէնց այդ ժամանակն էր, որ ստացեց օսմանն և կառավարութեան բոլորին յայտնի վերջնագրերը նոր հողային գրաւումների մասին և պահանջուում էր պատասխան 48 ժամայ ընթացքում: Գերագոյն Խորհուրդի կողմից անմիջապէս առանձին պատերախուութիւն ուղարկեց Բաթում յանձին Յ. Քաշաղունու, Մ. Պապալանեանի և Ա. Սախիսեանի՝ տալով նրանց արտակարգ լիազօրութիւններ բանակաւորութիւնների վարելու տաճիկ պատերախուութեան հետ:

Մեր պատուիրակութիւնը յաջողեցրեց որոշ ուղղումներ մտցնել սահմանների մէջ, բայց և այնպէս ստիպւած էր ընդունել վերջնագիրը և խաղաղութեան դաշինք կնքել Վեհիբ փաշայի և Սայիի բէլի հետ: Այստեղ առաջին անգամ Հայոց Ազգային Խորհրդի պատգամաւորները պաշտօնապէս ճանաչեցին իրրի ներկայացուցիչներ անկախ Հայաստանի և ստորագրեցին յունիս 4-ի դաշինքը:

Մեր պետութեան անկախութեան մասին յայտնի է նոյնպէս Տաճկաստանի դաշնակից պետութիւններին՝ Գերմանիային, Աւստրիային, Բուլղարիային: Պոլսում է մեր երկրորդ պատերազմութիւնը, որի մէջ մտնում են Ա. Մահարոնեանը, Ա. Սափրոնեանը և Մ. Պապաջանեանը, որոնք ուղեւորել են այնտեղ օսմանեան կառավարութեան հրահրով, բանակցութիւններ վարելու Տաճկաստանի և նրա դաշնակից պետութիւնների հետ:

Այսպիսով, բազմակողմանի քննելով մի կողմից երկրի ուժերը և այն հանդակները, որոնց մէջ գտնուում է հայ ժողովուրդը, և միւս կողմից՝ քաղաքական և տնտեսական ստեղծւած դրութիւնը, Հայոց Ազգային Խորհուրդը սեղմեց իր սիրտը և անողոք գիտակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունել վերջնագիրը և ճանաչել Հայաստանի անկախութիւնը՝ իրեն յանձնելով պատմութեան անշարժ դատաստանին:

Այս՝ մեր հանրապետութիւնը չափք է ու նեղ էր սահմաններով. նա զրկւել է իր ամենազնահատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակչութիւնը և, կարծես թէ, պայմաններ չունի անկախ գոյութեան համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնայ միշտ. ես հաստատում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակւեն կեանքի երկաթէ ուժով, մեր արդար և անվիճելի իրաւունքների պաշտպանութեամբ զբաււած հողամասերի վերաբերմամբ և նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի և նրա դաշնակից պետութիւնների հետ, որոնց ներկայացուցիչները ներկայ են այստեղ: Մենք ընտրել ենք համաձայնութեան և խաղաղութեան ուղին, և ուզում եմ յուսալ, որ չենք սխալուում:

Մինչ այդ, մենք կը կատարենք սրբութեամբ և անշեղ կերպով մեր այն պարտականութիւնները, որոնք բխում են խաղաղութեան դաշինքից: Թողնենք ապագայ հեռանկարները, յամենայն դէպս, այսօր այստեղ առանց տատանումների և լիակատար վճռականութեամբ մենք պցում ենք խարխիւր մեր պետական նաւի և դնում ենք հիմքը պետական շէնքի՝ ձգտելով միշտ կատարելագործել նրանի բարութիւնը Հայաստանի Հանրապետութեան բոլոր ազգութիւնների, իբրև գաւազների մէկ հարազատ մայր հայրենիքի»:

Հայաստանի Խորհրդի երկրորդ նիստում, օգոստ. 3-ին, վարչապետ Քաջազնունին կարգաց կառավարական յայտարարութիւնը:

«Քաջապոկի ծանր պայմանների մէջ է գործի անցել իմ կազմած կառավարութիւնը: Նա կոչւած է իրակառնացնելու գործադիր իշխանութիւն մի պետութեան մէջ, որ դեռ նոր է ծնունդ առել և տակաւին դուրս չի եկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարութիւնը չունի ո՛չ մի յենարան անցեալում. նա չի՛ յաջողում նախկին կառավարութեան՝ շարունակելու արդէն ընթացքի դրած պետական աշխատանքը. նա նոյնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանութեան կարիքներին յարմարեցրած պատրաստի ապարատներ: Նա հարկադրւած է սկսելու ամէն ինչ սկզբից. անձև քաօսի և աւերակների կոյտից նա պէտք է ստեղծի կենտունակ և աշխատունակ մի մարմին:

Միւս կողմից, կառավարութիւնը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կայ միայն — կատաստրոֆիկ:

Չորս տարի տեւող պատերազմը, մեծ յեղափոխութիւնը, ռուսական զօրքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրութեան տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտութիւնները, տերտորիաների կորուստը, Անդրկովկասի բաժանումն անջատ պետութիւնների — այս խորին ցրւածները չէին կարող չթողնել իրենց ետևից ահուելի հետքեր: Տնտեսական կեանքի ու Ֆինանսական դրութեան կատարելա քայքայում, դադարում ապրանքների արդիւնաբերութեան և փոխանակութեան, զինամթերքի ծայր աստիճանի պակասութիւն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայութիւն կամ սուկալի թանկութիւն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցութեան դադարում, երթևեկութեան ուրիշ միջոցների պակասութիւն, ապա հարիւր հազարներով հաււող անտուն և անսնունդ գաղթականութիւն, անապահով կացութիւն սահմանների վրա և որպէս անխուսափելի հետևանք այս բոլորի — անիշխանութիւն: Ահա թէ ինչպիսի ծանր պայմանների մէջ կանչւել է աշխատանքի իմ կառավարութիւնը:

Այս բացարձիկ դրութիւնը նախորդում է արդէն կառավարութեան բնոյթը: Նա չի կարող ձգտել բողոմակողմանի ու լրիւ գործունէութեան, չի կարող ունենալ լայն ծրագիր և սահմանափակելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անխուսափելի խնդիրներով: Կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանութեան վիճակից ու ստեղծել պետական ինքնարարութեան համար պայմաններ — ահա թէ ինչպէս է ըմբռնում իր կոչումը ներկայ կառավարութիւնը»:

Ր Ա Յ Յ Ի

V

Ռ՞Վ ԵՐ ՎԱՐՆԸՆՈՒ ԱՅՍ ԳՈՐԾԸ

Ռ՞Վ է կուշած վարելու այս սրբազան գործը — Հայութեան մտաբարոյական և քաղաքական յեղաշրջումը:

Ահա մի առաջնակարգ կարեւորութիւն ներկայացնող Հայոց, որի վերաբերումից աւելի ևս պարզելու է մեր ազգային մեծ վիպասանի ղէմքը և հասարակական դաւանանքը:

Բաֆֆին մի քանի ջննդատական խօսքով պարզում է իր վերաբերումները Հայ ազնականութեան և բուրժուազիի հանդէպ: Այդ վերաբերումը, անկասկած, բացասական է միանշանակ:

Ազնականութեան վրա նա կանգ չի առած, որովհետև Հայ ազնականութիւնը չկար: Նա սկզբունքով «հակառակ է ազնականութեան բաղափարին»: Պարսկական մասում միայն պահպանւած էին Հայ ազնականութեան բեկորները, բայց սրանք էլ փչացած, այլանդակւած էին այնչափ, որ նրանց վրա մեծ յոյս դնել չէր կարել: Դարերի ընթացքում, պարսից այլաբերող ազդեցութեան տակ, «ազնիւ արիւնը նրանց կրակներում խորզախւած էր»:

Գալով Հայ դրամատէր դասին՝ Բաֆֆին նկատում է. «Վաճառականները, այլ խօսքով՝ դրամատէրերը, բարձր գիտէք, ի՞նչ տեսակ հրեշտակներ են»: Հայ դրամատէրերը երբեք նախանձախնդիր մասնակցութիւն չցոյց չեն տւել մեր կրթամշակութային գործում, աւելի ևս քաղաքական-ազատագրական շարժման մէջ: Հայ դրամատէրը, լինի նա Թիւրքիայում թէ Ռուսաստանում, ինչպէս է անգամ իր կողմէնները, և եթէ աւել է, այդ էլ եղել է հարկադրանքի տակ և ոչ թէ ինքնաբերաբար:

Հայ բուրժուազիին առհասարակ, համեմատած այլ երկրների բուրժուազիի գործը ոյժի և կատարած դերի հետ, մեծ ոյժ չի ներկայացրել և ղեկավարող դեր չի կատարել: Մեր մէջ անհամեմատ զորաւոր է եղել ղեմոկրատ տարրը:

Ուրեմն, ո՞չ ազնականութիւնը և ո՞չ էլ դրամատէր դասը չեն կարող ընաւ լինել վարելը այդ յեղափոխական գործի:

Բաֆֆին երկարորէն կանգ է առել հոգեւորականութեան վրա: Եւ այդ ինքնին հասակային է: — Մեր բրկանութեան մէջ հոգեւորականութիւնը մեծ ոյժ էր: Նա էր բովանդակ մշակոյթի կրական տէրը և ղեկավարը. նրա ձեռքումն էին մեր կրթական և այլ հիմնարկութիւնները, դպրոցները, գրականութիւնը, մամուլը և այլն: Մի խօսքով՝ Հայ ժողովրդի ողջ մտաւոր բարոյական դաստիարակութիւնը:

Ջախմարիէ և ոչնչացնող ջննդատուութեան է ենթարկել նա հոգեւորականութիւնը, նրա դերը և գործը:

Ըստ Բաֆֆիի, կղերն առհասարակ — ինչ ազդի մէջ էլ լինի նա — իր էութեամբ և գործով դէմ է մարդկային անհատական ազատութեան: Փոխանակ ժողովրդի մէջ կեանք և քաղութիւն ներշնչելու, փոխանակ ժողովրդի ձեռքը ղէնք տալու՝ իր հայրենիքը և ազգութիւնը պաշտպանելու, կղերն սարկութիւն է քարոզում, և այն էլ Աստու անունով:

Այդ ուղղութեամբ և ուղով է վարել նա մեր կեանքը, դպրոցը, մտաւոր սերնդի կրթութիւնը և այլն: Հայ հոգեւոր դասը պահել է մեր ժողովուրդը հոգեւոր մեռելութեան մէջ, դարձրել է ստրկամիտ ու խաւարած, համակերպուող ու անկեանք, կարճ՝ «չարժուս դիակներ»: Այլ խօսքով՝ Հայ հոգեւորականութիւնը իր կողմից աւելի ոյժ է տւել թիւրք կառավարութեան հետապնդած ծրագրին — Հայութեան սպանման՝ քաղաքական և բարոյական:

Հայ հոգեւորականը միշտ եղած է ամենաստոր թիւրք կամ թիւրք էլխանի հետ՝ ընդդէմ Հայ էլխանի. դաւադրօրէն առել է ընտարձակ դաւաւներ և յանձնել թիւրքին, միշտ դաւադրել և գործել է Հայութեան դէմ: Ձի կատարել մեր դժբախտ երկնքի տակ որեւէ վատ բան, որի մէջ Հայ եկեղեցականի մասը խառը չլինի:

Հայ կղերը միշտ էլ Հայածել է մեր յառաջադիմական մտքի ներկայացուցիչներին՝ Թաղիադեանին, Արովեանին, Նազարեանին, Նալբանդեանին, այն էլ դիմելով ամենատարր միջոցների՝ դաւադրութեան, մատնութեան, բանադրման...

Դալի-Բարայի բերնով՝ Բաֆֆին աւել է հոգեւորականութեան կատարած գործի ոչնչացնող ջննդատուութիւնը: Նա երես ղէպի տաճարի բեմը դարձնելով սուս է. «Ո՞վ Հայերը, ո՞վ պապերը, այս դաւաթը խում եմ, բայց առանց նիւրբու ձեռ ոսկրների. եթէ դուք այս վանքերի տեղ բերդեր շինէիք, եթէ դուք սուրբ խաչերի և անօթների փոխարէն, որ սպառեցին մեր հարստութիւնը, զէնքեր զնէիք, եթէ դուք այն անուշահոտութեան տեղ, որ խնկում են մեր տաճարներում, վառող ծխէիք, — այժմ մեր երկիրը բախտաւոր կը լինէր: Այս վանքերից ծաղեց մեր երկրի կործանումը, նրանք խնցրին մեր սիրտը և քաղութիւնը. նրանք ձեռնցին մեզ սարկութեան մէջ. սկսած այն օրից, երբ Տրդատը թողեց իր սուրբ և թագը, առաւ խաչը և մտաւ Մանիս այրը ճղելու համար»:

Իր ուղով և գործով՝ կղերը դէմ է եղած ազգայնութեան գաղափարին: Նա ճանաչում է ազգը կրօնի միջոցով: Նրա համար նոյնանում են այդ երկու դաւադարները — կրօն և ազգութիւն: Կղերականը ժխտում է աշխարհային բարեկեցութիւնը, աշխարհային կեանքը, ինչպէս և հայրենիքը: Նա «Երկնաքաղաքացի» է. նրա հայրենիքը երկինքն է:

Ահա ինչպէս է բնորոշում Բաֆֆին հոգեւորականութեան էութիւնը և դերը «Կայծեր»-ի մէջ, «Առանի

դատարանները զլրում, որ մեր վերապահի աշխարհահայեացքի խոսքումն է:

Նազարեանի, Նաբանդեանի և Ռ. Պատկանանի նման Բաֆֆին ևս ինամբով բաժանում է ազգ և կրօն գաղափարները: Նրա համար «կրօնը և խղճի ազատութիւնը այլ բան է, իսկ ազգութիւնը՝ այլ»: Բաֆֆին հաստատելով հայ ժողովրդի դաւանական բաժանման փաստը հետ, յորոշում է կապել բողոքական, կաթոլիկ և լուսաւորչական հայերին միմեանց հետ «ազգային կապերով, որ աւելի ամուր է և քաղաքացիական կապերով»: Բաֆֆին շատ դէմ էր եզրիտներին, որովհետև սրանք ուղում էին բաժանել հայերին իրենց ազգութիւնից և սպառզանացնել, այսինքն՝ լատինացնել:

Այսպէս, ժամանակակից հոգեւորականութիւնը կտրւած է եղել հայ ժողովրդից, չի եղել նրա հետ, նրա մէջ ձուլւած, չի արձնացրել նրա ազգային ինքնագիտակցութիւնը, կենդանի չի պահել մեր ազգային գոյութեան հիմքերը: Այլ խօսքով՝ իր դրժով և մտածումով չի եղել հայ:

Բայց Բաֆֆին չի մոռնում յիշատակել, որ անցեալում հայ եկեղեցականները մէջ եղել են փայլուն դէմքեր, իրենց մտածումով և գործունէութեամբ ճշմարիտ հայեր, հայրենիքի և ազգութեան քաջ պաշտպաններ: Այդ եկեղեցականները եղել են «կատարեալ ժողովրդական», եղել են ժողովրդի հետ և գործել են ժողովրդի համար: Իսկ այժմ եկեղեցականը հայութեան համար «մի մեռած և անպիտանացած տարր է», եզրափակում է նա:

Այսպիսի տարրը, անկասկած, չէր կարող լինել սոսկակաւութեան մշակութային վերածնութեան և քաղաքական ազատագրութեան ղեկավարը, առաջնորդը:

Այսպէս, Բաֆֆին երես է դարձնում նոյնպէս հոգեւոր դասից:

Ի՞նչ էր մնում: Մնում էր մի շատ կարևոր ազգակ, որի հետ կապել էր Բաֆֆին իր բովանդակ յոյսը: Այդ ազգակը, այդ կարևոր այժմ «ամբոխն» էր, թէև անմշակ, Ամբոխի մէջ միայն մնացել էին կենդանութեան ուժերը, «ազօա կայծերը»:

«Ամբոխ» սակով՝ Բաֆֆին հասկանում էր ժողովուրդը, ժողովրդական տարրերը:

Հետ Բաֆֆիի, հայութեան հիւանդութիւնը, նրա փտումը սկսւել է գլխից: Հերի գասանը — արեւակաւութիւն, բուրժուապիկ և հոգեւորականութիւն — փակ է այլասերել, ապագայանացել և անպիտանացել էին: Բայց, բարբախտաբար, գեւ ողջ էր մնացել «բառը և արմատը», այսինքն՝ ժողովուրդը: Այդ արգէն բաւական էր: «Ժողովրդի մէջ գեւ բոլորովին հանգած չեն կենսական ուժերը, այո՛, հանգած չեն, բայց մնացել են նրանց անգոր կայծերը միայն, որոնց պէտք է շունչ տալ, բորբոքել, որ նրանք բոցալաւեն»:

Իսկ այդ «պղտ կայծերը՝ բոցալաւել կարող էր միայն նոյն ժողովրդի ծոցից դուրս եկած Չարպատ գաւակը, մի խօսքով՝ «ժողովրդի մարդը»:

Ահա Բաֆֆիի տեսակէտը, որ կազմում է նրա հասարակական դաւանանքի ամենաբնորոշ և կարևոր կէտերից մէկը:

Մեր ժողովրդի մշակութային յեղաշրջումը կարող էր պատրաստել և վարել միայն նորահաս և ժողովրդական մտաւորականութիւնը: Իր «Հայ Կինը և Հայ Երիտասարդութիւնը» ուսումնասիրութեան մէջ՝ Բաֆֆին հայ մտաւորականութիւնը բաժանում է երկու խաւի՝ բարձր և խոնարհ, հիմք ունենալով նրանց աշխարհահայեացքները և իրէջանքի շնչուած տարրերութիւնը: Ըստ Բաֆֆիի, բարձր մտաւորականութիւնը կորած էր հայութեան համար. նա այլասերւած և սպառզանացած էր, նա իր մտածումով, իր գեղացումով և կամքով հայ չէր և միանգամայն կտրւած էր ժողովրդից: Հայ ուսանողի «սորի և մտքի գաւառակութեան մէջ միշտ տեղ ունենում յիմար ցնորքներ», աշխարհագրագիտութեան, աւելի ճիշտ՝ սպառզանացման գաղափրը:

Ապագայանացման շատ աւելի ենթակայ է բարձր երիտասարդութիւնը: Իսկ ազգային դաղափարը աւելի զարգացած է գաւառացի, ժողովրդի միջից ելած, ժողովրդական մտաւորականի մէջ: Սրա մէջ աւելի ուժեղ է հասարակական տրամադրութիւնը: Իր մանրագնիին ուսումնասիրութիւնը և մեր կեանքի դիտողութիւնը Բաֆֆին բերել էր այս հաստատ համոզման. — «Գիղղացի մտաւորականները գերազանցում են գաւառացիներին, դաւառացիները՝ թիֆլիզցիներին, իսկ աղքատները՝ հարուստներին»:

Բաֆֆիի բարձր հերոսները, այն տիպերը, որ պետք է լինեն, որ երևում են Հայաստանում բարբախտ հայ ժողովրդի կենդանութեան «կայծերը», ժողովրդի միջից են դուրս եկած, «ժողովրդի մարդ» են:

Խօսելով «Մշակ»-ի սկզբնական շրջանի մասին, Բաֆֆին նկատում է, «Սիլբրում այս լրագրի շուրջը խմբակաւ համալսարանական դիպլոմաւոր երիտասարդութիւնը, Բայց նրանք շատով ցրեցան, կարծես թէ այդ գործերը խորք քննեցան նրանց» (ընդգծումը իմն է. Ե-Տ-Տ): Այդ բարձր երիտասարդութիւնն էր՝ գուրկ հասարակական գաղափարներից և ազգային տրամադրութիւնը: Այդ առաջագէտ և գեմոկրատիայի բերան թէրթի շուրջը մնացին միայն «գիղղացի գուրկ իմֆնոյսները, անյաջողութիւնների տակ ճնշւած, ամեն տեղից հալածւած, բայց դարձեալ իր վեհութիւնը պահպանած մանկտի», այսինքն՝ ցածուն, խոնարհ և ժողովրդական մտաւորականութիւնը: Գր. Արծրունին, նկատում է Բաֆֆիի, ճիշտ բնորոշ այդ երևույթը՝ բարձր, դիպլոմաւոր երիտասարդների հեռացումը. «Նա թողեց զպիտանութիւն և փարսեցիներին և իրեն շրջապատեց հասարակ ձկնորսներով — ժողովրդի շրջանցած գաւակներով»:

Ահա ժողովրդի այդ լքիչացած, հարապատ, ժողովրդի ցուներն ու ուրախութիւնները ապրած, ժողովրդի ստաւապանքը և վիշտը կրած գաւակները, ժողովրդական-յեղափոխական ուժերը կոչւած էին վարերու հայութեան հոգեւորաւոր ու բարոյական վերածնութեան և քաղաքական ազատագրութեան մեծ ու սրբապան գործը:

VI

ԱՅՈՒՄՆԱԿԱՆ ՆՆՆՈՒՄ

Տանկահայութեան քաղաքական ազատագրութեան մեծ վիպասան-գաղափարաբան լրջօրէն զբաղեցրել է

նոյնպէս հայ-քրդական կնճիղը, այս երկու շարժումները, կողք-կողքի ապրող ժողովուրդների փոխյարաբերութեան հարցը, որ առաջնակարգ նշանակութիւն ունի հայ յեղափոխական ազատագրական շարժման համար:

Բաժնիքի վէպերն մէջ հայերն և չիլիքերի յարաբերութեան հարցը իր խորքի և լայնքի մէջ հանգամանորէն լուսաբանած է, հարցի թէ՛ տեսական և թէ՛ գործնական կողմը:

Այդ վէպերը լուսապէս վկայում են, որ Բաժնիքի քաջածանօթ էր ջերդերի կենցաղին, վարք ու բարքին, սովորութիւններին, հայեացքներին, ջերմ ցեղերի փոխյարաբերութեան և այլն:

Այդ վէպերն մէջ անկասկած է մի որոշ և կանքի տեսակերի վրա հիմնադրած տեսակէտ:

Ըստ Բաժնիքի, հայ-քրդական յարատև և շեշտած հակամարտութիւնը պայմանաւորւած էր նախ՝ ջերմ-դերի, այդ դեռ ևս վաղատուն կեանք վարող ժողովուրդի վայրենի, աւազակային հակուճակներով ու բնագոյներով: Երկրորդ՝ մահճեռանական կրօնով, որ իր պատերազմներով աւելի ևս հրահրում, զրոյում է այդ վայրենի բնագոյնը հայերի, առհասարակ, այլաբաններն դէմ: Երրորդ՝ տանիկ կառավարութեան աւանդական քաղաքականութեան: Իսկ այդ քաղաքականութիւնը եղած է՝ «բաժանիք, որ տիրւած» սկզբունքը: Տանիկը մշտապէս իրար դէմ է հանել ժողովուրդները, երկպառակել, թուլացրել և բնաջնջել մէկը միւսի միջոցով: «Օսմանցի գործակաւորները աճէն տեղ զրգուում էին ջերմերին հայերի դէմ», վկայում է մի ցեղապետ-չէյն: Ոչ միայն այդ: Թիւրք կառավարութիւնը անգամ «թշնամացնում է ջերմը քրդի հետ»՝ ցեղը ցեղի դէմ հանելով, թշնամութիւն սերմանելով ջերմը ցեղերի մէջ, խանդարելով նրանց մէջ որևէ միութիւն, համբարախուս հայերի դէմ», վկայում է մի ցեղապետ: Ոչ միայն այդ: Թիւրք կառավարութիւնը անգամ «թշնամացնում է ջերմը քրդի հետ»՝ ցեղը ցեղի դէմ հանելով, թշնամութիւն սերմանելով ջերմը ցեղերի մէջ, խանդարելով նրանց մէջ որևէ միութիւն, համբարախուս հայերի դէմ», վկայում է մի ցեղապետ: Ոչ միայն այդ: Թիւրք կառավարութիւնը անգամ «թշնամացնում է ջերմը քրդի հետ»՝ ցեղը ցեղի դէմ հանելով, թշնամութիւն սերմանելով ջերմը ցեղերի մէջ, խանդարելով նրանց մէջ որևէ միութիւն, համբարախուս հայերի դէմ», վկայում է մի ցեղապետ: Ոչ միայն այդ: Թիւրք կառավարութիւնը անգամ «թշնամացնում է ջերմը քրդի հետ»՝ ցեղը ցեղի դէմ հանելով, թշնամութիւն սերմանելով ջերմը ցեղերի մէջ, խանդարելով նրանց մէջ որևէ միութիւն, համբարախուս հայերի դէմ», վկայում է մի ցեղապետ:

Իսկ ի՞նչ միջոցներ էր օտարաբնակ Բաժնիքի հայ-քրդական հակամարտութեան այս հիմքերը վերացնելու կամ գոնէ թուլացնելու համար:

Բաժնիքին առաջարկում էր սերտ բարեկամական յարաբերութիւններ ստեղծել ջերմերի հետ, քարոզել և գործով համոզել նրանց, որ հայը և չիլիքը հարևան ու դիմակակից ժողովուրդներ են, որ ջերմերին էլ չարատահարում ու շարածուռում են տանիկ կառավարութեան կողմից, ու այսպէս տանիկ ջերմի միջոցով բնաջնջում է հայ ժողովուրդը, իսկ վաղը նոյն դաւադրական և սնրագործ խաղը պիտի խաղայ ջերմի դէմին, կրք այլ ևս հայեր չեն լինի: 80-ական թւերին Բաժնիքին նախառնում էր ներքին օրերը:

Քիւրդերը դեռ ևս գտնուում են մարդկային քաղաքակրթութեան նահապետական-ցեղային զարգացման աստիճանի վրա: Նրանց մէջ տիրապետում է դեռ ցեղային սկզբունքը: Երկրի ջերմը ցեղը և մահճեռանական ջերմը ցեղը ուրերի միջամիտն են, թէև նոյն ժողովուրդն են: Կարգ կրօնն է և ցեղային սկզբունքը:

Ահա այս կարևոր հանգամանքը հիմադր ունենալով՝ Բաժնիքին նպատակալարմար էր համարում կպպեր

նտեղծել յատկապէս ցեղապետների հետ: Քիւրդերի մէջ ցեղապետը ինքնիշխան է, վայելում է բացարձակ իրաւունք: Յեղի բոլոր անդամները անպայմանօրէն հնազանդում են նրան: Եւ, հետևապէս, համոզել և բարեկամ դարձնել մի ցեղապետ՝ նշանակում է համարել և բարեկամ դարձնել ամբողջ ցեղը:

Այս ձևով կարելի էր և պէտք էր օգտագործել նրանց յեղափոխական ձեռնարկների ու շարժման համար:

Եւ Բաժնիքի հերոսները մտնում են այս կամ այն ցեղապետին կամ շէյխին և անհրաժեշտ բարեկամական յարաբերութիւններ մշակում: Կարօն հրահանգում է Աւօրն բանակցութիւններ սկսել եզիլիներին ցեղապետի հետ, այնուր զոտչակողը, որ մեծ հաշակ ունի ջերմերի մէջ, տեղաւորում է մի նշանաւոր շէյխի վրամում և այդտեղ, զաղտնութեան մէջ, կատարում իր խորհրդաւոր դերը:

Այս կապակցութեան մէջ՝ Բաժնիքին շօշափում է հայ ազնուականութեան հարցը և ցու յայտնում, որ հայ ազնուականներ չկան: Ճնա իսկապէս հակառակ եմ ազնուականութեան դազափարին, ասում է նա, բայց կը ցանկանայի, որ հայերը ազնուականներ ունենային: Երբ ժողովուրդը քարոզացած է, երբ նա դեռ մի որոշ պետականութեան չէ հասած, ազնուականութիւնը միշտ յարմար միջնորդ է դառնում նրա բողբջը արտասայտնու, երբ ինքը՝ ազնուականութիւնը նոյն ժողովուրդի հետ ճնշւած դրութեան մէջ է գտնուում և նրա տառապանքներին մասնակից է լինում» (Գլխիցէր, Բ. 4, էջ 115): Ըստ Բաժնիքի, ազնուականութիւնը, իր դերքի շնորհիւ, կարող էր աւելի յաղող վարել այդ յարաբերութիւնը ջերմը մեծերի՝ ցեղապետների և շէյխերի հետ:

Բաժնիքի ծրարով գործնցին, նրա գծած ուղիով ընթացան մեր յեղափոխական գործիչները և այստեղ ու այնտեղ որոշ թաղութիւն ունեցող, բարեկամական յարաբերութիւններ ստեղծեցին այս և այն ցեղապետի հետ, օգտագործեցին նրանց յեղափոխական ձեռնարկների համար, շատերը դիրտութիւններ ստեղծեցին ռազմամիտքի և հայդուկների փոխադրութեան համար, որոշ տեղերում էլ հնարաւոր եղաւ շեղացանել, անվնաս դարձնել հայութեան և յեղափոխական գործունեութեան համար: Այդ էլ մեծ բան էր:

Հայերի հետ անհամեմատ աւելի հարտ և բարեկամ են եղած եզիլի կուշած ջերմերը, թէև ունեն ջերմը ցեղին յատուկ «բողբջ արտասայտնու յատկութիւնները»: Այս երկրի բացարձակ է գլխաւորապէս այն կրօնական սուր հակամարտութեամբ, որ գոյութիւն ունի «եզիլիներին և իրենց մահճեռանական աղապիներին» միջև: Նրանց միացնողը ազգային զաղափարը չէ, այլ՝ ցեղային և կրօնական կապը: Մահճեռանական ջերմերը իրենց ցեղային եզիլիներին համարում են հեթանոս, այլաբան և ատուած են նոյնչափ, կթէ ոչ աւելի, որչափ ատուած են հայերին, առհասարակ, քրիստոնէային: Այնպէս որ եզիլի ջերմերը, հայերի մտան, միշտ ենթադրում են կողմ մահճեռանական ջերմը ցեղերի համաձայնքին, ճնշման և բռնութեան:

Ահա այդ կրօնական հակամարտութիւնից օգուտեւրով՝ Կարօն հրահանգում է Աւօրն բանակցութիւններ սկսել և պայմաններ մշակել եզիլիներին հետ: — ԳՊԱՐՈՐ

զը բրդի դէմ—դա մի լաւ գէնք է մեր ձեռքում», մտածում էր Կարօն:

Ասացի, որ Բաֆֆիի ցոյց տւած ուղիով գնաց, նրա մշակած ծրագրով դեկամբարեց հայ յեղափոխութիւնը և որոշ յանդուրձին ձեռք բերեց: Բայց պէտք է խոստովանել, որ տաճիկ կոտորածի անաշարհը — կողպատել հայ ժողովուրդը — շատ աւելի հրապուրել էր կողոպուտի և ծուլութեան հակամէտ բրդի համար:

Քիւրդ բարեկամ ունենալու, առհասարակ, նրան անվտանգ դարձնելու համար, հայը պէտք է դիմել նրա նման և հարկ եղած դէպքում քաջարար պաշտպան է իր դռքը, կեանքը և աղաւթիւնը: Ամենահատու միջոցը այս է: Այսպէս էր մտածում Բաֆֆին:

Կանգնած մնալով քաղաքականապէս անկախ Հայաստանի տեսակէտի վրա, Բաֆֆին քարոզում էր ամենասերտ և բարարեութիւններ հաստատել հարևան վերջակալից և յարատակից ժողովուրդները—բերդերին, ջուր ատորիններին, յոյներին — հետ՝ միացած ուժերով պաշտպանել ու ապահովել իրենց կեանքը և աղաւթիւնը:

Բաֆֆին քաղաքականապէս հայ էր: Իր վէպերի մէջ, մանաւանդ «Սամուէլ»-ում, որոշապէս տեսել է իր այդ քաղաքական տեսակէտը:

Ըստ Բաֆֆիի, հայ ազգի «գոթախոտութիւններէց ո՛չ մէկը չէր պատահի», եթէ նա այդչափ օտարամոլ չլինէր, եթէ մշտապէս չյարէր դէպի այս կամ այն օտար պետութիւնը, չունենար երբեք յունական օրինչնացիւս, երբեմն՝ պարսկական: Յարելով պարսկին՝ Հայաստանը յոյն աչքը բացեց և իր դէմ հանեց և, ընդհակառակը, անցնելով յոյն կողմը՝ պարսկի աչքը բացեց ու թշնամարեց իր հետ:

Եւ ճիշտ է նկատում նա, որ պարսկը շատ աւելի համբերող ու հանդուրժող կը լինէր, եթէ Հայաստանը թէ՛ իր մշակոյթով և թէ՛ քաղաքականապէս մնար հայ: Ճակատագրական սխալը կատարեց հէնց այն դէպից, մեր մշակոյթը հէնց սկզբից դնելով անհարազատ, աշխնքն՝ յունական հողի վրա:

Եւ Բաֆֆին մեր մեծագոյն հայերի՝ Սահակի և Մեսրոպի մեծազոյն ու յաւերժական գործը տեսնում էր նրանում, որ ապատարեցին օտար լծից և հայացքին մեր մշակոյթը՝ մեր լեզուն, մեր գիրը ու՛ զրակաւնութիւնը, մեր մտածումը, մեր զգացումը և կամքը:

VII

ՐԱՅՖԻԻ ԵՐԱՂ

Խնեթի երազը դարձաւ նո՛ր, մտածող և կամեցող հայութեան լուսաճանաչ երազը, նրա դերագոյն իղէպը:

Բաֆֆին իր մարգարեական հեռուստա հայեացքով ու հողով, դարբերի միջից, տեսնում է հեռաւոր ապագան, դուշակում է հայ ժողովրդի անտեսական, իմացական, բարոյական և քաղաքական փառահեղ վերածնունդը:

Երեկայ ստրկացած Հայաստանի և հայութեան հետքն անգամ չկայ: Հայաստանը դրախտի է վերած-

ւած, և այդ միայն հայ մարդու ստեղծագործ աշխատանքի շնորհիւ: Այլևս դառն քրտինք չէ թափուում և աշխատանքը տաժանիկ չէ: Աշխատանքը հեշտացել, հանձնք է դարձել: Ստեղծագործ և արդար աշխատանքն է թագաւորում ամենուրեք:

Չկայ հետք երեկայ նահապետական կեանքի: Այսօր Հայաստանը դարգացած քաղաքակրթութեան երկիր է: Երեկայ ողորմելի գետնափոր խրճիթներ իր սեղձ-այսօր կանգնած են քարաչէն տներ՝ ձիւնի պէս սպիտակ, գեղեցիկ պարտէզներով շրջապատուած, փողոցները լայն և ուղիղ՝ հովանաւորուած մշտականաչ ծառերով, իր շուրջ աուսկանք՝ բերդի նման յատակ:

Չկան երեկայ ճահճները և անապատները: Նրանք վերածուած են կանաչադաղ ճովհանտի՛ր. մի թիղ անմշակ հող չկայ: Երկրի բոլոր մասերը իբրև հետ կապուած են հարթ ճանապարհներով, երկաթուղիներով: Սայլ չկայ այլևս:

Ամենուրեք երևում են հարուստ ապարակներ, գեղեցիկ այգիներ, մշակուած դաշտեր: Երկրի արդիւնաբերութիւնները արտահանուում են հազարաւոր մղոններ հեռու:

Երեկայ աղքատ Հայաստանը այսօր վերածուել է հարուստ և փարթամ երկիր:

Երկիրը ծածկուած է դործարաններով: Գործում են մեքենաները և շոյին, որոնք միանգամայն հեշտացրել են մարդկային աշխատանքը: Այդ գործարանները մասնաւոր սեփականութիւն չեն, այլ համայնակամ, պատկանում են դիւրեկ կամ քաղաքի հասարակութեան: Ամէն մի դիւրեկը մասն ունի թէ՛ աշխատանքի և թէ՛ արդիւնքի մէջ:

Ամէն երեւոյթի մէջ փայլում է հայ ժողովրդի իմացական, հողեկան և բարոյական վերածնունդը:

Ամբողջ Հայաստանը ծածկուած է ապարական-թողովրդական դպրոցների ցանցով, նոր կարգերով և նոր մտայնութեամբ: Չկայ երեկայ Տէր-թողիկի դպրոցը, իր հին կարգերով և մտայնութեամբ:

Բացի դիւրեկան-թողովրդական դպրոցներից երկրի դանդան վայրերում կան միջնակարգ ու բարձրագոյն գանազան տիպի կրթական հիմնարկութիւններ — Վաղարշապետում՝ ճեմարան, Կարինում՝ համալսարան, Վանում՝ դիւնուրական բարձր դպրոց, Նոր-Բագրևանդում (Հին-Բայազէտ)՝ դիւրեկանտեսական դպրոց և այլն:

Սայմանը մէկիկ-մէկիկ ցոյց տալով Վարդանին քաղաքի նշանաւոր հաստատութիւններ՝ ասում է. «ահա այդ համալսարանն է» — «ահա այդ դիտութիւնների սկզբնաժաման է» — «դա հին թագաւորական պալատն է, որ այժմ ծառայում է սրղէս մուզէում» — «դա քաղաքի նշանաւոր թատրոններից մէկն է» — «դա մի հիւանդանոց է» — «զրանք այն հերոսների արձաններն են, որ նշանաւոր եղան վերջին յեղափոխութեան ժամանակ» — «դա մի լրագրի իմբագրատունն է, ուր օրեկան 150,000 օրինակ է տպւում» — «դա»...

Հայաստանը հանրապետական երկիր է. տիրում են ամենալայն ժողովրդավար կարգեր, ունի իր երեսփոխանական ժողովը, ուր նստած են միայն ժողովրդի մարդիկ:

Այսօրայ Հայաստանում չկայ հետքը ուղղապաշտութեան: Նա խաղաղ մշակոյթի, ստեղծագործ աշ-

խատանքի երկիր է: Չկան գորանոցներ, չկան պատաստի գորարանակներ: Վերածնւած է ժողովրդավար Հայաստանում իւրաքանչիւր քաղաքացի զինւոր է: Չկայ գորբ, այլ՝ միայն միլիցիա: Բանւոր և զինղացի, երբ հայրենիքին վտանդ է սպառնում, պարտաւոր են թողնել ամէն ինչ և կրել զէնք, որի գործածութեան մէջ նոյնքան հմուտ է ու յաջողակ, որքան բաժնու բրելի, արօրի և մեքենայի: Պատերազմի ժամանակ ամէն մի քաղաքացի զինւոր է դառնում:

Հայ զինղացին և հայ բանւորը աչքի են ընկնում իրենց բնաւորութեան դրական ու փայլուն գծերով — «իրենց համարձակութեամբ, անձնագրահեմամբ, այրական անվհերքութեամբ»:

Տանուտէր Սէջօի տոհմը, անցնելով դարերի բովի միջոց, միանգամայն գտւել է մաքրւել և կերպարանափոխել էր՝ ստեղծելով մի նոր և ազնիւ սերունդ:

Կրակէ մկրտութիւն էր ստացել և վերածնւել նաև թոմաս էֆենդին: Նրա «Յէշուո հողին մտաւ առիւծի մարմնի մէջ, ուր մաքրեցաւ և սրբեցաւ»:

Գոյութիւն չունի նոյնպէս Երէկւայ եկեղեցին՝ իր քահանայով և վանքը՝ իր վանականներով: Այսօրւայ եկեղեցին բոլորովին պարզ, ազատ և ժողովրդական է—չկայ ո՛չ բեմ, ո՛չ սեղան, ո՛չ դարպարած տաճար, ո՛չ սակզօծ պատկերներ, ո՛չ արծաթեայ խաչեր և ոչ էլ թանաքալին զգեստներ... Այսօրւայ եկեղեցում կան միայն Գրիստոսի և Գրիգոր Լուսաւորեչի նկարները: Կրօնը չունի այլևս վերացական բնոյթ: Նա յարմարեցւած է կեանքի իրական պահանջներին: Գեղեցիկ երգին ներդաշնակում է երգչհոնը:

Երէկւայ քահանան բոլորովին փոխւած է: Տէր-Մարութն ևս, անցնելով դարերի բովից և մկրտելով արեան ու կրակի աւազանում, միանգամայն փոխւել է, գտւել և մաքրւել՝ հոգեպէս, մտաւորապէս և բարոյապէս: Ժամանակը կատարել է իր յեղափոխիչ դերը: Այսօրւայ Տէր-Մարութը կատարելապէս ժողովրդական մարդ է, նրա մէջ ներդաշնակօրէն միացած են թէ՛ պիտութիւնը և թէ՛ կրօնը: Նա թէ՛ ասուածարան է և թէ՛ բնագէտ:

Այսպէս, ամէն ինչ հիմնօրէն փոխւել է: Երէկւայ հայ ժողովուրդը և հայ երկիրը փոխւել է անճանաչլիութեան չափ:

Այս բոլորի մէջ միայն մի բան մնացել է անփոփոխ: Այդ հայ խօսքը, հայ լիզուն է, միայն յղկւել, կոկւել, գեղեցկացել և հարստացել է զանազան դարձածքներով: Այժմ նա հայ մարդու բերնում հնչում է իրրև երաժշտութիւն:

Ահա Սենթի-Բաֆֆիի աննման երազը:

Մի անգամ երկու դար առաջ, Մայլանը ասել էր Վարդանին. «Հայաստանը մարդկութեան տղայական հասակի օրօրոցն է եղել, նրա անմեղութեան ժամանակների դրախտը, — բայց մի օր կը դառնայ նրա այրական հասակի, նրա զարգացման ժամանակների

դրախտը»: Եւ դարձաւ: Բայց այդ մեծ գործը կատարւեց երկու հարիւր տարւայ ընթացքում, յարատև և տոկուն աշխատանքի, զատառ քրտինքի և բազմաթիւ արեան զնով»:

Սենթ-Բաֆֆիի այս փառահեղ և աննման երազը, իբրև մի արև, այդ օրից հայութեան տեսողութեան հորիզոնի վրա շողչողացել է և սերունդներին սիրտն ու հոգին ջերմացրել...:

Այդ երազը դարձաւ հայութեան դերագոյն իղէալը: Բայց նա մի ցնորամիտ և անհող երազանք չէր: Ապացոյց — ահա Մայիս 28ը: Ահա ինչ է ասում Բաֆֆին. «Բանաստեղծը ստեղծում է ժողովրդի համար իղէալներ, — բարձր, հանրամարդկային իղէալներ: Եթէ ներկայի մէջ չէ գտնում իր իղէալները տիպարները, նա մտնում է պատմութեան խորքը՝ և ժամանակների հնութիւնից դուրս է կոչում իր ցանկացած հերոսներին, և նրանց պատկերները՝ իրենց սերունդի առջև, որ նրանցից օրինակ առնեն և նրանց նման լինեն: Նա ստեղծում է այնպիսի տիպարներ, որոնք ներկայի մէջ զեռ ծնւած էին, այլ ապագայում պէտք է յայտնէին: Նրա սուր աչքերը տեսնում են ներկայի մէջ այդ չծնւած տիպարների ամենափոքրիկ նմարները միայն: Նա մարգարէի հոգով նախատեսում է, թէ՛ տարիներից, գոյց դարերից յետոյ՝ ո՛րպէս այդ նմարները իրենց սաղմնային դրութիւնից կանճեն, կլը զարգանան, կը կերպարանազորուեն և կատարել ձև ու կազմութիւն կը ստանան, — և կանխապէս նրանց պատկերները նկարում է և դնում իր ժամանակի հասարակութեան առջև: Ընդարիտ բանաստեղծը գիտէ անցեալը, գիտէ ներկան, գիտէ և ապագան: Ժամանակները նրա ձեռքումն են: Իւր հերոսներից մէկի թերութիւնները նա լրացնում է միւսից առած յատկութիւններով, ներկայացնում է իբրև կատարելագործւած տիպարներ...» (»Վայժեք», Բ. 4. էջ 659):

Այսպէս է եղել և վարւել նոյնպէս Բաֆֆի-բանաստեղծը, նախատեսել է հեռուոր փայլուն ապագան և ստեղծել հայութեան մեծագոյն երազ-իղէալը:

Մեր մի դրւածքը Ռ. Պատկանեանի մասին վերջնում էր հետեւեալ գնահատականով. «Մայիս 28-ի, Հայաստանի անկախութեան այդ մեծ ակտի նախապատրաստութեան ու կերտման մէջ իր անփոխելի և խոշոր մասն ունի հայ ժողովրդի քաղաքական ազատագրութեան մեծ երգիչ-զարգաբարբառը»:

Իսկ Բաֆֆին Մայիս 28-ի մեծագոյն կերտողն է: Նա ստեղծեց այդ գերագոյն իղէալը և սերունդները մղեց դէպի նրա իրականացումը:

Այս ի՛սկ պատճառով՝ Բաֆֆին մեծագոյն դէմքն է մեր նորագոյն դրական և հասարակական-քաղաքական պատմութեան մէջ:

Ե. ՅՐԱՆԳԵԱՆ

(Վերջ)

Թ ՈՒՐ Ք Ի ՈՅ Շ ՈՒՐ Ջ

Մ. Քեմալ կը շարունակէ իր մարզանքները, Թուրքիոյ արտաքին դիմագիծը արդիացնելու համար: Վերջին նորութիւնն է՝ լատինական տառերու ընդունելութիւնը:

Երկար վարածումներէ և պրպտումներէ յետոյ, սկզբունքով լուծւած է խնդիրը: Անատուրքի գործակալութիւնը մայիս 3-ին կը ծանուցանէր թէ լատինական տառերը ընդունւած են և մօտերս գիտական յանձնաժողով մը պիտի կազմուի, նոր այբուբենին հիմերը ճշտելու համար: Նոր տառերու գործածութիւնը աստիճանաբար պիտի ընդհանրանայ և 15 տարիէն պիտի լրանայ: Ամենէն առաջ Թուրքերէն մեծ բառարան մը պիտի կազմուի: Յետոյ, աստիճանաբար թրդ-թատարական և հեռագրական սպասարկութեանց մէջ պիտի գործածուին եւրոպական թւանշաններն ու տառերը: Ու վերջապէս, լատիներէն տառերով պիտի կատարուի դասաւանդութիւնը՝ նախարկթարաններու մէջ:

Արդէն ընդունելու օրինապիծ մը, որուն համաձայն 1929 յունւարին պարտաւորիչ պիտի ըլլայ եւրոպական թւանշաններու գործածութիւնը: Իսկ լատիներէն տառերու օրինապիծը Ազգ. ժողովին պիտի ներկայացուի յառաջիկայ աշնան:

Տարբերու տեսակը որոշելու համար, աչքի առջև կան զանազան ծրագիրներ, — 1. Բուն լատինական տառերը. 2. Անոնց ուրիշ մէկ ձևը, որ կը գործածուի գերմաններու կողմէ. 3. Ռուսական, սերպական, պուրկարական կամ հունգարական այբուբենը. 4. Յունականը: Նախկին իթթիհատական և ծանօթ հրատարակչութիւնը ձէլալ Նուրի պէյ կատարելէ նկատի ունենալ նաև հայերէն այբուբենը, «որ շատ կատարեալ է»:

Թուրք մամուլը արդէն սկսած է արծարծել խնդիրը և ջերմապէս յանձնարարել լատինական տառերը: Եւ, ինչպէս Փէսը ջիջած աստէն, ներկայ պարագային ալ Թուրք հրատարակչութիւնները նոյնքան ջերմեանդութեամբ կապացուցանեն թէ այսօրւան «էլիֆպայան» (այբբենարան) իրենց սեփականութիւնը չէ:

«Իսլամութիւնը Թուրքերու մէջ ծաւալելէն առաջ Թուրք լեզուն բնութենէն ծնած նախնական այբուբեն մը ունէր, չորս ձայնաւոր տառերով: Այդ գիրերը վերէն վար կը գրուէին, շինարէնի պէս: Կեդրոնական Ասիոյ մէջ Թուրքերը օյղուզ այբուբենի գիրերով գործի սկսան և իսլամութեան զարգացումով, այդ այբուբենը փոխանակեցին արաբերէնի հետ: Այդ օրէն ի վեր Թուրքերէնը միշտ արաբական տառերու ազդեցութեան տակ մնացած է և շարունակ ուղղադարական շփոթութեանց ենթարկւած»: (ՄԻՒԻՅԷՔ, 7 մայիս):

ձէլալ Նուրի, որուն անունը քիչ առաջ տւինք, և որ լեզուն քաշած էր Իգժիրի դասէն ի վեր, այս առթիւ ալ կը շարժէ իր լեզուան գրիչը, Իգտամի մէջ խանդավառութեամբ ուղղունքով յեղափոխական նոր ձեռնարկը: Եւ հիմաւերէն կուտայ այբուբենը բոլոր անոնց որոնք, իբար անցեր են. — «Ի՞նչ պիտի ըլլան եղած գիրքերը»:

— «Ի՞նչ պիտի ըլլան... գիրք չկայ որ բան մը ըլլայ: Մեր գրագրարանները պարագայ են: Անոնց գիրքերուն հինգ հարիւրին մէկն իսկ չի բաւեր ներկայ մտաւորական պահանջներուն: Բուն իսկ բորբոսած գիրքերն են, որ մեզ այս վիճակին մասնեցին: Մեր առաւելագոյն ունեցածը 3000 գիրք կամ գրքոյի է... Ասոնք ալ փճացնելը պահելէն աւելի օգտակար է»:

Հրամանը վերէն տրւած ըլլալով, շատ քիչեր կը համարձակին քննադատել այս արմատական քայլը: Այսպէս, թթու ազգայնական մը Վազրթի մէջ կը փորձէ վնասակար հռչակել լատինացման ձեռնարկը: «Ի՞նչ հաճոյք կայ մեր սեփական մշակոյթը մեր ձեռքով խեղդելուն մէջ: Որո՞նք են որ այս որոշումը կուտան... Բարեբախտաբար կը կարծուի 15 տարիէն գործադրել: Քանի որ գործին մէջ 15 տարի կայ, կրնանք հանդես ըլլալ»:

Իսկ և իսկ թրքական իմաստութիւն: Ո՞վ գիտէ ի՞նչեր կըլլան տասներհինգ տարան մէջ... Օրինակ, Մ. Քեմալը 15 տարի ևս կապրի՞, կամ, դէպքերը թոյլ պիտի տան, որ 15 տարի ալ իշխէ՞ տիրաբար, իր ուզածը պարտադրելու համար:

Թերևս աւելորդ չըլլայ յիշել թէ՛ տառերու փոփոխութեան այս որոշումը սերտ կապ ունի, որքան Մ. Քեմալ և ընկ. արմատական ծրագրին, նոյնքան կովկասի թուրք-թաթար ժողովուրդներու տառերու լատինացման հետ: Բազում թրքաբանական համագումարէն յետոյ, օրէնքի կարգ անցաւ լատինական տառերու գործածութիւնը Ազրբէյջանի և ուրիշ երկիրներու մէջ, և արագօրէն կը տարածուի: Բազուի թուրքերէն «Կոմունիստ» օրաթերթը կը հրատարակուի լատինատառ: Կան և ուրիշ բազմաթիւ հրատարակութիւններ, դիրք թէ թերթ: Նոյն տառերով կուտուցուի դպրոցներու մէջ:

Արդ, քանի որ Նոր Թուրքիոյ աչքն ալ ուղղւած է դէպի արևելք, էնկիւրի կարճատեսութիւն կը նկատուի կառուած մնալ արարական տառերուն, որոնք լայն խրամատ մը պիտի բանան Թուրքիոյ և կովկասի յաջորդ սերունդին մէջ:

Ամէն պարագայի մէջ, քաղաքական տեսակէտներ ալ խառնւած են այս քաղաքակրթական-ուղղադարական ծրագրին, որ թէ և շատ շուր կը վերցնէ, բայց կրնայ յորժնական արդիւններու յանդիլ, քանի Թուրքիան խաղաղութիւն կը վայելի, և «Նագիջն տէրն է կացութեան»:

Ան օրէն ի վեր, որ էնկիւրի մարգպանութիւն մը հաստատեց Տիլքանակերտի մէջ, արևելեան՝ քրտահանային նահանգներուն համար, արտաքին լիազորութիւններով, արագօրէն յառաջ կը տարուի ողջ մնացած թուրքերը «խաղաղութեամբ» նսանելու քաղաքակառուութիւնը:

Մարդկանքը, Իլյարահիմ թալի պէյ, ամիսներէ ի վեր իշխանական պտոյտներ կը կատարէր գանազան գաւառներու մէջ, բարեխնամ կառավարութեան շնորհները աւետելով պոծածքներու մէջ: Բարեխորհուած, կրթութիւն, հանգրուութիւն, արդարութիւն, հասարակութիւն, — ինչ որ հարիւր տարիէ ի վեր գոյ ըրած են թուրք վարիչները:

Վերջերս որոշ մեղմացում կը նկատուէր Գիւրեմերու հանդէպ: Նոյնիսկ ձեռնարկներ եղած էին շարք մը ապստամբ զեղապետներ համոզելու և ներս քաշելու համար: Իսկ մայիս 7-ին, ներքին գործավար Աղբ. Մեծ Ժողովին առաջարկեց ընդհանուր ներման օրինակներ մը, որուն համաձայն իրենց տեղերը պիտի վերադարձին զէպի արեւմտեան Անատոլու աջտարած Գիւրեմերը, պիտի դադարէր դատական հետապնդումները և պիտի յետաձգէր շատ մը վճիռներու գործադրութիւնը:

Ներման օրինակներ հազիւ հաղորդւած, թուրք թիրթիրը սկսան ծանուցանել կարգ մը զեղապետներու հնազանդութիւնը: Եւ անէն ի վեր աւետիսներ կուտան ամէն օր: Անշուշտ բոլորովին սուտ չեն այդ լուրերը: 1925 փետրուարի ապստամբութենէն ի վեր, շատ մը շէյխեր և զեղապետներ փորձած են կառավարութեան աչքը մտնել, կամ խաչքեր շնորհուած են ինկիւրիէն: Բեմախաղական կառավարութիւնը, որ հաւատարմօրէն ժառանգած է իր պապերուն սովորութիւնները, փորձեց և հասկցաւ, թէ միայն պէնջի ուժը բաւական չէ, Գիւրեմերը կապտակեցնելու համար: Սահմանները ամրացնելով, ոտտրակներու ու զինւորները զաւապտակելով հանդիման, ան մասնաւորապէս ոյժ տուաւ սիրաշահելու, կաշառելու, «բաժանեա զի տիրեցեալ» զաղաքականութեան, որուն վերջին դրական է ընդհանուր ներումը:

Լաւ հասկնալու համար այս զաղաքականութեան իմաստը, կարճէ գանի մը կէտեր յիշել ներքին գործավարին ճառէն: Ներկայացնելով ներման օրինակները, Շիւքրի Գայա պէյ բացատրեց անոր 4 յօդածներուն իմաստը: Ու մասնաւորապէս շեշտեց պարագայ մը, — չի բուսեր ներումէն օգուտի և տունը նստիլ կամ արտ վարել: Պէտք է նաև դիմադրել ապստամբներուն, «անդգամներուն», ինչպէս կը կոչէ ինք:

— «Ո՛ր և է զէպիի ատեն խռովութիւն յարուցանել փորձող անգղամները իրենց դէմ պիտի գտնեն ոչ միայն պաշտօնական ուժերը, այլ և շրջակի պատահար տարրերը: Որովհետև, զպայտական գործողութեանց խառնակ արկիծուրքեան մէջ, այն հայրենակիցները որ իրենց պարտակաճութիւնը կատարելու մասին յրապկան դիմել չեն բռնել, կամայականայ պիտի ենթարկին խռովութիւն սերմանողներու ազդեցութեան: Լաւ հայրենասիրութիւնը կը պահանջէ ոչ թէ անհոգութեամբ լուռ և անտարբեր մնալ հանդէպ այն խռովարարներու, որոնք ձեռք կը վիթրցեն օրէմներու դէմ, այլ կը հրամայէ գործօն մասնակցութիւն ունենալ, խռովութեան նիւթերուն և բարոյական վնասները սահմանափակելու համար»:

Ինչպէս կը տեսնէք, դիւալիյն է ծրարելը: Կտուավարութիւնը յատկապէս կը յանձնարարէ զերտ ժողովուրդին կուրի իր եղբայրներուն՝ ապստամբներուն դէմ — այլապէս, անքէ կրնայ: Ձե՞ս կուրի, — ուրեմն

ինձի դէմ ես, և կուտակեց ապստամբին: Դիւրին է զուշակիլ այս զաղաքականութեան հետեանքները, որոնք դառն փորձի մը պիտի են թիւրքին ապստամբները:

Այս առթիւ շեշտեմք, որ զերտ աղապարական շարժումը հետզհետէ կը քսուի իր բնական ճամբան, և փորձանակ կապելու չէլիքներ և աշխիթապետներու քմայքին հետ, կը ձգտի կամակերպիլ ժողովրդական հիմերու վրա: Արդէն ասպարէզ եկած է «ձորտուն»ը, զբոսական առաջին յեղափոխական կոմիտէն, իր մասնաճիւղերով: Որքան ալ խարխալի և դժաւարութիւններու հանդիպել իր առաջին քայլերուն մէջ, այդ կոմիտէն յարմարութիւն ունի հետզհետէ զօրանալու և մտահոգութեան լուրջ աղբիւր մը դառնալու թրքական կառավարութեան դիմուն: Ճիշտ այս պատճառով, ինկիւրի կը փորձէ բերդը ներսէն դրաւել, փախտականները լեռնէն վար իջնեցնել կամ Սուրիայէն և Միջագետքէն ներս քաշել, որպէսզի ազատագրական շարժումը ջլատուի:

Ժամանակը պիտի ցուցնէ թէ ո՞րքան ճիշտ է այս հաշիւը: Մեր տեղեկութիւններուն համաձայն, ընդհանրապէս զաղջ տպաւորութիւն ձգած է ներման կարգադրութիւնը: Իսկ յեղափոխական շարժման բուն վարիչները կը ծիծաղեն այս հին-թրքական մեթոդներուն վրա:

Սիրաշահելու զաղաքականութեան հետ մէկտեղ, կառավարութիւնը կը շարունակէ Գիւրեմերը թրքացնելու գործը, շատ քաղաքավար անունի մը տակ, — «կրթական աշխատանքներ»: Մասնաւոր ջանքեր կը թիւրքին բոլոր զբոսարեակ նահանգներուն մէջ, — Ան, Պրիլիս, Սարբերգ, Տիրքանակեքա, Ուրֆա, Մարտին, Նէքեարի, Սղերգ: Կրթական գործավարութիւնը իր խորհրդականը դրկած էր, որ աւետարեք լուրեր կը հաղորդէ: Որտեղ է նոր դպրոցներ բանալ, դարաշարաններ հաստատել, մարտական միութիւններ կազմել են: Այնպէս որ, Գիւրեմերուն կը մնայ միայն... իրենց երախտագիտութիւնը ապացուցանել:

* * *

Գաղաքական շրջանակներու համար տակաւին մութ կը մնայ Մուսոլինի—Թէվիթիկ Բիւշտի տեսակցութեան բուն գաղտնիքը:

Տեսակցութիւնը տեղի ունեցաւ ապրիլ 3-ին, բայց խորհրդածութիւններն ու մեկնութիւնները կը շարունակուին մինչև այսօր: Բոլոր բանգէտները ասպարէզ իջած են, այս զէպիին բուն իմաստը երևան հանելու համար: Կը թւէ թէ բոլորովին անտեղի չեն մերձեցման մը լուրերը: մասնաւոր դր, դեռ 1927-էն, բարեկամական սիրալիք արտայայտութիւններ չեղան երկու երկիրներու միջև: Շարք մը առկախ հարցեր կարգադրեցան: 1927 յունիսին, Բուսլիյի Կառային Դաշնակցութեան կողմէ պատիւարկութիւն մը կայացելէր ինկիւրի, փառաբանելով խռովութիւնը բարեկամութիւնը: Մուսոլինի շնորհարարական հետադիւր մը կուղղէր թրքական նաւատորմին: Թէվիթիկ Բիւշտի պէյ, դեռ այդ օրերուն, իր բարկալուտտի ճառին մէջ կը յայտարարէր. «Ձեպի աւելի բնական բան մը բան միութիւնն ու բարեկամութիւնը Միջերկրականի զեղածիծաղ ափերու երկու պահանջներուն»:

Միլանի տեսակցութիւնը եղաւ նոր և աւելի հանդիսաւոր ցոյց մը: Երկու երկիրներուն մէջ ալ, մամուլը արձակեց զոհուածական կանչներ: Վերջանք հաւաստել թէ Լոզանի հաշտութեան դաշնագրին կնքուէն ի վեր երկու երկիրներու յարաբերութիւնները երբեք այնքան լաւ եղած չեն, որքան այսօր: Կասկած չկայ որ Միլանի խօսակցութիւնները պիտի օգնեն վերջնապէս փարատելու բոլոր ամպերը և սեղմելու Հոռմն ու Էնկիւրիին միացնող կապերը»: Այս լեզուն կը գործածէր իտալական կարեւոր թերթ մը, «Լաօօօո դ'Իտալիա»: Աւելորդ է բացատրել թէ ինչպէս թուրքերոյ, Իտալիոյ մէջ ալ մամուլը ենթարկուած է պետական հսկողութեան, և օրան վարիչներուն տեսակէտն է որ կարճանագրէ:

Իտալական ուրիշ թերթեր ալ տարբեր լեզու չգործածեցին: Ամսագիր մը, «Օտտէմանէ», այս ամսուան (մայիս) թիւին մէջ հրատարակեց ուշագրաւ յօդուած մը, դադթային նախարարութեան նախկին խորհրդական Ռոպէտտօ Կանտալուպոյի ստորագրութեամբ: «Անկեղծօրէն կը խնդակցենք այս հանդիպումին համար», կըսէ նախկին պաշտօնատարը, որ միևնոյն ատեն իտալական միջամտութեան կը վերադրէ թուրքահեղին մերձեցումը: Յետոյ, խանդավառութեամբ կը խօսի թուրքերոյ արդիացման և վերածնութեան ջանքերուն վրա, և կը մաղթէ որ «թուրքերը կայմեն հաստատուն կէտ մը արեւելեան շարժուն և սահուն աւազակոյտի սեմին վրա»: Ու վերջապէս, խորհուրդ կուտայ որ Իտալիա ուշադրութեամբ հետևի թրքական անցուդարձին, որովհետև «թուրքիան այլ ևս իսլամական երկիր մը չէ և Միջերկրականի արևելեան արևելուն ցեղազարկան մեծ կորիզն է, ամենէն յստաջիմասէր ժողովուրդը: Վերջապէս ամենէն աւելի մօտ է մեզի»:

Բնականաբար տասն անգամ աւելի խանդավառ արտայայտեցան թուրք թերթերը, որոնք յայտնապէս մտահոգութեան մատնուած էին անցեալ տարի: «Միլանի տեսակցութեան շնորհիւ, բոլորովին փարատած են այն թուրքմացութիւններն ու անորոշութիւնները, որ զոյնութիւն ունէին Փաշիտ Իտալիոյ և թուրքերոյ միջև»: (Սօն Սաաթ): «Կը խոտովանինք թէ կարգ մը շրջանակներ հաճոյք կը զգան յայտնելով թէ թուրքերոյ և Իտալիոյ յարաբերութիւնները չփոխուին: Նոյնիսկ աւելի առաջ երթալով, կըսեն թէ Իտալիա աչք ունի թուրքերոյ վրա: Թուրք հանրային կարծիքը կը ծիծաղէր, իսկ Իտալիա միշտ կը հերքէր այս զորոյցները: Միլանի տեսակցութիւնը դերացուց այս կարգի թուրքմացութեանց: փարսաճումը: Երկու պետութեանց վարիչները տեսած են որ ոչ մէկ պատճառ կայ փոխադարձ բարեկամական յարաբերութիւնները խան-

գարելու և այդ նկատուածով որոշած են ա'լ աւելի ամրապնդել եղած բարեկամական կապերը (Ազաւմ):

Տարակոյս չկայ, որ այս արտայայտութիւնները աւելի շատ սփոփանքի հառաչանքներ են: Իտալական արշաւանքի մը վտանգը անխուսափելի և մօտալուտ կը նկատէր, — առ այժմ վախ չկայ: Ահա, երկու խօսքով, թուրքերուն ցնծութեան պատճառը:

Եւ հաւանական է որ այսօրուան համար ճիշտ ըլլայ իրենց հաշիւը: Սա դժոյզակ ժամը թող անցնի, յետոյ կը մտածենք. — Նոյն թրքական իմաստութիւնը, որ ժառանգութիւն մնացած է սերունդէ սերունդ:

Ընդհանուր առումով, պէտք չէ չափազանց լայն համեմատութիւններ տալ Միլանի տեսակցութեան և բարեկամական արտայայտութիւններուն: Բայց, անուրանալի է որ, բուն շարժումներէ յետոյ, տեսակ մը նահանջ կամ ռազմափարական խաղ կը կատարէր Մուսոլինիի կողմէ: Բողոքն յարմար չդտնելով, կամ անհնարին խոչընդոտներ տեսնելով իր առջև, «Իտալիան» կը փորձէ տնտեսական աշխարհակալութեան ճամբան:

Արդարև, այս տեսակցութեան առթիւ եղած ամենէն բանաւոր ենթադրութիւններն ալ կը յանգին այդ երակացութեան: Իտալիա պիտի փորձէ շահաստաններ գտնել Անատոլի մէջ, իր ճարտարագործութեան համար, և աշխատանքի ապալեցնել: Ի հարկէ, թուրքերը ուրախ կըլլան, և թէ այսքանով կամ այս ձևով ազատին ահաւոր մղձաւանջէ մը:

Ամէն պարագայի մէջ, դեռ ամբողջովին բացուած չեն այս նոր քաղաքականութեան բոլոր ծալքերը: Եւ գործն ալ դեռ «ի լինելութեան է»: Ինչպէս, օրինակ, ոչ-յարձակման կամ փոխադարձ երաշխաւորութեան դաշինքի մը ծրագրերը:

* * *

Կանոնաւորապէս հետեւած ըլլալու համար թուրքերոյ արդիացման փորձերուն, արձանագրեց վերջին նորութիւններէն մէկն ալ:

Ապրիլ 9-ին, Ազգ. Մեծ Ժողովը քէտարկեց օրէնք մը, որով կը բաժնուին կրօնն ու պետութիւնը: Մրադերն հեղինակն էր՝ վարչապետ Լամեթ փաշա: Այս առթիւ փոփոխութեան ենթարկեցան Սահմանադրութեան Բ. յօդուածը, որ կըսէ թէ թուրք պետութեան կրօնն է իսլամութիւնը, և 16րդ ու 38րդ յօդուածները, որոնք կը ճշտեն երեսփոխաններուն և հանրապետութեան նախագահին երզումի բանաձևերը, կրօնական հասկացողութեամբ: Այսուհետև այդ երզումները պիտի կատարեն ոչ թէ «վալլահի պիլլահի» բանաձևով, այլ պատուոյ վրա, որ այնքան թանկագին է թուրքերոյ մէջ...

Քրդական շարժումը խորհրդային ակնոցով

Հարկ չկայ ապացուցելու, որ բուլլեթենները համար գոյութիւն չունին ոչ սկզբունքի, ոչ գաղափարի և ոչ էլ գործնականրպի սրբութիւն: Վարպետօրէն ամէն մի անելիք քողարկելով յեղափոխական նշանաբաններով, իրենց իւրաքանչիւր քայլն ու պայքարը փաստօրէն պայմանաւորում են Ռուսաստանի քաղաքական շահերով:

Ճնշած դասակարգերի ու գերի ժողովուրդները անունից խօսող Կոմունիստական կուսակցութիւնը, խղճի ամենայն հանգստութեամբ, ընդունակ է ոչ միայն չոքել դրամատէրերի առջև, սեղմել ջարդարարների ձեռքը ու համարուել միապետների զղանցքը, այլ և՛ ուրանալով ժողովուրդները ապստաղական պայքարը՝ նպաստել նրանց ստրկացման:

Այսպիսի վերաբերմունք ցոյց տւին երէկ բազմաշարժար հայ ժողովուրդի քաղաքական պայքարին, — նոյն էլ անում են այսօր, մէկ ուրիշ՝ նոր վերածննդ ազդուութեան հանդէպ:

Ընդամենը երեք տարի առաջ էր, որ Կրեմլը անարգանքի միւնի դամեց քրդական յեղափոխական ընդվզումը՝ յայտարարելով Շէյխ Սայիդի ապստամբական շարժումը հակաիշխանական, յետադիմական: Դեռ երէկ էր, որ աշխարհիս «միակ ընկերվարական կառավարութիւնը», ծննդով ու սողալով Գեմալ փաշայի ոտքերի տակ՝ ամէն կերպ խրախուսում և աջակցում էր այդ վայրադ բռնապետին խեղդելու ջիւղը ժողովուրդի վերածնունդը: Այդպէս էր վարում Պոլիտբիւրօն, որովհետև այդ էր պահանջում Ռուսաստանի քաղաքական շահը:

Այդ ժամանակաշրջանում Քիւրքիայում ուժեղ բախում կար արևելեան և արևմտեան հակումների մէջ: Խորհրդային իշխանութիւնը վախ ունէր, որ Անդրան կարող էր ամբողջովին թեքել դէպի արևմուտք, յանձնելով արևելքի բանային եւրոպական իմպերիալիզմի ձեռքը: Բուլլեթենները, Քիւրքիայի սիրտը շահելու համար՝ բնաւ չըժաւարացան զոհարերի «ինչ որ մի քրդական ցեղ»:

Իսկ այսօր, երբ Քիւրքիան՝ գնալով, աւելի ու աւելի է հակուում դէպի Արևմուտք, երբ արդէն բացայայտ է, որ ոչ թէ Ռուսաստանն է քաղաքականապէս օգտագործել Տաճկաստանին, այլ ճիշտ հակառակն է եղած, — խորհրդային իշխանութեան ոչինչ չի մնում անել, եթէ ոչ իր քաղաքական գերազանցի տնտեսութիւնը ծածկելու համար, արձանագրել մոխիրների տակից ինտոլ մէկ նոր ժողովուրդի գրեթէ փաստը, որը առաջին օրերից իսկ շատ պարզ ու հասկանալի էր իրեն:

Ինչինի կուսակցութիւնը իր տակտիկան փոխելով, սկսել է նմանը շոտնուած մի խայտառակ փարսնեցիութիւն:

«Ջարեա Վաստիկա» թերթի սոյն տարւայ ապրիլ 25-ի թիւ մէջ՝ Բրդստանին ներկում մէկ յօդածում կարդում ենք. «Համարեա մէկ դար է, ինչ Արարատից

մինչ Իրաք և Անատոլից մինչ Քիւրմանշահ ընթանում է քերթ ցեղերի անընդհատ ու շրտլացող պայքարը՝ յանուն անկախութեան: Ողբերգութեամբ լի դարաշրջանի կրեցին, նոյնքան էլ յաղթանակի փորձեր ունեցան՝ մինչև օրս էլ մնալով ըմբոստ ու անհնազանդ: Անցեալ ամառայ կէսերին, ապստամբութեան ճնշումից ուղիղ երկու տարի յետոյ—մի ապստամբութիւն, որը, որքան էլ Անգլիայի դրդումով եղած լինէր, բայց և յստակ ընկերային հիմունքներ ունէր—մերձակայ Արևելքի պատմութիւնը ստիպած էր նշել մէկ նոր՝ իր տնտեսա-քաղաքական բովանդակութեամբ չափից դուրս խոր շարժում՝ Բրդստանում»: Ապա թեւելով անցեալ տարի Սաւունում, մուշում, Բիթլիսում, Դիարբեքիում, Վանում և Արարատի շրջանում տեղի ունեցած քրդական շարժումները, թերթը նկարագրում է և այն դաժան միջոցները, որ կառավարութիւնը գործադրում էր ապստամբներին վախեցնելու նպատակով. — «Արճշի հրապարակի վրա ցուցադրում է երկու բնու կտրած գլուխներ: Սակայն, դարձաւ չի վախեցնում ջիւղերին»: Ապստամբների նշանաբանն է եղած՝ անկցի՝ դիւզացիներին և ընչադրդիներին ճնշող կառավարութիւնը: «Ապստամբութեանը ժամանակում են նոյնիսկ կանայք. Դերսիմի շրջանում 500 ըմբոստների ղեկավարն էր մի քրդուհի»: «Նկարագրւած դէպքերի վերլուծումը ցոյց է տալիս, որ այդ շարժումները ոչ թէ աւազակային են եղած, ինչպէս որ ոմանք փորձեցին ներկայացնել, այլ շարժանկութիւնն են արտապահական պայքարի: Դրան ապացոյց՝ ապստամբութեան համաժողովրդական բնոյթը և նշանաբանները: Բուլլը դէպքերը ցոյց են տալիս, որ շարժումը կրում է քաղաքական խոշոր բնոյթ: Եւ քանի որ այդպէս է, ապա, ուրեմն, անխուսափելի է այն եզրակացութիւնը, որ ներկայիս կառարաղ «խառնակիչների խաղաղեցումը» շատ պայմանական է և բխում է ջիւղերի հանդէպ բռնած սխալ քաղաքական ուղից: Բիւրոյի թաղաքականութեան անխուսափելի քառականապէս ապացուցւած է թէ՛ Սուլթան Համիդի և թէ՛ Երեսասարդ Քիւրքերի ժամանակ. այդ ուժը ներկայիս էլ անգոր է լուծելու քրդերի ազգային հարցը»:

Քիւրդերն ունեն գանազան դաճնակիցներ, որոնց մէջ «ամենախոշոր տեղը բռնում են Անգլիան և ապա դաճնակցականները»: Անգլիան իր աշխարհակալական ու գիշատիչ նպատակներով աշխատում է քրդական հարցին տալ միջազգային բնոյթ և ձգտում է ստեղծել տերիտորիական և քաղաքականապէս ինքնավար Բրդստան, քանի որ նա գիտն, «թէ անկախ քրդական պետութիւնը, առաջին իսկ օրից, կընկնի Անգլիայի հզոր ազդեցութեան տակ: Դրա համար էլ «Անկախ Բրդստան» անգլիական նշանաբանն իր մէջ թաղցնում է աշխարհակալական խոր իմաստ: Այդ նշանաբանի իրականացումը ամենից առաջ մահացու

հարած կը լինէր Պարսկաստանի և Տաճկաստանի ազգային կառուցմանը. այսինքն, շատ ձեռնուռ բրիտանական աշխարհակալութեան և, հետևաբար, առարկայօրէն յետադիմական դեր կունենայ (ջրդակիանակաթիւնը Ա.)» :

«Կասկածից դուրս է, որ միջազգային ներկայ կացութեան մէջ, ջրդակիան հարցը Տաճկաստանի և Պարսկաստանի ներքին խնդիր է. նա միտւմ է ներքին խնդիր, նոյնիսկ, չնայած, որ այդ պետութիւնները ջրդակիան հարցը լուծելու փորձերի միջոցին շատ կոպիտ սխախտք են անում: Եւ այդ ներքին շրջանակում ջրդակիան հարցը շատ աւելի հեշտ է լուծել, քան թէ «միջազգային» շրջանակում»:

«Մշակութա-կենցաղային ինքնորոշումը, որին իրաւունք ունին ձգտելու ջերդերը, սաճկական և պարսկական կառավարութիւններէ օժանդակութիւնը Քրդաստանում աւտարականութիւնը վերացնելու համար, որն իրաւունք ունի յուսալու ջերդ ժողովուրդը, և այն և այլ. այդ բոլոր խնդիրները բնաւ միջազգային բնոյթ չեն կրում: Դրանք աւելի հետադիմաբար կը լուծուին ջերդերի, պարսիկների և թիւրքերի միացումով, քան թէ Անգլիայի միջոցով: Անկախ Քրդաստանի համար առաջադիմութեան բոլոր ուղիները կը խափանեն, և թէ նա զսուի Անգլիայի պաշտօնական կամ ոչ պաշտօնական հովանու տակ»:

«Դանշակից-դաշնակցականներն էլ նոյնպէս շատ քիչ են մօտ ջրդերին, քանի որ նրանք պարզօրէն անգլիական գործակալներ են և վերջինիս կամքը կատարելով, պէտք է հետապնդեն այնպիսի նպատակներ, որոնք ուղղւած են Պորհրդային Հայաստանի դէմ»:

«Տակաւորէն, այն շարժումը, որն ուղղւած է հարեանների (Պարսկաստան և Տաճկաստան Ա.) ժողովրդավար սկզբունքներին դէմ, միայն յետադիմական դեր է խաղում, պրովոկացիայի ենթարկելով ջերդերին»:

«Սակայն, այս բոլորից չի բխում, թէ ջրդական շարժումը չի հիմնաւորում ներքին ընկերային-քաղաքական տեսանկերով: Եթէ չլինէին այդ տեսանկերը, անհնար կը լինէր և նրա այնքան լայն շարժումը տարածելու հակումը»:

Յօդածածաղիքը երգակցնում է. «Անկցի/ պիւղացիութեանը և բոլոր ընչազուրկներին ճշտող կառավարութիւնը» նշանաբանը միաժամանակ հարեածում է թէ՛ ևւրդպացիներին և թէ՛ ջերդերի հարեաններին: Դրա մէջ արտացոլում է ջրդական շարժման իսկական իմաստը՝ հերքելով այն միտքը, թէ իբր ջրդական ապստամբութիւնները աւազակային արշաւանքներ են եղած»:

Որք քաղաքականութիւն խաղալու ցանկութիւնը այն աստիճան է ոգևորում խորհրդային հրապարակազրին, որ նա չի էլ նկատում, թէ ինչպէս է մոլորում կեղծիքի ու հակասութիւնների լարերին՝ թողնում:

Կարծիք քաղաքագէտը փորձում է մէկ հարեածով ոչ թէ երկու, այլ չորս նպատակ որսալ. միաժամանակ աշխատում է թէ իր ցանցերի մէջ առնել

ջերդերին, թէ՛ սիրաշահել պարտիկին ու թիւրքին, թէ՛ հարեածել անգլիացուն և թէ «ամուր» կառչել կոմագապարական հիմունքներին: Սակայն, սկներև է, որ ոչ թէ բուլեիկները քաղաքականութիւնն է փոխւած, այլ միայն գնահատակամը: Մինչ օրս միայն և միայն իրենք բուլեիկներն էին, որ ջրդական պոթկուամները համարում էին աւազակային շարժում. իսկ այժմ ընկերային-տնտեսական ու քաղաքական հիմնաւորումներով գտնում են, որ անկախ Քրդաստան ստեղծելու ձգտումը քաղաքական շատ խոշոր երևոյթ է: Մարդ չգիտէ, բուլեիկները այս նոր մօտեցումը ընդունի որպէս քաղաքարական նահանջ, թէ առաջադիմութիւն:

Ինչ էլ որ լինի, փաստ է, որ բուլեիկեան քաղաքարական առաջադիմութիւնն անգամ իր մէջ կրում է յետադիմական սաղմեր և հիմնովին հակասում լնիւնեան սկզբունքներին: Միայն անսկզբունք ու կեղծաւոր բուլեիկը կարող է յայտարարել, որ ջրդական հարցը՝ թիւրքիայի ներքին խնդիր է, որ ջրդական շարժումը վնասում է թիւրքական «ժողովրդավար» առաջադրումներին, և միայն թիւրքն է, որ կարող է լուծել ջրդական հարցը: Մենք էլ չենք կասկածում, որ թիւրքը ընդունակ է լուծելու մանր ժողովուրդների ապաստարան հարցը, ինչպէս որ լուծեց թիւրքահայաստանի խնդիրը...:

Եթէ բուլեիկները համաձայնում են, որ ջրդական շարժումը ընկերային-քաղաքական հիմնաւորում ունի և ձգտում է ազատագրել աշխատաւոր մէկ ժողովուրդը, ապա թող հետևողական լինեն և քաղաքացիական ջրդութիւն ունենան կրկնելու Լենինի դարձածքը, թէ՛ «ամենայնառաջադիմական հակապիպիտականը այն ընկերավարականն է, որը ազգային ինքնորոշման իրաւունքը կը պաշտպանի տուանց վերջնական անջատման հարց դնելու»: Իսկ դաւաճանական ընթացքը ջրդակելու համար մէջ բերել Անգլիային իր գործակալ դաշնակներին» հետ, դա քաղաքական ու քաղաքարական շանտաժ է:

Պորհրդային քաղաքական տեսողութիւնից չի վրէպում միջազգային քաղաքական սխտուացիայի մէջ տեղի ունեցող նորանոր փոփոխութիւններն ու խմբաւորումները: Ամէն ջրայիփոխում ցոյց տալով Անգլիայի մատը և ձգտելով իր ձեռքին գործիք դարձնել ջրդական հարցը, Ռուսաստանը դրանով ուղղում է թէ՛ զգուշացնել թիւրքիային և թէ՛ թելադրող հանդիսանալ Նոր Արեւելքում:

Մեզ կը բաւէ, արդէն շատ ենք վայելած թէ՛ Անգլիայի և թէ՛ Ռուսաստանի (ինչ դիմակի տակ էլ որ լինի) բարբիները: Շատ իբրտակաւ են անցեալի դասերը՝ նորից ճակատագրական սխախտք գործելու համար: Հէնց այդ է պատճառը, որ այսօրւայ հայ-քրդական ապստապրական պայքարը, իր յոյսը չկապելով որևէ մէկի հետ, ապահին է իր սեփական ուժերին, ձգտելով ինչ գնով էլ լինի ձեռք բերել ճնշւած ազգերի ինքնորոշման արդար իրաւունքը:

Ե Ր Ի Ա Ն Գ Փ Ր Ա Ն Գ Ե Ա Ն

Պարսկաստանի Համադան ջաղաքի մէջ, մարտ 15-ին մեռաւ՝ սանդուղիներէն վար զլրբւելով, ազգային զպրոցի տեսուչ և Հ. Յ. Գաշնակցութեան լաւագոյն մտաւորականներէն՝ Երւանդ Յրանդեան, զոկտոր փիլիսոփայութեան:

Մնած էր, Իպփրիի մէջ, 1878-ին: Միջնակարգ կրթութիւնը կաւարտէ Երեւանի մէջ և կանցնի Պարսկաստանի Սալմաստ զաւառը, իրրե ուսուցիչ (1900—1903): Գպրոցական գրադամներէ զատ, կը ներբի նաև գրական աշխատանքներու, ուսումնասիրելով Պարսկաստանի և պարսկահայութեան կեանքի բազմակողմանի էջերը, որոնց մասին յօդուածներ կը գրէ Թիֆլիսի «Մուրճ» ամսաթերթի («Պատիժները Պարսկաստանում» և այլն) * ուրիշ պարբերականներու մէջ: Ամառայ արձակուրդներուն կայցելէ Մակի, Յոյի, Ուրմիա, Միանդար և այլ շրջաններ, ամենուրեք ուսումնասիրութեան ենթարկելով պարսկահայերու անտեսական, կրթական և ազգային կեանքը:

1903-ին Սալմաստէն կանցնի Թաւրիզ և իրրե ուսուցիչ կը պաշտօնավարէ ամբողջ երկու տարի: Թաւրիզ հաստատուելէ յետոյ, Երւանդը կուսումնասիրէ նաև յայտնելի հայութեան մօտաւոր անցելի կեանքը: Այդ բոլոր ուսումնասիրութեանց արդիւնք կըլլայ իր արժէքաւոր հատորը — «Ատրպատական», որը չարդ միակն է, որ կը պարզէ պարսկական Ատրպատականի բազմացեղ ժողովուրդներու և մասնաւորապէս հայերու մասին արժէքաւոր փաստեր, տեղեկութիւններ, վիճակազրկան թիւեր և այլն:

Իր ուսուցչական պաշտօնավարութեան ընթացքին խնայած համեստ գումարին և «Ատրպատական» գրքի փաճածոման հասոյթին շնորհիւ, կը յաջողի անցնիլ Գերմանիա, ուր համալսարան մտնելով, 1910-ին կաւարտէ Բերլինի համալսարանի պատմա-փիլիսոփայական ճիւղը:

Համալսարանն աւարտելէ յետոյ կանցնի Կովկաս և կը ներբի զպրոցական, հանրային և կուսակցական աշխատանքներու, միժամանակ աշխատակցելով հայ թերթիներու:

Բազուի կուսակցական Արևած օրաթերթին խմբագրութեան մէջ կարևոր դեր կը կատարէր 1917-ին: Այս ջաղաքի հերոսաբարձէն յետոյ (1918թ. օգոստոսեպտ.), երբ սեղի կուսակցութեան Բազուի հայութեան նահանջը դէպի ինչպիսի, Ե. Յրանդեանն ալ կը հեռանայ և կը հաստատուի Թեհրան, իրրե ուսուցիչ ազգային

Հայկական զպրոցի: 1919-ին Թեհրանի մէջ հրատարակեց «Հայ Միտք». Վանի Իմաստասէր Խրիմնան Հայրիկ» վերնագրով գիրք մը, որուն երկրորդ մասը լոյս տեսաւ 1927-ին Գահրէի մէջ, «Յուսարբրի Մատենաշար»-ի հրատարակութեամբ:

Եր. Յրանդեանը 1919-ի վերջերը Պարսկաստանից անցաւ Հայաստան և մեծ եռանդով ներկայացաւ հանրապետական հայրենիքի վերածնութեան աշխատանքներուն:

Փետրարեան համաժողովրդական մեծ ապստամբութեան օրերուն (1921) Երւանդը, իր հասարակ զինուոր մտած էր Վասպուրականի Գումարտակ »-ին մէջ: Ապստամբութենէն յետոյ, երբ Հայաստանէն շուրջ 9000 տարագրութիւն անցաւ Պարսկաստան, Երւանդն ալ անոնց հետ հասաւ Թաւրիզ, ուր այլ թոճուորակ օրերուն, ժամանակ ու արամադրութիւն զատա գրական աշխատանքներ և դասախօսութիւններ կատարելու:

1921 — 1924-ին ուսուցչական պաշտօններ վարեց Դազվինի և Սուլթանապատի ազգային զպրոցներու մէջ, իսկ 1925-ին անցաւ Համադան՝ իրրե ազգային զպրոցի տեսուչ և յոչ պաշտօնը վարեց մինչև իր մահը:

Առանձին հրատարակութեամբ լոյս տեսած աշխատանքներն են. —

- 1) «Ատրպատական», 2) «Պատմափիլիսոփայութիւն», 3) «Միտք» (Գիտական և փիլիսոփայական ժողովածու), 4) «Ենչէ և նրա փիլիսոփայութիւնը», 5) «Պատմիկի փիլիսոփան» (Շուպենհուտեր և նրա փիլիսոփայութիւնը), 6) «Միլայոյակին որպէս փիլիսոփայ-սոցիոլոգ», 7) Նոյնը գերեզմաններէն լեզուով, 8) «Յունական փիլիսոփայութիւն», 9) «Գերմանիայից-Հայերէն Բատարան», 10) «Քրիստոսփոր Միլայոյի և նրա աշխարհայեցողքը», 11) «Հասարակագիտական էսթիլներ» Հ. Յ. Գաշնակցութեան սոցիալփիլիսոփայութեան հիմնաւորման շուրջ», 12) «Հայ Միտքը. Թրքիական Հայրիկ. Վանի Իմաստասէր և բարոյախօս», 13) Նոյնի երկրորդ մասը: Իսկ վերջին գրածներն են՝ — «Ե՛նչ է Պրոգրես» յօդուածաշարը «Յուսարբրի»-ի մէջ և «Ի՛նչ է Վերջակ»-ի մէջ:

Թողած է նաև գրական անտիպ աշխատանքներ: Կը թողու կին մը և երկու զաւակներ:

Ա. Հ.



Եր. Յրանդեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անկախութեան Տասնամեակը (*Խմբագրական*) . . . 130
 Մայիս 28-ը (*Ա. Ջամալեան*) 132
 Հայկական Թերմոպիլէ (*Հ. Կոստեան*) 136
 Անկախութեան սերունդը (*Կ. Սասունի*) 140
 Մայիս 28-ը Հայաստանում (*Ա.*) 143

Առաջին քայլեր 145
 Բաֆֆի (*Ե. Ֆրանգեան*) 149
 Թիւրքիայ շուրջ 154
 Քրդական շարժումը խորիք. ակնոցով (*Աշոտ*) 157
 Ե. Ֆրանգեան (*Հ. Ա.*) 159



Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Դրօշակ, *ամսագիր, Փարիզ, տարեկան 25 Ֆր. կամ 2 դոլար.*
 Հայրենիք, *օրաթերթ, Բոստոն, տարեկան 6 դոլ.*
 Յուսարեր, *օրաթերթ, Գահերէ, տարեկան 150 Լգ. դահեկան.*
 Արաբս, *օրաթերթ, Սոֆիա, տարեկան 550 Լեա.*
 Հայրենիք, *ամսագիր, Բոստոն, տարեկան 5 դոլ.*
 Նոր-կեանք, *շաբաթաթերթ, Թեհրան, տարեկան 2 թուման.*
 Ասպարէզ, *շաբաթաթերթ, Ֆրէզնօ, տարեկան 1,50 դոլար.*

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԴՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի, Յունաստանի, Բուլգարիայի, Ռումանիայի, Երուզական այլ երկիրների, Սիրիայի և Պարսկական Ատրպատականի համար՝ 25 ֆրանս. ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պաղեստինի, Միջագետքի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած բոլոր երկիրների համար՝ երկու դոլար:

Բաժանորդագրելու կարելի է իւրաքանչիւր ամսի սկզբից:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Ս. ՎՐԱՑԵԱՆԻ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ »

550 մեծադիր էջ՝ զարդարած մօտ 200 նկարներով և հայկական *Եռադոյն* գունաւոր դրօշակով.

Հրատարակուք իւր

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿ.ԿԵՆՏ. ԿՈՄ. - Ի

Գինն է 2 դոլար.

Ստանալու համար դիմել՝

1. Hairenik Press,
 13-15 Shawmut St.
 Boston Mass.
 (U.S.A.).

2. Mlle S. Agopian,
 5, rue des Gobelins
 Paris (XIII)
 France.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 Ֆր. 50 սանս.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի Հասցէն՝

M^{me} S. AGOPIAN.
 5, rue des Gobelins, 5. Paris (13^e)

